

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱՋՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ



**ԱԶԳԱՅԻՆ ՊՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄՔ**



Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողեզրայի նիստը՝
«Գիտություն – քանակ կապի հետազա ամրապնդման և ռազմաարդյունաբերական համալիրի
զարգացման խնդիրները» թեմայով

Երևան, 2007 թ. սեպտեմբերի 4



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քորանջյան Հ. Ա.

քաղաքական գիտությունների
դրկուոր (Ո-Դ), Ռազմական
գիտությունների ռուսաստանյան
ակադեմիայի խևական անդամ,

հակաահարեկության գծով
փորձագետ (ԱՄՆ)
(նախագահ)

Չիլինգարյան Գ. Ա.

(գլխավոր խմբագիր)

Աղաբեկյան Ա. Ա.

Այդինյան Ռ. Ա.

Ապրիամով Է. Ա.

Գասպարյան Վ. Ա.

Գասպարյան Տ. Շ.

Խախանյան Մ. Ռ.

Խորայելյան Վ. Ա.

Խաչատրով Յ. Գ.

Կարապետյան Մ. Ե.

Մարգարյան Վ. Հ.

(գլխ. խմբ. տեղակա)

Մարտիրոսյան Ս. Ս.

Մարտիրոսով Լ. Ա.

Մելքոնյան Գ. Գ.

Մելքոնյան Մ. Գ.

Միքարեկյան Ա. Ռ.

Նազարյան Ա. Ա.

Շահյան Պ. Ա.

Սարկիսյան Մ. Ս.

Սերբակյան Ս. Գ.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Փարսադանյան Ա. Ա.

Քոչունց Կ. Գ.

Օհանյան Ս. Ս.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն

ՀՀ Պաշտպանության նախարար Մեյրան

Օհանյանի բացման խոսքը 8

ՈԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱԼԻՐ

Յու. Գ. Խաչատրովը, Պ. Ա. Շահյան,
Կ. Ա. Դադալյան, Ռազմական արդյունաբերությունը և նրա վերակազմավորման խնդիրները 11

Ո. Վ. Արդյան, Յու. Գ. Մոսիկյան, Հ. Ա.
Մելիքյան, Վ. Ռ. Բարսեղյան, Լ. Գ. Մելքոնյան, ՀՀ ԶՈՒ-ի կառավարման ավտոմատացված համակարգի նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի համառոտնկարությունը 36

Զ. Մ. Գարիբելյան, Ժ. Հ. Ամիրիսանյան,
Հ. Հ. Կուսանյան, Ո. Հ. Թումանյան, Ա. Ա.
Գյուրջյան, ՀՀ ԶՈՒ-ի սպառագինության մեջ գտնվող գրահատեխնիկայի արդիականացման ուղիները 45

Գ. Թ. Հովհաննիսյան, Երևանի մաքենատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքների հիմնական ուղղությունները և զարգացման հեռանկարները 58

Կ. Ա. Դադալյան, Ա. Պ. Պետրոսյան,
Ռազմիութեխնիկական միջոցների արդիականացման գործընթացը և զարգացման ուղղությունները 66

<i>Պ. Ա. Շաղյան, Ա. Հ. Վարդանյան, Գ. Ս. Գևորգյան, Տ. Կ. Դադալյան,</i>	
Օպտիկական և օպտիկակառնային համակարգերը պաշտպանական ոլորտում և դրանց զարգացման հիմնական ուղղությունները	72
<i>Մ. Գ. Պեղրոսյան, Նանոտեխնոլոգիաները և դրանց հեռանկարները</i>	80

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

<i>Լ. Լ. ՈՒՂՈՒԱՐԺՅԱՆ, 1991 թ. օգոստոսյան խոռվությունը ԽՍՀՄ-ում և Հայաստանի անկախացման գործընթացը</i>	90
--	----

ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

<i>Հ. Ժ. Հովհաննիսյան, 1920 թ. հայ-բուրքական պատերազմի չպարտ- ված ճակատը</i>	103
--	-----

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

<i>Ն. Ս. Մկրտչյան, Լ. Հ. Պապիկյան, Դ. Ս. Չիլինգարյան, Համարի բառարան</i>	115
--	-----

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

<i>Ո. Վ. Աղուղումյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,</i>
<i>Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,</i>
<i>Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,</i>
<i>Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,</i>
<i>Ո. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,</i>
<i>Ա. Հ. Թոշունյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,</i>
<i>Գ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,</i>
<i>Պ. Մ. Հերունի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,</i>
<i>Ա. Հ. Մանրաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,</i>
<i>Ե. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,</i>
<i>Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,</i>
<i>Կ. Մ. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,</i>
<i>Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,</i>
<i>Վ. Մ. Մարգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,</i>
<i>Հ. Մ. Միսալյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր</i>

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 1(55). 2008

Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), Действительный член
Российской Академии военных наук, научный эксперт
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (главный редактор),
Агабекян А. А., *Айдинян Р. А.,* *Апричев Э. А.,* *Гаспарян В. С.,* *Гаспарян Т. Ш.,*
Исаханян М. Р., *Исаелян В. С.,* *Карапетян М. Н.,* *Кочунц К. Г.,*
Маргарян В. Г. (заместитель главного редактора), *Мартirosов Л. А.,* *Мартirosян С. С.,*
Мелконян Г. Г., *Мелконян М. Г.,* *Мирзабекян А. Р.,* *Назарян А. С.,*
Оганян С. М., *Парсаданян А. М.,* *Саркисян М. С.,* *Седракян С. Г.,*
Тер-Григорьянц Н. Г., *Хачатуров Ю. Г.,* *Шадян П. А.*

СОДЕРЖАНИЕ

Вступительное слово Министра обороны РА Сейрана
Оганяна 8

ВОЕННО-ПРОМЫШЛЕННЫЙ КОМПЛЕКС

<i>Ю. Г. Хачатуров, П. А. Шадян, К. А. Дадалян.</i> Военная промышленность и задачи ее реорганизации	11 (33)*
<i>Р. В. Атоян, Ю. Г. Мосикян, Г. А. Меликян, В. Р. Барсегян, Л. Г. Мелкумян.</i> Значение, структура и краткое описание работы автоматизированной системы управления ВС РА	36 (42)
<i>З. М. Габриелян, Ж. А. Амирханян, О. Г. Костанян, Р. Г. Туманян, А. А. Гюргян.</i> Пути модернизации бронетанковой техники ВС РА	45 (56)
<i>Г. Т. Оганесян.</i> Основные направления работ и перспективы развития Ереванского научно-исследовательского института математических машин	58 (64)
<i>К. А. Дадалян, А. П. Петросян.</i> Процесс модернизации радиотехнических средств и направления их развития	66 (71)
<i>П. А. Шадян, А. О. Варданян, Г. С. Геворкян, Т. К. Дадалян.</i> Оптические и оптоэлектронные системы в оборонной сфере и основные направления их развития	72 (78)
<i>С. Г. Петросян.</i> Нанотехнологии и их перспективы	80 (89)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ИСТОРИЯ

- Л. Л. Улубабян. Августовский Путч 1991 года в СССР и процесс суверенизации Армении* 90 (101)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

- А. Ж. Оганесян. Непобежденный фронт армяно-турецкой войны 1920 г.* 103 (114)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

- Н. С. Мкртчян, Л. Г. Папикян, Д. С. Чилингарян. Словарь номера* 115 (116)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, доцент;

Н. У. Аракелян, академик НАН РА;

В. М. Арутюнян, академик НАН РА;

Г. Е. Багдасарян, академик НАН РА;

Г. А. Геворкян, академик НАН РА;

Р. Г. Геворкян, доктор геологических наук, профессор;

П. М. Геруни, академик НАН РА;

А. А. Манташян, академик НАН РА;

Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;

М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;

К. С. Мосоян, доктор технических наук, профессор;

В. С. Саркисян, академик НАН РА;

А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;

А. А. Трчунян, член-корреспондент НАН РА;

Ю. С. Чилингарян, академик НАН РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

DEFENSE-ACADEMIC QUARTERLY,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

Nº 1(55). 2008
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Fellow Member,
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),
Chilingaryan D. S. (Editor-in-Chief), *Aghabekyan A. A.*, *Apreamov E. A.*,
Gasparyan T. Sh., *Gasparyan V. S.*, *Idnyan R. A.*, *Isakhanyan M. R.*,
Israelyan V. S., *Karapetyan M. N.*, *Khachaturov Y. G.*, *Kotchunts K. G.*,
Margaryan V. H. (Deputy Editor-in-Chief), *Martirossyan S. S.*, *Martirossov L. A.*,
Melkonyan G. G., *Melkonyan M. G.*, *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*,
Ohanyan S. M., *Parsadanyan A. M.*, *Sarkissyan M. S.*, *Sedrakyan S. G.*,
Shadyan P. A., *Ter-Grigoryants N. G.*

CONTENTS

Introduction by the RA Defense Minister Seyran Ohanyan 8

MILITARY-INDUSTRIAL COMPLEX

<i>Y. G. Khachaturov, P. A. Shadyan, K. A. Dadalyan.</i> The Military Industry and the tasks of its reorganization	11 (34)*
<i>R. V. Atoyan, Y. G. Mossikyan, H. A. Melikyan, V. R. Barseghyan, L. G. Melkumyan.</i> The significance, structure and concise description of functioning of the Automated Control System of the RA Armed Forces	36 (43)
<i>Z. M. Gabrielyan, Zh. H. Amirkhanyan, H. H. Kostanyan, R. H. Tumanyan, A. A. Gyurdjyan.</i> The ways to modernize the armoured hardware of the RA Armed Forces	45 (57)
<i>G. T. Hovhannissyan.</i> The principal directions of activities and development perspectives of the Yerevan Computer Research and Development Institute	58 (65)
<i>K. A. Dadalyan, A. P. Petrossyan.</i> The process of modernization of radio equipments and directions of their development	66 (71)
<i>P. A. Shadyan, A. H. Vardanyan, G. S. Gevorkyan, T. K. Dadalyan.</i> Optical and optoelectronic systems in the defense sphere and principal directions of their development	72 (79)
<i>S. G. Petrossyan.</i> Nanotechnologies and their perspectives	80 (89)

* Numbers in brackets mean the page of the text in English.

HISTORY

- L. L. Ulubabyan.* The August Putsch of 1991 in the USSR and the process of sovereignty acquisition in Armenia 90 (102)

MILITARY HISTORY

- H. Zh. Hovhannissyan.* The undefeated front of the Armenian-Turkish war of 1920 103 (114)

MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY

- N. S. Mkrtchian, L. H. Papikian, D. S. Chilingarian.* Volume dictionary 115 (118)

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumtsian,* Candidate of Psychological Sciences, Docent;
 N. H. Arakelian, Full Member, NAS RA;
 G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
 Y. S. Chilingarian, Full Member, NAS RA;
 H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
R. G. Gevorkian, Doctor of Geological Sciences, Professor;
 V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;
 P. M. Herouni, Full Member, NAS RA;
 A. H. Mantashian, Full Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;
 V. S. Sargsian, Full Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor;
 A. H. Trchounian, Fellow Correspondent, NAS RA

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ուսումավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ուսումագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ուսերեն և անգերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակրչեն օգտագործված առավել կարևոր առյուղները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիթյան և գաղտնիության պահպանցների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիմումները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածների պետք է վերծանված լինեն օգտագործվող ուսումանասնագիտական հապալումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաբնույթուն անցնելուց հետո:

Նյութերի ճամամբ կամ ամբողջությամբ արտասպամը բույսարվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic quarterly «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀՀ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱԿՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ



ՀՀ նախկին Նախագահ Ռ. Քոչարյանի հրամանագրերով 2007 թ. փետրվարի 7-ին հաստատված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը և 2007 թ. դեկտեմբերի 25-ին հաստատված ՀՀ Ռազմական դղկտրինը մեր գործունեությունը նպատակառություն են քարեփոխումների միջոցով այնպիսի Զինված ուժերի ստեղծմանը, որոնք երաշխավորված կերպով ապահովեն երկրի անվտանգ զարգացումը, բնակչության ֆիզիկական գոյությունը, սահմանների անձեռնմխելությունը, ի գորու լինեն զսպելու հակառակորդին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հասցենելու նրան անդառնալի կորուստներ, կարողանան լիարժեք կերպով մասնակցել միջազգային խաղաղարարական օպերացիաներին, ինչը ենթադրում է վիճակութելու այլ պատճենություն այլ պատճենությունների գինված ուժերի ստորաբաժանումների հետ:

ՀՀ անվտանգության, այդ թվում՝ պաշտպանության, համակարգում ռազմավարական քարեփոխումների գործընթացն արդեն մեկնարկել է:

ՈՒժեղ բանակ ունենալու համար պետք է ունենալ նաև նրան սպասարկող համապատասխան ենթակառուցվածքներ, մասնավորապես՝ ռազմաարդյունաբերություն: Այս ոլորտի զարգացումը հատկապես կարևոր է այն առումով, որ հնարավորություն է տալիս սպառազինության և ռազմական տեխնիկայի նորոգման, արդիականացման, նոր նմուշների մշակման աշխատանքներում հնարավորինս նվազեցնելու կախվածությունն այլ երկրների մատակարարումներից՝ միևնույն ժամանակ խանելով քաղաքացիական նախանշանակման հայրենական արտադրանքի քողարկումը: Այս ոլորտում հեռանկարային ծրագրերի մշակման ժամանակ պետք է հաշվի առնել նաև հնարավոր հակառակորդի՝ Ադրենանի կողմից ռազմաարդյունաբերության և գիտության բնագավառում ծավալվող զարգացումները:

Յուրաքանչյուր սպա իր ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ այս կամ այն չափով առնչվում է զենքի, սպառազինության, ռազմական տեխնիկայի հետ: ՈՒստի կարևոր եմ համարում, որպեսզի նրանք լավ պատկերացնեն ռազմաարդյունաբերության ոլորտում մեր կողմից կատարվող աշխատանքը, առայժմ չլուծված խնդիրները, իրենց անելիքը: Այս տեսակետից ողջունում եմ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսում ռազմաարդյունաբերության ապագային առնչվող հիմնախնդիրների քննարկումը: Այս հանգամանքը, որ, ՀՀ ՊՆ 2007 թ. սեպտեմբերի 4-ի կողեզիայի որոշման հաշվառմաք, նյութերի մշակմանը մասնակցել է պաշտպանության նախարարության ռազմաարդյունաբերական վարչությունը, հրապարակումները դարձնում է եւ ավելի առարկայական ու արժեքավոր:

Համոզված եմ, որ տպագրվող նյութերը օգտակար կլինեն ոչ միայն մեր սպայության, այլև այս բնագավառին առնչվող քաղաքացիական մասնագետների համար:

ՈՒՂԱԿԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՀԱՍՏԱԼԻՌ

ВОЕННО-ПРОМЫШЛЕННЫЙ
КОМПЛЕКС

MILITARY-INDUSTRIAL
COMPLEX

ՈԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՅՈՒ. Գ. ԽԱԶԱՏՈՒՐՈՎ, գիներալ-գնդապետ,

ՀՀ ԶՈՒ-ի ԳԾ պետ-պաշտպանության նախարարի առաջին լրեղակալ,

Պ. Ա. ՇԱԴՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերական

վարչության պետ, Կ. Ա. ԴԱՎԱԼՅԱՆ, գնդապետ,

ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերական վարչության պետի լրեղակալ

Մշտապես բարձր մարտական պատրաստության վիճակում գտնվող զինված ուժեր ունենալու համար անհրաժեշտ են ժամանակակից մարտունակ սպառազինություն և ռազմական տեխնիկա (ՍՈ-Տ), որոնց պահպանման ու արդիականացման համար պահանջվում են մեծ ջանքեր, նյութական ու ֆինանսական միջոցներ: Այդ նպատակին է ծառայում ռազմական արդյունաբերությունը, որի գործունեությունն ուղղված է իր հնարավորությունների սահմաններում ժամանակակից ու բավարար միջոցներով և համակարգերով զինված ուժերի ապահովմանը: Ռազմական արդյունաբերությունը անընդհատ զարգացող տեխնիկատնտեսական ու ծրագրային միջոցների մի համալիր է, որի վերակազմավորումն ու կատարելազործումը անմիջականորեն կապված են արդեն ծնավորված ու գործող տնտեսական այն ենթակառուցվածքի հետ, որը տվյալ ժամանակահատվածում ապահովում է պաշտպանական կառույցների անխափան գործունեությունը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ի դեմս ռազմարդյունաբերական վարչության, միավորում և ուղղորդում է ռազմարդյունաբերական ոլորտում ընթացող աշխատանքները, համակարգում այս բնագավառի ձեռնարկությունների գործունեությունը ՍՈ-Տ նորոգման, սերիական արտադրության, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-ներ) կատարման ուղղությամբ, ինչպես նաև իրականացնելու ՀՀ պաշտպանության նախարարությանը վերապահված հրավորությունների պետական բառենթումների կառավարման իրավունքը և գործունեության կանոնակարգումը:

Գաղտնիք չէ, որ ՀՀ բանակն իր կազմավորման փուլում հիմնականում զինված էր ԽԱՀՄ-ում մշակված և արտադրված զինատեսակներով, որոնք աստիճանական թարմացման հետ մեկտեղ պահանջում էին որշակի ծախսեր շահագործման, պահպանման, սպասարկման, նորոգման ու արդիականացման համար: ՈԽստի անհրաժեշտ էր ՍՈ-Տ հիմնական նորոգում՝ որոշ հանգույցների արդիականացմամբ, աշխատանքների ռեսուրսի վերականգնմամբ, մարտավարատեխնիկական բնութագրերի բարելավմամբ և աստիճանական վերազինմամբ նոր, այդ թվում նաև սեփական արտադրության, նմուշներով:

Այդ գործընթացում երբեմն խնդիրներ էին առաջանում՝ կապված շահագործման, սպասարկման և նորոգման համար անհրաժեշտ պահետամասերի ձեռքբերման կամ դրանց արտադրության կազմակերպման համար կոնստրուկտորական, տեխնոլոգիական և նորմատիվային փաստաթղթեր չլինելու հետ:

Նշված խնդիրների և պետության անվտանգությունը երաշխավորող ժամանա-

կակից գինված ուժեր ունենալու անհրաժեշտության հաշվառմամբ՝ ուղղամարդյունաբերության առաջին 15 տարիների հիմնական գործունեությունը նպատակառուղղվեց համապատասխան տեխնիկական, տնտեսական ու նորմատիվ-իրավական հիմքերի ստեղծմանը, գերակա ուղղությունների որոշմանը, ոլորտի ձեռնարկությունների կայուն գործունեության ապահովմանը և զարգացմանը: Այս տարիները կարելի է զնահատել որպես ուղղամարդյունաբերական համայնքի կայացման տարիներ: Սկզբնավորվեցին և կանոնակարգվեցին համայնքի ծրագրված գործունեությունը և զարգացումը, սկսվեց բարեփոխումների իրականացման փուլը:

Ուղղամարդյունաբերական ոլորտում հաջողությունների հիմնական և ամենակարևոր գրավականը կազմակերպություններին պատվիրված պայմանագրային աշխատանքների դիմաց վճարումների ժամանակին կատարումն էր, ինչը անշեղորեն ապահովվեց վերջին ութ տարիներին: Դրանով մասնակիորեն կանխվեց կազմակերպություններից բարձր որակավորմամբ կաղուերի արտահոսքը և ոլորտի ձեռնարկություններին հնարավորություն տրվեց պահպանելու իրենց գիտաարտադրական կարողությունները:

ՀՀ Զինված ուժերի ուղղամարդտեխնիկական ապահովման համար պետական պատվերով պահպանվեցին ԳՀՓԿԱ-ները և ՍՈ-Տ ու ուղղամարդտեխնիկական միջոցների (Ո-ՏՍ), առանձին համակարգերի սերիական արտադրությունը: Ցուրաքանչյուր տարի ավելի քան 10 %-ի չափով աճում են ֆինանսական հատկացումները, որոնք ամբողջովին իրացվում են հանրապետության ներսում: Տարեցտարի ընդդաշնությունը է ներհանրապետական գնումներով նախատեսվող արտադրանքի տեսականին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո սերիական բողարկման ապրանքների որոշակի տեսականին, ի տարբերություն նախորդ տարիների մեկ աղյուրից գննան եղանակից, արտադրվում է մրցութային եղանակով: Այս գործընթացը շարունակում է ծավալվել և 2008 թ. կներառի նաև նորոգման ու ԳՀՓԿ աշխատանքների կատարումը:

Պետական պաշտպանական պատվերի հաջող իրականացմանը զուգահեռ կատարվել է համայնքի կազմակերպությունների միջև աշխատանքների նպատակային բաշխում, ինչը հնարավորություն է տալիս պահպանելու հանրապետությունում ձևափորություն ուղղամարդյունաբերական ոլորտի բազային ձեռնարկությունների արտադրական հզորությունները և գիտական ներուժը:

Ուղղամարդյունաբերական ոլորտի արդյունավետ գործունեության համար կարևոր է եղել նաև կաղըերի պահպանան և բնականու սերնդափոխության ապահովման հարցը: Ուստի և միջոցառումներ են իրականացվել ուղղամարդական արդյունաբերությունում աշխատողների սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Ներկայում ոլորտը քնակոխում է վերակազմավորման և բարեփոխումների փուլ, որի նպատակն է ավելի արդյունավետ դարձնել ֆինանսական միջոցների օգտագործումը և ոլորտի կառավարման համակարգը:

Ուազմական արդյունաբերության գործունեությունը ծավալվում է հետևյալ հիմնական ուղղություններով:

1. ՍՈ-Տ նորոգում և մարտունակ վիճակի պահպանում

ՀՀ Զինված ուժերում օգտագործվող սպառազինության ու ռազմական տեխնիկայի նորոգումը կատարվում է դրանց մարտունակության ու շահագործման ռեսուրսների վերականգնման նպատակով:



ԲՈ-Դ-2 զրահապատ հետախուզադետքային մեքենայի վերանորոգման աշխատանքներ

Այսօր ՍՈ-Տ ամբողջ տեսականին նորոգվում և վերականգնվում է ՀՀ կազմակերպություններում, և դա մեր նվաճումներից է: Զնավորվել է հիմնական նորոգում կատարող բազային ձեռնարկությունների համալիրը (հիմնականում 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով), ընդամենը դրանք մասնագիտացած են ըստ ՍՈ-Տ տեսակների: Դրանց աշխատանքը ներառում է՝

- գործարանային և զրամասային նորոգումը,
- գործերում եղած ՍՈ-Տ արտագնա տեխնիկական սպասարկումը և մարտական հերթափակության մեջ գտնվող համալիրների նորոգումը,
- նորոգման ընթացքում մասնակի արդիականացումը,
- տեխնիկական սպասարկումը՝ կոնկրետ տեսակի ՍՈ-Տ և զինամքերի կոնսերվացման նպատակով,
- գոյություն ունեցող նորմատիվային և կանոնակարգային փաստաթղթերի փաթեթների ստեղծումը կամ համալրումը՝ ըստ կատարված նորոգումների աշխատանքային փորձի և արդեն մշակված որոշակի փաստաթղթերի,
- պահեստամասերի և համալրող հանգույցների արտադրությունը, գնումը, մուտքային վերահսկումը և նորոգող կազմակերպությունների (ձեռնարկությունների ու զորամասերի) մատակարարումը, կենտրոնացված համակարգի և բազայի հիմնումը՝ նաև պահուստային ֆոնդի ստեղծմամբ:

Նորոգման աշխատանքները կապված էին բարդությունների հետ, քանի որ դեռ ոչ լիովին կայացած շուկայական հարաբերությունների պատճառով առկա էին պահեստամասների սղություն, բարձր գներ, անզամ դրանց որոշ մասի արտադրությունն ընդհանրապես դադարեցված էր: Բնականաբար, ծագել էր մարտունակ վիճակով ՍՈ-Տ պահման օպտիմալ տարրերակների ընտրության հարց: ՈՒստի և այդ ժամանակ ուազմաարդյունաբերության հիմնական խնդիրն էր մարտունակությունը պահպանելու նպատակով ապահովել ՍՈ-Տ տեխնիկական սպասարկումը գործերում, դրանց հիմնական նորոգումն ու աշխատունակության վերականգնումը արդյունաբերական ձեռնարկություններում՝ զուգահեռաբար որոշակի պահեստամասների արտադրության յուրացմամբ:

Այս խնդիրները լուծել են համալիր ծրագրերի մշակմամբ, ընդունի հաշվի են առնվել ուազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների տեխնիկական ու կադրային հնարավորությունները, ՍՈ-Տ զարգացման միտունները, արդի պայմաններում տնտեսական հարաբերությունները, Վերակառուցման գործընթացները, օրենսդրական դաշտում տեղի ունեցող փոփոխությունները, ներքին ու արտաքին կոռուպտացիայի և տնտեսական համագործակցության ձևերը, առկա գիտատեխնիկական ներուժը և այլն: Նորոգման աշխատանքների համակարգումը կատարվել է համաձայն ՀՀ ՊՆ կողմից հաստատված տարեկան և երկարաժամկետ ծրագրերի:

Այժմ հանրապետության ձեռնարկություններում և կազմակերպություններում ՍՈ-Տ և ՌՏՄ նորոգման աշխատանքները կազմակերպվում են ըստ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի համապատասխան հրամանի: Նորոգող ձեռնարկությունների և ՀՀ պաշտպանության նախարարության՝ որպես պատվիրատուի փոխհարաբերությունները կանոնակարգվում են պայմանագրերով՝ ՍՈ-Տ նորոգման միասնական տարեկան պլանի հիման վրա:

Նորոգում կատարող կազմակերպություններում գործում են զինվորական ներկայացուցություններ, որոնք նորոգման բղոր փողերում վերահսկում են կատարվող աշխատանքները և օգտագործվող պահեստամասների որակը, ապահովում են պայմանագրերի կատարման արդյունավետությունը: Կազմակերպություններից նորոգված տեխնիկայի առաքումը կատարվում է զինվորական ներկայացուցությունների անմիջական մասնակցությամբ, պատրաստի արտադրանքի մասին նրանց կողմից տրվող հավաստագրերով:

Անցած տարիներին կատարված նորոգումային աշխատանքների փորձը, արդեն մշակված փաստաթղթերի առկայությունը ձեռնարկություններին հնարավորություն են տվել ստեղծելու սեփական նորմատիվ-կանոնակարգային, կոնստրուկտորական և տեխնոլոգիական փաստաթղթեր, այդ թվում՝ որոշակիացվել են նորոգման աշխատանքները, դրանց ծավալները և գները, ծավալի և նաև գործարանային ու գորամասային նորոգումների տարրերակման նորմեր: Վճարապահանջի գործող կարգը հնարավորություն է տալիս վերահսկելու վերականգնված ՍՈ-Տ երաշխավորված ռեսուրսը, շահագործման ժամկետները, կատարելու համապատասխան եզրահանգումներ և արդյունքներն օգտագործելու նորոգման որակը բարձրացնելու համար:

Հատուկ պահանջների են ներկայացվում նորոգման ժամանակ օգտագործվող պահեստամասերին և համալրող հանգույցներին: Ձեռք բերելուց կամ ՍՈ-Տ-ում տեղադրելուց առաջ դրանք ստուգվում են, անհրաժեշտության դեպքում՝ նաև փորձարկվում: Նորոգման արդյունավետության ապահովման և պայմանագրային ժամկետների երաշխավորված պահպանման նպատակով աշխատանքներ են տարվել պահեստամասերի ծեռքբերման ադրյուների, որակյալ արտադրանք բողարկողների ընտրության և երկարաժամկետ առաքման պայմանագրերի կնքման ուղղությամբ:

Նորոգման աշխատանքների ոչ պակաս կարևոր փուլ են նորոգված ՍՈ-Տ ստենդային փորձարկումները, որոնց ժամանակ հայտնաբերվում և վերացվում են թարնված անսարքությունները, կատարվում է օպտիմալ աշխատանքային բանելակարգերի կարգավորում: Արդիական ստենդային սարքավորանքի ու ժամանակակից շափիչ-ստուգիչ գործիքների հետևողական ներդրումը և ծեռնարկությունների տեխնիկական վերազինումը նորոգման աշխատանքների որակը բարձրացնելու առաջնային ուղիներից են:

Նորոգում կատարող կազմակերպությունների կողմից աշխատանքներ են տարվել կոնստրուկտորական փաստաթուրերի, փորձարկումների ծրագրերի մշակման ուղղությամբ, յուրացվել են տեխնոլոգիական պրոցեսներ, որոնք հնարավորություն են տալիս կատարելու բարդ համակարգերի նորոգում, կազմակերպելու գործարանային և փորձադաշտային փորձարկումներ:

Հանրապետության ծեռնարկություններում ՍՈ-Տ նորոգման գործընթացի յուրացումից հետո նորոգման ու տեխնիկական սպասարկման աշխատանքներ կազմակերպվեցին նաև գործերում: Կազմակերպություններում ձևափորվել ու գործում են նորոգման և տեխնիկական սպասարկման արտագնա խմբեր, որոնք համալրված են շարժական արհեստանոցներով և համապատասխան տեխնիկական սարքավորանքով: Արտագնա խմբերի գործունեությունը կազմակերպված է այն մակարդակով, որ ծայրահեղ դեպքերում նրանք կարող են աշխատանքներ կատարել նաև անմիջականորեն մարտական գործողությունների շրջաններում՝ շատ կարճ ժամկետներում վերականգնելով ՍՈ-Տ մարտունակությունն ու շարք վերաբարձնելով այն: Արտագնա խմբերն սպասարկում են ՍՈ-Տ գրեթե ամբողջ տեսականին՝ սկսած հրաձգային գեներերից ո գրահատեսնիկայից մինչև բարդ ռադիոտեխնիկական ու օպտիկակելեկտրոնային համալիրները: Զեռնարկված միջոցները նաև հնարավորություն են տալիս նորոգումային աշխատանքներին մասնակից դարձնելու շահագործող անձնակազմին, ինչի շնորհիվ նրանք յուրացնում են իրենց վստահված տեխնիկական միջու մարտական վիճակում պահելու նրբությունները և կարճ ժամանակում ինքնուրույն վերացնելու եղած անսարքությունները: Սա առանձնահատուկ դպրոց է շահագործող անձնակազմի տեխնիկական և մասնագիտական գիտելիքները բարձրացնելու գործում:

Աշխատանքների որակն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով նորոգող կազմակերպություններում կիրավում են վճարման ժամավարձային և գործարքային տարրերակները, գործում են դրամական խրախուսման զանազան եղանակներ, նորոգման աշխատանքներում, բացի հիմնական աշխատողներից,

անհրաժեշտության դեպքում ընդգրկվում են նաև ժամանակավոր աշխատողներ:

Նորոգում կատարող ձեռնարկությունները բաժանված են ըստ հետևյալ ուղղությունների.

– հրաձգային գենքերի պահեստամասերի արտադրություն և նորոգում,

– հրթիռահրետանային համակարգերի պահեստամասերի արտադրություն և նորոգում,

– զրահատեխնիկայի, նրա շարժիչների և ազրեգատների նորոգում,

– ինժեներական տեխնիկայի նորոգում,

– ավտոմորիային տեխնիկայի, նրա շարժիչների և ազրեգատների նորոգում,

– հակառակային պաշտպանության համալիրների նորոգում՝ բաղկացուցիչ համակարգերի արդիականացմամբ,

– հատուկ նախանշանակնան ռադիոտեխնիկական և օպտիկաէլեկտրոնային համակարգերի նորոգում՝ բաղկացուցիչ համակարգերի արդիականացմամբ,

– օպտիկական և օպտիկաէլեկտրոնային սարքերի նորոգում,

– ՍՈ-Տ և զինամքերի տեխնիկական սպասարկում և կոնսերվացում:

Արտադրությունից հանված հանգույցների և պահեստամասերի փոխարինման նպատակով կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները հիմք դարձան որոշակի տեսակների ՍՈ-Տ արդիականացման համար: Այդ աշխատանքները հնարավորություն տվեցին վերականգնելու հատուկ համալիրների աշխատունակությունը և երկարածգելու դրանց ծառայության ժամկետը, բարելավելու մարտավարատեխնիկական բնութագրերը:

Ներկայում նորոգման աշխատանքները կատարվում են արդիականացված ժամանակակից հանգույցների և բաղկացուցիչ համակարգերի կիրառմամբ: Արդիականացումն ընթանում է մի քանի նպատակային ուղղություններով:

– նորոգմանը զուգընթաց հին տեխնիկական միջոցների արդեն արտադրությունից հանված հանգույցների և պահեստամասերի փոխարինում նորերով՝ ՍՈ-Տ ծառայության ժամկետը երկարածգելու նպատակով,

– ՍՈ-Տ կիրառման արդյունավետության մեծացում՝ ժամանակակից տեղային պատերազմների ու մարտական գործողությունների փորձի և մարտավարատեխնիկական բնութագրերի բարելավման անհրաժեշտության հաշվառմամբ:

Արդիականացումը կրում է շարունակական բնույթ, նպատակառողջված է ՍՈ-Տ-ն նոր, ժամանակակից բաղադրատարրային բազայով հագեցմանը և միշտ ուղեկցվում է ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնմամբ, շահագործման և սպասարկման պայմանների պարզեցմամբ, ինչպես նաև հուսալիության մեծացմամբ, ինչը հանգեցնում է նաև համապատասխան ծախսերի կրճատման: Արդիականացման աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվում նաև տեխնիկատնտեսական արդյունավետությանը:

Սակայն պեսք է նշել, որ ուղմաարդյունաբերական համալիրի կազմակերպություններում ՍՈ-Տ նորոգման պատվերները որակով և առավել արդյունավետ կատարելու գործում առկա են որոշակի խնդիրներ, որոնցից են.

—ստենդային սարքավորանքի և չափիչ-ստուգիչ գործիքների քանակական աճ-բավարարությունը,

—ձեռնարկությունների արտադրական տեղամասերում հատկապես հատուկ տեխնոլոգիական սարքավորանքի պակասությունը,

—բարձրորակ պահեստամասերի պակասը և որակը հավաստող ուղեկից փաս-տարդիք չինելը, ինչը երբեմն հանգեցնում է նորոգման աշխատանքների ընդհատ-մանը, արտադրողի երաշխիքային պարտավորությունների թերի կատարմանը,

—որակյալ մասնագետների և բանվորների ցածր աշխատավարձերը, ինչը հան-գեցնում է կադրերի հոսունությանը:

Արդի պայմաններում այս խնդիրները հնարավոր կինի լուծել, եթե կատարվի տնտեսական հարաբերությունների վերակազմավորում, կիրառվեն ներքին և արտա-քին կոռապերացիայի ու տնտեսական համագործակցության նոր ձևեր, իրականացվի հեռանկարային կադրային քաղաքականություն: Դրա համար, մեր կարծիքով, ան-հրաժեշտ է՝

—հետազոտել և վերլուծել ոլորտի ձեռնարկությունների գործունեությունը, մշա-կել և իրականացնել ՀՀ ձեռնարկությունների միջև կապերի ամրապնդման ու փոխ-շահավետ համագործակցության ծրագրեր,

—ստեղծել նորոգման համար անհրաժեշտ կենտրոնացված նյութատեխնիկա-կան պաշարներ, համադասել դրանց հոսքերը, ապահովել նյութերի, պահեստամա-սերի և բաղադրատարրերի երաշխավորված մատակարարությունները,

—աշխատանքներ տանել ոլորտը երիտասարդ մասնագետներով համալրելու ուղղությամբ, կազմակերպել բարձրագույն ուսումնական հաստատությունների և ուսումնական արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների սերտ համագործակ-ցություն՝ ապահովելով այդ ձեռնարկություններում երիտասարդ մասնագետների պրակտիկան ու հետագա աշխատանքային գործունեությունը,

—ուսումնասիրել և վերլուծել ոլորտի ձեռնարկությունների իրական արտադրա-կան կարողությունները, մշակել դրանց տեխնիկական վերազինման ծրագրեր, հատ-կայիս՝ գերակա ուղղություններով,

—ձեռնարկությունների հետ համատեղ պլանավորել աշխատանքային, ինժենե-րական, գիտական ու վարչական կարգերի պատրաստումը, կատարելագործել ձեռ-նարկությունների գործունեության պլանավորման համակարգը,

—մշակել մասնագիտական ստանդարտներ, ձեռնարկություններում կազմակեր-պել որակավորման բարձրացման տեսական ու գործնական միջոցառումներ,

—գրանցել նորոգում կատարող ձեռնարկությունների կազմը և մշակել համագոր-ծակցության կառավարման համակարգ,

—սահմանել կազմակերպությունների անվճարունակության (սնանկության) մա-սին որոշումների ընդունման առանձնահատկությունները, ուսումնական պատվերներ կատարող կազմակերպություններն ապահովագրել սնանկացումից կամ լուծա-րումից,

—բարենպաստ պայմաններ ստեղծել ձեռնարկությունների միջև կայուն կոռապե-

բացին կապերի հաստատման և նրանց ինտեգրման համար, մշակել ուղղական պատվերների տեղադրման կատարելագործված համակարգ՝ հաշվի առնելով տնտեսական նպատակահարմարությունը,

—մշակել և ձևավորել տնտեսության հարակից ոլորտներին ներկայացվող պահանջները:

2. ՍՈ-Տ արդիականացման ու նոր նմուշների ստեղծման նպատակով կատարվող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ

Ուղղականացման գործում ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության հիմնական ուղղություններից է նոր արտադրատեսակների ստեղծման համար ԳՀՓԿԱ-ների կատարումը:

Արցախյան ազատամարտը և Հայաստանի Հանրապետության անկախացումը այն վճռորոշ գործոններն են, որոնք հիմք հանդիսացան ինչպես ՀՀ պաշտպանության նախարարության, այնպես էլ նորանկախ հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման համար: Մինչ ՀՀ պաշտպանության նախարարության ստեղծումը հանրապետության ձեռնարկությունների (ինչպես պետական, այնպես էլ կոռպերատիվ) և անհատ անձանց կողմից տարերայնորեն աշխատանքներ ծավալվեցին զենք ու զինամթերք ստեղծելու և պատրաստելու ուղղությամբ:

Այս ժամանակահատվածում մեքենաշինական և գործիքաշինական ձեռնարկություններն սկսեցին յուրացնել հանրապետության համար ոչ ավանդական արտադրատեսակների մշակումն ու բողարկումը, ստեղծվեցին զենքի ու զինամթերքի հայրենական առաջին նմուշները: Նորանկախ Հայաստանի Հանրապետության Կառավարությունն ու նրա ռազմաարդյունաբերական հանձնաժողովը ՍՈ-Տ նմուշների մշակման և բողարկման գործընթացը որեցին պետական հիմքերի վկա: Սկսվեց ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկություններում պաշտպանական նախանշանակման արտադրատեսակների մշակման, արտադրական տեխնոլոգիաների ստեղծման և արտադրության նպատակային ֆինանսավորումը, որը կատարվում էր և այժմ էլ կատարվում է պետական պատվերի ձևով: Այդ աշխատանքների ռազմաարդյունաբերական սպասարկումը՝ մարտավարատեխնիկական առաջադրանքների մշակումը, ելակետային տվյալներով ապահովումը, աշխատանքների բոլոր փուլերում որակի վերահսկումը, փորձարկումների կազմակերպումն ու անցկացումը, հանձնարարվեց ՀՀ պաշտպանության նախարարությանը, ինչով իսկ հիմք դրվեց ՍՈ-Տ արդիականացման և նոր նմուշների ստեղծման ուղղությամբ ԳՀՓԿ աշխատանքների պլանավորմանն ու կատարմանը:

Անցած տարիներին պաշտպանական նախանշանակման հատուկ ԳՀՓԿ աշխատանքների շնորհիվ ստեղծվել են ամուր կապեր մի շաբթ կազմակերպությունների հետ, որոնք սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրում են ռազմական տեխնիկայի մարտավարատեխնիկական բնութագրերը, դրանց բարելավման հնարավորությունները և հետագա զարգացման ուղղությունները, կատարում են նախանական գիտահետազոտական աշխատանքներ:

Այսօր մեր բանակը ներկայանում է որպես մեծ գիտական ներուժ ունեցող կա-

ոույց, որում ծառայում են գիտական աստիճաններ ու տարբեր գիտաարդարական կազմակերպություններում աշխատանքի մեծ փորձ ունեցող սպաներ: Յուրացնելով առկա սպառագինության տեսակները և ռազմավարական արվեստը, լավ իմանալով գիտաարդարական կազմակերպությունների հնարավորությունները՝ նրանք առաջ են քաշում ՍՈ-Տ արդիականացման և կառավարման խնդիրներ, տալիս դրանց լուծման ուղիները, անմիջականորեն մասնակցում տեխնիկական առաջադրանքների մշակմանն ու կատարված աշխատանքների ընդունմանը, փորձանմուշների պետական ու գորային փորձարկումներին:

Համագործակցության առանձնահատուկ մաս է կազմում փորձագիտական աշխատանքների կատարումը: ԳՀՓԿ աշխատանքների արդյունավետությունը և մշակված ծրագրերին համապատասխանությունը որոշելու նպատակով ստեղծվում են մասնագիտական հանձնաժողովներ, որոնց եզրակացությունները իիմք են դառնում կատարված աշխատանքների գնահատման և դրանց վերաբերյալ հետագա որոշումների ընդունման համար:

Վերջին տարիներին ԳՀՓԿԱ-ների ծրագրով կատարված աշխատանքները կարեի է համարել արդյունավետ՝ նկատի ունենալով, որ դրանց արդյունքները ներդրվել և կիրառվում են Չինված ուժերում:

Առանձնակի ուշադրության է արժանի նոր տեսակների ՍՈ-Տ մշակման գործում գիտության և տեխնիկայի նվաճումների կիրառման խնդիրը: Այսօր արդեն իրականություն է, որ ՍՈ-Տ բարդ համալիրների կառավարումն անհնար է առանց համակարգչային տեխնիկայի կիրառման: Այն հնարավորություն է տալիս ավտոմատացնելու կառավարման պրոցեսը, կրծատելու հրամաններն ու տեղեկությունները հասցեատիրոջ հասցնելու ժամանակը, լուծելու ամենաբարդ հաշվողական խնդիրները, վերլուծելու ստացված արդյունքները, մշակելու արդյունավետությունը մեծացնելու առաջարկների և լուծումների տարրերակները: Արդեն ներդրվել է ՀՀ Չինված ուժերի կառավարման ավտոմատացված համակարգը, և ընթանում են դրա համալրման ու ընդլայնման աշխատանքները: Համակարգչային ու թվային բաղադրատարրային բազայի վրա արդիականացվել են հասուլ նախանշանակման ռադիոտեխնիկական համալիրները, մշակվել և փորձարկվել են ՀՕՊ-ի կառավարման շարժական կետը, տեղանքի թվային բարտեզի վրա տեղեկատու-հաշվարկային խնդիրների ավտոմատ լուծման ծրագրերի փաթեները, մոդելավորվել են ՀՕՊ-ի համալիրների հանատեղ գործողությունները և այլն: Սկսվել են նաև հրետանային հետախուզության ռադիոտեխնիկական համալիրների արդիականացման աշխատանքները:

Այս զարգացումներն առաջ են բերում ՍՈ-Տ-ն շահագործող անձնակազմին ներկայացվող նոր պահանջներ՝ համակարգչային տեխնիկայով աշխատելու կարողություն և որոշակի փորձ: Այսինքն՝ ժամանակակից տեխնիկայի ներդրման հետ մեկտեղ պետք է կատարվի շահագործող հաշվարկների ուսուցում: Որոշ ծավալով այն իրականացվում է մշակող և ներդրող կազմակերպություններում, ինչպես նաև զորքերում՝ հեղինակային ուղեկցման ընթացքում:

Համակարգչային տեխնիկայի և օպտիկաէլեկտրոնային բնագավառի նվաճում-

Աերը նոր հնարավորություններ ստեղծեցին տարբեր վարժասարքերի մշակման և զորքերում ներդրման համար: Մասնավորապես՝ արդեն սկսվել է հակաօդային «Հգլա» համալիրի, հակատանկային «Ֆագոտ» համալիրի, երազենից կրակի վարժան և նշանառուների ուսուցման վարժասարքերի սերիական արտադրությունը:

Մշակվել է հետախուզական օպտիկական կառուցանային համակարգ, որը ներկայացվել է 2006 թ. Արենքում կայացած ԴԵՖԵՆԴ-ՕՐԻ-2006 ցուցահանդեսում:

ՀՀ Զինված ուժերում քվային էլեկտրոնային քարտեզների կիրառման համար ստեղծվել է համապատասխան կենտրոն, և ներկայումս շարունակվում են նոր քարտեզների մշակումն ու մատակարարությունը:

Պաշտպանական նախանշանակման հասուն ԳՀՓԿ աշխատանքները ծավալվում են մի քանի նպատակային ուղղություններով.

1. հասուն ՍՈՒ աշխատունակորդյան վերականգնում և ծառայության ժամկետների երկարաձգում՝ արտադրությունից հանված հանգույցների ու պահեստամասերի հիմքի վրա գործող համակարգերի արդիականացմանը, ինչը հնարավորություն է տալիս վերականգնելու նախկինում շահագործումից հանված արտադրատեսակները,

2. առկա սպառագինության տեսակների մարտավարատեխնիկական բնութագրերի բարելավում՝ շնորհիվ ժամանակակից բաղադրատարրային բազայով ընձեռվող հնարավորությունների: Այս աշխատանքները գրեթե միշտ ուղեկցվում են ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնմանը, շահագործման և սպասարկման պայմանների պարզեցմանը, ինչպես նաև հուսալիության մեծացմանը,

3. ՍՈՒ նոր տեսակների մշակում, փորձանմուշների պատրաստում, գրային փորձարկումների անցկացում, սերիական արտադրության յուրացում, ուսուցում և ներդրում,

4. ՀՀ ԶՈՒ-ի ավտոմատ կառավարման հեռանկարային միասնական համակարգի հիմնական բաղադրամասերի ստեղծում,

5. ՍՈՒ շահագործման և մարտական կիրառման հմտությունների ձևավորման նպատակով ուսուցման նյութատեխնիկական բազայի (վարժասարքերի) ստեղծում:

ԳՀՓԿ աշխատանքների կատարման և զարգացման հիմնական ուղի է համարվում գոյություն ունեցող ՍՈՒ արդիականացումը՝ ժամանակակից հանգույցներով համարմամբ և մարտական հնարավորությունների մեծացմանը:

ԳՀՓԿ աշխատանքների արդյունավետ կատարմանը գուգընթաց նպատակային խնդիրներ են լուծվել զիտատեխնիկական ներուժի և արտադրական հզորությունների պահպանման, ծավալման ու զարգացման համար: Մշակվել են ՍՈՒ զարգացման ԳՀՓԿԱ-ների հեռանկարային ծրագրեր, որոշվել են գերակա ուղղությունները:

ՀՀ Կառավարության որոշման հիման վրա ՀՀ ՊՆ և կատարող կազմակերպությունների միջև կնքվում են աշխատանքների կատարման պայմանագրեր: Աշխատանքներն ավարտվում են պետական և զորային փորձարկումներով:

ՀՀ պաշտպանական ոլորտի համար նախատեսված զիտահետազոտական աշխատանքների ծավալները մեծացնելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ ՊՆ, ՀՀ կրթության և զիտաթյան նախարարության և ՀՀ Գիտությունների ազգային ակադե-

միայի կազմակերպությունների սերտ համագրծակցությունը՝ հիմնարար գիտությունների ուղղությամբ ՀՀ պաշտպանական կառույցների զարգացման համատեղ ծրագրի մշակմամբ։ Այսինքն՝ պետք է ընդլայնվի գիտություն-Զինված ուժեր կազմը, կազմակերպվեն համատեղ բննարկումներ, մշակվի հիմնարար գիտությունների զարգացման նպատակով հատկացվող ֆինանսական միջոցների հաշվին պաշտպանական ոլորտում կատարվող աշխատանքների ֆինանսավորման ծրագիր։ Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է կազմակերպել գիտական կազմակերպությունների, ուսումնարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների և պաշտպանական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ բննարկումներ և գիտաժողովներ, որտեղ արծարծվեն ու պարզորոշվեն ՀՀ Զինված ուժերում առկա խնդիրները, մշակվեն ուղեցույցներ և միջազգային փորձով հաստատված լուծումների տարբերակներ։ Այս ուղղությամբ աշխատանքներ արդեն տարվում են, և այս տարի ՀՀ ՊՆ նախաձեռնությամբ մի շարք կազմակերպություններում պյանավորվում է անցկացնել պաշտպանական ոլորտում գիտության նոր նվաճումների կիրառման վերաբերյալ գիտաժողովներ, որոնց կմասնակցեն նաև պետական շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներ։ Այս աշխատանքների արդյունավետ ավարտի նպատակով նախօրոք ուսումնասիրվել են կատարող կազմակերպությունների մասնագիտացվածությունը, գիտական ներուժն ու փորձը, տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորությունները։

ԳՀՓԿ աշխատանքների ոլորտում զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվող հիմնական միջոցառումներն են։

– անցած տարիների գործունեության հետազոտումն ու վերլուծությունը, ՀՀ ձեռնարկությունների միջև կապերի ամրապնդման և փոխշահավետ համագրծակցության ծրագրերի մշակումը,

– առկա իրավիճակի ուսումնասիրությունը, գերակա ուղղություններով գիտատեխնիկական ներուժի զարգացման կանոնակարգումը,

– կազմակերպությունների գիտական մակարդակի պահպանման և զարգացման ծրագրերի մշակումը,

– երիտասարդ գիտնականներով ու մասնագետներով ոլորտի համարման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը, ինչի համար անհրաժեշտ է ապահովել բարձրագույն ուսումնական հաստատությունների և ուսումնական արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների սերտ համագրծակցությունը,

– գիտություն-արտադրություն-բանակ կապի անընդհատության ապահովումը՝ ստեղծված արտադրանքի կենսաշրջանի բոլոր փուլերի հաշվառմամբ՝ սկսած մշակումից մինչև շահագործման ավարտը և օգտահանումը,

– գիտաշխատողների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը,

– **ՍՈ-Տ** ստեղծման և արդիականացման ծրագրերի իրականացման համակարգի կատարելագործումը, փորձանմուշների մշակման աշխատանքների մեջ արդյունավետության ապահովումը,

–ԳՀՓԿ աշխատանքների գնորդյան համակարգի և մերողների կատարելագործումը, դրանց կիրառումը երկարաժամկետ զարգացման ծրագրերի պլանավորման գործընթացում,

–ձեռնարկությունների միջև կայուն կոռուպտացիոն կապերի հաստատման և ինտեգրման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, ռազմական պատվերների տեղաբաշխման կատարելագործված համակարգի մշակումը՝ տնտեսական նպատակահարմարության հաշվառմամբ,

–արդյունավետ ներդրումային քաղաքականության իրականացումը, ներդրված ռեսուրսների համախմբման և օպտիմալ օգտագործման նախատեսումը,

–արտարյուջնետային ներդրումների ներգրավման և շոկայական հարաբերություններով ենթակառուցվածքի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

–նոր ստեղծվող գինատեսակների, շահագործվող ՍՈ-Տ և ընդհանուր կիրառման կարևորագույն համալրող արտադրատեսակների միօրինակացման ուղղությամբ միջոցառումների ծրագրի մշակումը:

Դեռևս լիովին ուսումնասիրված չեն ՀՀ-ում գործող այն կազմակերպությունների գիտատեխնիկական հնարավորությունները, որոնք չեն կատարում պետական պաշտպանական պատվերներ: Կարծում ենք, որ նշված ուղղություններով բարեփոխումները հնարավորություն կընձեռն խորացնելու ներքին ռազմատեխնիկական համագործակցությունը, ինչն իր հերքին կապահովի նոր որակական արդյունքներ:

Բարեփոխումների կարևոր գործառույթներից կարելի է նշել հեռանկարային պլանավորման, կառավարման և վերահսկման, գիտական և արտադրական ներուժի, ներքին փոխշահավետ համագործակցության, կառուցվածքային բարաստից ազատման և պետական մասից առավելագույն արդյունավետության ապահովման մեխանիզմների ստեղծումը:

3. ՍՈ-Տ սերիական արտադրություն և դրանով ԶՈՒ-ի համալրում

Մերիական արտադրության կազմակերպումը հիմնականում պլանավորվել և իրականացվել է փորձառնուշը մշակող կազմակերպություններում, քանի որ այնտեղ կան անհրաժեշտ սարքեր, տեխնոլոգիական սարքավորանք, համապատասխան մասնագետներ: Այս դեպքում արտադրության յուրացման ծախսերը և արտադրատեսակների գները համեմատարար ցածր են լինում:

Վերջին տարիներին ընդլայնվել է հատուկ տեխնիկայում կիրառվող համակարգերի, զրահատեխնիկայի և հրետանու համալրող մասերի, ինժեներական միջոցների, տարրեր վարժասարքերի տեսականին: Որոշակի արտադրատեսակների գծով ստեղծվել են անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ:

Այս ուղղությամբ կատարվել են՝

–ՍՈ-Տ ներիանրապետական սերիական արտադրության կազմակերպում և ընթացքի վերահսկում,

–անհրաժեշտ ներդրումներ ինչպես պաշտպանական հզորության ապահով-

ման, այնպես էլ ընդիհանուր տնտեսական ու սոցիալական զարգացման նպատակով,

– հայրենական սերիական բողարկման արտադրատեսակների անվանացանկի շարունակական ընդլայնում՝ ըստ փորձակոնստրուկտորական աշխատանքների շնորհիվ ստեղծված փորձանմուշների գորային փորձարկումների դրական արդյունքների,

– արտադրանքի ցուցակավորման և կոդավորման ուղղությամբ հետազոտությունների կատարում՝ արտադրանքի նույնացման միասնական համակարգ ստեղծելու համար, ինչը կնպաստի նույն նպատակով օգտագործվող արտադրատեսակների մատակարարման կրկնօրինակման բացառմանը և դրանց ստանդարտացմանը:

4. Ո-ազմաարդյունաբերական համալիրի բաժնետիրական ընկերությունների բաժնեմասերի կառավարում

Ո-ազմական արդյունաբերության մի շարք կազմակերպությունների պետական բաժնեմասի կառավարման իրավունքը ՀՀ Կառավարության որոշումներով վերապահվել է պաշտպանության նախարարությանը: Ո-ազմաարդյունաբերական վարչության կողմից կատարվում է նշված ընկերությունների պետական բաժնեմասերի կառավարում և այս ոլորտում ՀՀ համապատասխան պետական մարմինների հետ փոխգործություն:

Բաժնետիրական ընկերությունների կառավարման մակարդակը բարձրացնելու նպատակով գործողության մեջ են դրվել գործադիր տնօրենների նշանակման մրցութային եղանակը և ատեսավորման կարգը:

5. Պաշտպանական արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների տեխնիկական հզորությունների զարգացում և կառավարման արդյունավետության մեծացում

ՀՀ ո-ազմաարդյունաբերական համալիրի կարևորագույն խնդիրներից մեկը նրա բազային ձեռնարկությունների արդյունավետ գործունեության ապահովումն է ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ արտակարգ իրադրություններում:

Ո-ազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունները բաժանվում են հետևյալ խմբերի՝

– պետական ձեռնարկություններ, որոնց բաժնետոմսերի 50 և ավելի տոկոսի կառավարման իրավունքը վերապահված է ՀՀ պաշտպանության նախարարությանը,

– ձեռնարկություններ, որոնց բաժնետոմսերի 50 և ավելի տոկոսի կառավարման իրավունքը վերապահված է այլ պետական մարմինների ու կառույցների,

– մասնավոր լիցենզավորված ձեռնարկություններ, որոնք կատարում են ընթացիկ պետական պաշտպանական պատվերներ,

– պետական և մասնավոր ձեռնարկություններ, որոնք չեն կատարում ընթացիկ պետական պաշտպանական պատվերներ, սակայն հատուկ ժամանակաշրջանում ո-ազմական արտադրանքի բողարկման նպատակով կնքված պայմանագրերով ներառված են ո-ազմական նախանշանակման արտադրանքի մատակարարների գորահավաքային անվանացանկում:

Պետական ձեռնարկությունները հիմնականում կատարում են՝

–հատուկ ՍՈՒ (քաղաքացիական ոլորտում չկիրառվող և նմանակը չունեցող) արտադրություն և գործարանային նորոգում,

–ՍՈՒ օգտագործման ժամկետը երկարացնելու նպատակով բաղկացուցիչ համակարգերի արդիականացում,

–զորքերում շահագործման մեջ գտնվող ՍՈՒ արտագնա նորոգում և տեխնիկական սպասարկում,

–ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ՍՈՒ նոր նմուշների և կառավարման ավտոմատացված համակարգերի ստեղծում, ներդրում և կիրառման ուսուցում:

Ուազմական պատվերներ կատարող պետական ձեռնարկությունների հիմնական մասը պաշտպանության նախարարության կառավարմանը վերապահված ընկերություններ են, որոնք կատարում են պատվերների շուրջ 70 %-ը:

6. Ուազմատեխնիկական համագործակցություն օտարերկրյա պետությունների հետ

Արտաքին ուազմատեխնիկական համագործակցությունն իրականացվել է ուազմական անվտանգության ապահովման խնդիրների հաշվեկշռված լուծման անհրաժեշտության հաշվառմամբ և քաղաքական ու տնտեսական նպատակահարմարության նկատառումով: Այն կազմակերպվել է փոխահավետության հիմքի վրա՝ ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ միջազգային պարտավորությունների հաշվառմամբ:

Աշխատանք է տարբեր ՀՀ ուազմատնտեսական դիրքերի ամրապնդման և սեփական կարիքների համար արտասահմանից անհրաժեշտ ՍՈՒ, որանց պահեստամասերի, նյութերի, համալրող մասերի և քաղադրատարբերի երաշխավորված մատակարարությունների հիմքերի ստեղծման ուղղությամբ:

7. Պաշտպանական արդյունաբերության ոլորտում անհրաժեշտ մասնագետների ուսուցման և որակավորման բարձրացման կառույցների գործունեության համակարգում

ՀՀ ուազմաարդյունաբերական կառույցների գարգացման համար հիմնարար գիտությունների ոլորտում ստեղծվել են որոշակի կապեր բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Մասնավորապես՝ ձեռնարկվել է.

–համագործակցությունն երիտասարդ մասնագետների պատրաստման և պաշտպանական ոլորտի գիտատեխնիկական մակարդակի ապահովման նպատակով,

–մագիստրոսների և ասպիրանտների ընդգրկում պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների գործունեության մեջ,

–ՀՀ ՊՆ մասնակցությամբ գիտաժողովների կազմակերպում և ԳՀՓԿ աշխատանքների կատարում բարձրագույն ուսումնական հաստատությունների ներգրավմամբ,

–տեսական և գործնական դասընթացների կազմակերպում ՀՀ Գիտությունների

ազգային ակադեմիայի և առաջատար գիտաբարությական կազմակերպությունների մասնագետների ներգրավմամբ,

–ուազմաարդյունաբերական ոլորտում կատարվող գիտահետազոտական աշխատանքների ընդլայնում ՀՀ ՊՆ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ու ՀՀ կրթության և գիտության նախարարությունների սերտ համագործակցությամբ:

Ներկայումս ուազմաարդյունաբերական համալիրի գործունեության արդյունավետության և զարգացման ապահովման խնդիրը գտնվում է պետական մարմինների, առաջատար արդյունաբերական ու գիտահետազոտական կազմակերպությունների կողեկտիվների ուշադրության կենտրոնում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ուազմական արդյունաբերության ստեղծումը, գործունեությունը, պահպանումն ու ամրապնդումը անմիջականորեն ազդում են ոչ միայն պետության պաշտպանական անվտանգության վրա, այլև տնտեսության կայուն զարգացման, ուազմական քաղաքականության, գիտատեխնիկական առաջնորդացի տեմպերի վրա և շոշափում են կարևորագույն ազգային շահերը:

Ուազմաարդյունաբերության ներկա վիճակը և գործունեությունը բնութագրվում են հետևյալ հիմնական գործուներով.

–պետական պաշտպանական պատվերների բավարար չափերով ֆինանսավորմամբ,

–արտաքին շուկայում ձեռնարկությունների սահմանափակ գործունեությամբ, ինչը պայմանավորված է ոչ միայն որոշակի արգելվներով, այլև արտահանվող արտադրանքի ու ծառայությունների և արտասահմանյան նմանակների միջև գոյություն ունեցող մրցակցությամբ,

–ՀՀ Զինված ուժերում ԳՀՖԿԱ-ների արդյունքների արագ ներդրմամբ,

–գիտատեխնիկական և արտադրական ներուժի զարգացման բավարար տեմպերով,

–ձեռնարկություններում բարձր որակավորմամբ աշխատողների աշխատավարձերի անընդհատ բարձրացմամբ և վճարումների անխափան կատարմամբ,

–ներքին շուկայում սպառման փոքր ծավալներով,

–բազային ձեռնարկությունների կենսագործունեության ապահովման և գոյատևման տեսանկյունից պետական պատվերների համար հատկացվող բավարար ֆինանսական միջոցներով:

Ուազմաարդյունաբերական համալիրի գլխավոր առանձնահատկություններն են.

1. ձեռնարկությունների արտադրական և գիտատեխնիկական ներուժի օգտագործումը տարեկան կտրվածքով կազմում է միջինը 80 %: Մասնագիտացված ձեռնարկությունների գրեթե 90 %-ը հիմնականում կատարում է պետական պաշտպանական պատվերներ: Դա պայմանավորված է նաև այն բանով, որ նախկին արտադրանքը կորցրել է սպառողական հատկությունները և չի բավարարում ժամանակի պահանջներին,

2. ուազմական արտադրանքի գրեթե 100 %-ն առարվում է սեփական Զինված ուժերին, ընդ որում, արտահանում չինելը պայմանավորված է ոչ թե արտահանվող և

արտասահմանյան արտադրանքի ու ծառայությունների միջև մրցակցությամբ, այլ դրոշակի սահմանափակումներով,

3. ըստ սեփականության ձևերի՝ 100 % պետական բաժնեմաս ունեցող ռազմա-արդյունաբերական ձեռնարկությունները կազմում են ընդհանուր թվի մոտ 10 %-ը, 50 %-ից ավելի պետական բաժնեմաս ունեցողները՝ մոտ 60 %-ը, իսկ մոտ 30 %-ը մասնավոր բաժնետիրական ընկերություններ են: Առաջին երկու դեպքերում ձեռնարկությունների գործունեությունը գերազանցապես հիմնված է պետական պատվերների ֆինանսական միջոցների վրա: Մասնավոր սեփականատերերը, դեկավարվելով ազգային ու պետական շահերով, հաճախ հրաժարվում են ցանկալի շահույթից և ֆինանսական միջոցները նպատակատրում նոր աշխատանքների կատարմանը: Այս ամենը հիմքեր է ստեղծում հեռանկարային պլանավորման և նպատակային զարգացման համար,

4. ձեռնարկությունների արտադրական սարքավորանքը և տեխնոլոգիաները բավարար են պաշտպանական պատվերների կատարման համար. դրանք շարունակաբար թարմացվում են: Արտադրությունից հանվում է նախկին ԽՍՀՄ ժամանակներից մնացած և բարոյապես ու ֆիզիկապես մաշված սարքավորանքը, որը խոչընդոտում է գիտատեխնիկական առաջընթացին, հատկապես՝ ԳՀՓԿ աշխատանքների ոլորտում,

5. ձևավորվել են պետական պաշտպանական պատվեր կատարող բազային ձեռնարկությունները, և այժմ ապահովված են դրանց նորմալ գործունեությունը և զարգացումը,

6. ԳՀՓԿԱ-ների ոլորտում կազմակերպված է ձեռնարկությունների համագործակցությունը, ինչը ծառայում է աշխատանքների կատարման որակի բարձրացմանը և մշակումների կրկնության բացառմանը: Դա հատկապես ցայտունորեն է դրսևորվում բարդ համալիրների մշակման ժամանակ, երբ կազմակերպվում են քննարկումներ՝ բաղկացուցիչ համակարգերի առկայության կամ նվազագույն ծախսերով դրանց ստացման հարցը պարզելու համար: Ուսումնասիրվում են արտադրանքի կողավորման և ցուցակավորման գործընթացները,

7. շուկայական հարաբերությունների պայմաններում ԳՀՓԿԱ-ների ոլորտում գների որոշման մերողների ու դրա վերաբերյալ տեղեկությունների առկայությունը և որոշ տնտեսական գործընթացներ հանգեցրել են ծրագրերի իրականացման ռացիոնալ տնտեսավարման և կառավարման ժամանակակից մեխանիզմների կիրառմանը,

8. որոշ հումքի, նյութերի և համարող մասերի ներքին արտադրանքի բացակայությունը, ինչի հետևանքով առաջացել են ոլուկեր՝ կապված զարգացման շարունակականության հետ,

9. ձեռնարկությունների կողմից սեփական միջոցներով մշակված և ոլորտում կիրառվող արտադրանքի առկայությունը, որը վոխսատուցվում է հետագա աշխատանքների արդյունքներով: Հատկապես ԳՀՓԿԱ-ների ոլորտում ցանկալի են արտաքութեային ներդրումներ, այդ բվում՝ երկակի նշանակության արտադրանքի ստեղծման համար:

Այս առանձնահատկությունները և եղած փորձի գնահատումը ցույց են տալիս, որ ռազմաարդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները պետք է համարվեն ներքին համագործակցության աշխատավորմը, բազային ձեռնարկությունների պահպանումը, հատկապես՝ նորոգման աշխատանքների ոլորտում, և գիտարտադրական միավորումների ստեղծումը: Վերջիններս պետք է ընդգրկեն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի կազմակերպությունները: Նոր գիտարտադրական միավորումների ստեղծումը կարող է դառնալ հատկապես ԳՀՓԿԱ-ների արդյունավետության մեծացման կարևոր գործոն:

Եթե բարեփոխումները չուղեցվեն ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ և չիմեն գիտականորեն հիմնավորված, ապա կարող են չտալ սպասվելիք արդյունքը: Առանց լրացուցիչ ներդրումային քաղաքականության իրականացման բազային ձեռնարկությունների՝ այսպես կոչված ռազմաարդյունաբերության միջուկի պահպանումը նույնպես կարող է արդյունավետ չինել:

Այս բնագավառում ամենակարևոր գործառություններից կարելի է նշել հեռանկարային պլանավորման, կառավարման և վերահսկման, ռազմաարդյունաբերության գիտական և արտադրական ներուժի ներքին փոխչահավետ համագործակցության, կառուցվածքային բալաստից նրա ազատվելու և պետական մասից առավելագույն արդյունավետություն ստանալու մեխանիզմների ստեղծումը:

ՍՊ-Տ ստեղծման աշխատանքներում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն է տալիս ժամանակին հայտնաբերելու աշխատանքների բարդ ու դժվար փուլերը, որոշելու վերջնական ժամկետը, կենտրոնացնելու անհրաժեշտ ռեսուրսներ, ժամանակին պատրաստելու շահագործող անձնակազմ, ինչպես նաև արագացնելու ՍՊ-Տ ստեղծման բնագավառի ստանդարտացման և միօրինակացման աշխատանքները:

Կարևոր ուղղություններից է արտադրանքի կենսաշրջանի համակարգի ստեղծումը, որն սկսվում է շուկայում պահանջարկի պարզմամբ և ներառում է նախագծումը, արտադրությունը, համակատարողների համագործակցությունը միջանց և լրամասեր մատակարարողների հետ, ինչպես նաև շահագործումը, նորոգումը և օգտահանումը:

Մյուս կարևոր հարցը ՍՊ-Տ արտադրության ընթացքի կառավարման կառարելական հարցումն ու ցուցակավորումն է: Դրա հիմնական խնդիրներն են՝

– մատակարարվող առարկաների նույնականացման միասնական մերուդիկայի ընդունումը,

– յուրաքանչյուր արտադրատեսակի բնութագրերի և շահագործման յուրահատկությունների վերաբերյալ արդիական և հավաստի տեղեկույթի ապահովումը,

– նույն նպատակներով օգտագործվող առարկաների կրկնությունների բացառումը:

Ցուցակավորումը հնարավորություն կտա մեծացնելու նորոգումների, տեխնիկական սպասարկման ու տեխնիկայի արդիականացման արդյունավետությունը, բացառելու կրկնվող մշակումները, պարզեցնելու նյութատեխնիկական ապահովումը,

կրծատելու մատակարարվող ռազմակաների քանակը: Ցուցակավորման աշխատանքները պետք է սկսվեն պետական միասնական դասակարգիչների համակարգի մշակմամբ: Այս գործում կարող է օգտակար լինել ՀՀ Զինված ուժերի համար մշակված և ներդրված միասնական դասակարգիչների համակարգը:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, տեղեկատվության ապահովման կատարելագործումը, ռազմաարդյունաբերական համակարգի արդյունավետ կառավարումը կարող են խրանել ռազմաարդյունաբերական ոլորտի զարգացումը:

ՍՈ-Տ ստեղծումը պետք է սկսել ՀՀ Ռազմական դոկտրինի համապատասխան բաժինների, մեր և հավանական հակառակորդի ուժերի ու միջոցների հարաբերակցության վերլուծությամբ, այդ եղանակով պարզել մեր անելիքը, ընտրել գերակա ուղղությունները և որոշել հիմնական ՍՈ-Տ տեսակները: Հաջորդ քայլը պետք է լինի վերջնական նախատակին հասնելուն միտված ծրագրերի և ընտրված նախազերի ծևափորումը՝ բազային տեխնոլոգիաների ճշտմամբ, համարող միջոցների և համակարգերի այնային արդյունավետ նախազերի մշակմամբ, որոնք օգտագործելի լինեն առավել շատ տեսակի ՍՈ-Տ-ների համար: Այս փուլում ամենակարևոր հարցերից մեկը ՍՈ-Տ փորձարկումների համար փորձատեղերի և չափիչ սարքերի բազայի ապահովումն է:

ՍՈ-Տ ստեղծմանը համընթաց հարկավոր է վերապատրաստել դրանք շահագործող և սպասարկող անձնակազմները: Այստեղից բխում են վարժասարքերին և չափիչ համակարգերին ներկայացվող լրացուցիչ պահանջները:

Հաջորդ կարևոր խնդիրն է գիտահետազոտական հիմնարար և հեռանկարային ծրագրերի գիտագործնականութեն հիմնավորված ծևափորումը՝ առկա գիտապարտադրական ծեռնարկությունների (անկախ նրանց սեփականության ճեկա), Գիտուրյունների ազգային ակադեմիայի հնատիտուտների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներուժի հաշվառմամբ: Գիտաարտադրական ներուժի պահպանան համար անհրաժեշտ է ճշգրտուեն որոշել բազային գիտական ինստիտուտների ցանկը՝ նրանց գիտատեխնիկական մշակումների մակարդակի հաշվառմամբ:

ՍՈ-Տ ստեղծման ժամանակ հնարավոր հակասությունների բացառման նպատակով հարկավոր է՝

– ֆինանսական միջոցների սահմանափակության պայմաններում շահագրգիռ մարմինների հետ կազմակերպել ԳՀՓԿԱ-ների թեմաների և առաջնահերթության վերաբերյալ քննարկումներ (ՀՀ Զինված ուժերում ստեղծել այս ուղղության խորհուրդ),

– ծևափորել ԳՀՓԿԱ-ների կոնկրետ ծրագրեր և պետական պատվեր, կազմակերպել աշխատանքների ծեռքբերման արդյունավետ գործընթաց,

– կազմակերպել վերահսկողություն մշակված նոր ՍՈ-Տ կենսաշրջանի տարբեր փուլերում,

– մշակել պետական ծեռնարկություններում նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրեր,

– պարզել արտաքին շուկայում արտադրանքի իրացման հնարավորությունը,

–պարզել տարբեր սեփականության ձևերի ծեռարկություններում շարտոնված ներքափանցումներից պաշտպանության միջոցների առկայությունը,

–լուծել ռազմական արդյունաբերության ոլորտում շուկայական հարաբերություններին անցման ժամանակ ծագող մի շարք խնդիրներ:

Կարևոր խնդիր է նաև ոլորտում ներդրումային և վարկային ֆոնդերի ստեղծումը, հատկապես՝ որոնողական ԳՀՓԿ աշխատանքների կատարման, սերիական բողարկման արտադրատեսակների արդիականացման և կազմակերպությունների տեխնիկական ու տեխնոլոգիական զարգացման համար:

Շուկայական կառուցվածքին ռազմաարդյունաբերության ինտեգրման համար անհրաժեշտ է մշակել հիմնավորված ծրագիր, ինչպես նաև ռազմաարդյունաբերությունը դարձնել արտաքրութեային ներդրումների համար տնտեսապես ավելի գրավիչ:

Ռազմաարդյունաբերության կայուն և արդյունավետ գործունեության ապահովման համար պետք է մշակել ու իրականացնել օպտիմալ գների քաղաքականություն, հատկապես՝ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպությունների համար, որտեղ պետական ճնշման մեխանիզմները ավելի ցայտուն են արտահայտված: Ուրոտի գործունեության արդյունավետության ապահովումը, ժամանակակից տեխնոլոգիաների ու կառավարման նոր ձևերի ներդրումը, տնտեսության մեջ առաջատար դարձնելը անկասկած հրատապ խնդիրներ են և ուրոտի զարգացման միակ հուսափ ուղին:

Ռազմական արդյունաբերության ոլորտում վերակազմավորման միջոցով քարեփոխումների իրականացումը պետք է նպատակառողջված լինի՝

–պետական պաշտպանական կառույցի ֆինանսական և նյութական կարիքների քավարարմանը, հագեցմանը արդյունավետ և ժամանակակից ռազմական տեխնիկայով, սպառազինությամբ, ունեցվածքով և այլ նյութական ռեսուրսներով, ընդ որում, այն քանակներով, որոնք անհրաժեշտ են ռազմական անվտանգության երաշխափորված ապահովման համար,

–նոր սերնդի արդյունավետ համակարգերի ստեղծմանը և պաշտպանական կառույցի հետագա վերահագեցման համար գիտատեխնիկական և արտադրական հիմքի ձևավորմանը,

–միջազգային ռազմատեխնիկական փոխշահավետ համագործակցության զարգացմանը, տնտեսական ու ռազմատեխնիկական ոլորտներում միջազգային պարտավորությունների կատարմանը,

–արտադրական հզորությունների օպտիմալացման, արդիականացման, տեխնիկական վերագինման, ինչպես նաև նորմատիվ-իրավական բազայի կատարելագործման և համապատասխան կարգերով համալրման ապահովմանը:

Այս խնդիրները կարելի է լուծել միայն համայիր ծրագրերի մշակմամբ՝ հաշվի առնելով ՍՊ-Տ զարգացման ուղղությունները, արդի պայմաններում տնտեսական հարաբերությունների վերակազմափորումը, պետության արտադրական, գիտատեխնիկական, ֆինանսական հնարավորությունները, ինչպես նաև ռեսուրսների առկայութ-

յունը, ներքին և արտաքին կոռպերացիայի ու տնտեսական համագործակցության ձևերը, կադրերի պատրաստականության և գիտատեխնիկական ներուժի պահպանման ու զարգացման պայմանները:

Մեր կարծիքով՝ պաշտպանական արդյունաբերության վերակազմավորման և զարգացման համար անհրաժեշտ է.

ա) մշակել ռազմավարություն, այդ թվում՝ կառավարման և համադասման բնագավառներում, որը ներառի՝

—պաշտպանական արդյունաբերության գերակայության և զարգացման մակարդակների սահմանումը,

—ոլորտի զարգացման կանխատեսումը և ծրագրերի ու պլանների մշակման համադասումը,

—ուսուուրսների հոսքերի համադասումը և համակենտրոնացումը նպատակային ուղղություններով,

բ) զարգացնել գիտատեխնիկական ներուժը, ինչը պետք է ներառի՝

—առկա իրավիճակի վերլուծությունը և գերակա ուղղություններով գիտատեխնիկական ներուժի զարգացման կանոնակարգումն ու դեկավարումը,

—պետության անվտանգության ու պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված նպատակային որոնողական և կիրառական հետազոտությունների իրականացումը,

—ռազմական և քաղաքացիական նրբունակ արտադրատեսակների ստեղծման տեխնոլոգիաների մշակումը և ներդրումը,

—ոլորտի գիտական բազայի պահպանումը, տեխնիկական վերագինումը և հետագա զարգացումը,

—ոլորտի համալրումը երիտասարդ գիտնականներով ու մասնագետներով և պետական աջակցության ապահովումը,

—գիտության ճյուղերի միջև կապերի պահպանումը, օպտիմալացումը և զարգացումը,

—գիտաարտադրական պրոցեսի միասնության և անընդհատության ապահովումը՝ ստեղծված արտադրանքի կենսաշրջանի բոլոր փուլերի հաշվառմամբ՝ սկսած մշակումից մինչև շահագործման ավարտն ու օգտահանումը,

գ) զարգացնել ռազմական արդյունաբերության արտադրողական ներուժը, ինչը պետք է ներառի՝

—ձեռնարկությունների արտադրական ներուժի վերլուծությունը,

—ձեռնարկությունների տեխնիկական վերագինումը՝ հստակեցված գերակայությունների հաշվառմամբ, ըստ համաձայնեցված ծրագրերի և պլանների,

—ձեռնարկություններում անկախ սեփականության ձևերից, պաշտպանական արտադրանքի և երկակի նախանշանակման արտադրանքի մշակման և արտադրության մեջ տնտեսական խթանման համակարգի ներդրումը,

դ) պահպանել և զարգացնել ռազմական արդյունաբերության կադրային ներուժը, լուծել սոցիալական պրոբլեմները, ինչը պետք է ներառի՝

–կադրային հարցի մշտագննումը և բոլոր մասնագիտությունների ու որակավորման մակարդակների պրոֆեսիոնալ կադրերի ընթացիկ և հեռանկարային պահանջարկի գնահատումը,

–աշխատանքային, ինժեներական, գիտական ու վարչական կադրերի պատրաստման և ամրապնդման պլանավորման համակարգի կատարելագործումը,

–իիմնական մասնագիտություններով մասնագիտական ստանդարտների մշակումը և հաստատումը,

–պաշտպանական արդյունաբերությունում աշխատողների սոցիալական պաշտպանվածության ապահովումը,

ե) համակարգել և կատարելագործել ռազմական արդյունաբերության ոլորտի գարգացման պետական ծրագրերը, ինչը պետք է ներառի՝

–սպառագինության և ռազմական տեխնիկայի, ուսումնական միջոցների ստեղծման ու զարգացման պետական համակարգված ծրագրերի կատարելագործումը և կառավարումը,

–ՍՈ-Տ և Ո-ՏՄ ստեղծման, արտադրության և զարգացման գնագոյացման համակարգերի և մեթոդների կատարելագործումը,

–ներքին և արտաքին շուկաներում արտադրանքի պահանջարկի և վճարունակության երկարաժամկետ կանխատեսումները,

–գիտաարդյունաբերական ներուժում և դրա զարգացման առաջնային (գերակա) ուղղություններում թերությունների հայտնաբերումն ու վերացմանն ուղղված ծրագրերի մշակումը,

–արտադրության միջգերատեսչական և միջպետական ինտեգրման խորացումը,

զ) պետական մակարդակով կանոնակարգել ռազմական արդյունաբերության վերակազմավորման և զարգացման գործընթացները, ինչը պետք է ներառի՝

–մրցության հիմունքներով պետական պաշտպանական պատվեր շահած ձեռնարկությունների կազմի գրանցումը և դրանց կառավարման օպտիմալացումը,

–ձեռնարկությունների ինտեգրման համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ տնտեսական նպատակահարմարության և ինտեգրման մասնակիցների կայուն կոռապերացիոն կապերի հաշվառմանը,

–պաշտպանական արդյունաբերության հեռանկարային զարգացման ռեսուրսային ապահովումը,

–պաշտպանական արդյունաբերության զարգացման գերակա ուղղություններում ի հայտ եկած պրոբլեմների լուծման համար անհրաժեշտ ռեսուրսների հատկացման վերաբերյալ կենտրոնացված որոշումների մշակումը,

–ներդրված ռեսուրսների համախմբումը և օպտիմալ օգտագործում նախատեսող ներդրումային քաղաքականության ապահովումը,

–արտաքյուղետային ներդրումների ներգրավման շուկայական ենթակառուցվածքի զարգացման համար պայմանների ստեղծումը,

–բարենպաստ ներդրումային մթնոլորտի ձևավորումը,

–այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք նպատակառության են պետության համար կենսականորեն կարևոր ՍՈՒ-ների արտադրության մեջ օգտագործվող համալրող արտադրատեսակների, իումքի և նյութերի ներմուծումներից կախվածության նվազեցմանը և վերացմանը,

–պետության տնտեսության հարակից ոլորտների (Էլեկտրաէներգետիկա, մետաղամշակում, տրանսպորտ և այլն) նկատմամբ պահանջների ծնավորումը,

–պաշտպանական արդյունաբերության զարգացման նորմատիվ-իրավական ապահովումը,

–արդյունաբերական ներուժի զարգացման տնտեսական խթանման մեխանիզմների ստեղծումը, ներառյալ՝ որոշակի հարկային, մաքսային և այլ արտոնությունների տրամադրումը,

–արտահանմանն աջակցման միջոցառումների համակարգի մշակումը,

–կազմակերպությունների անվճարունակության (սնանկության) մասին որոշումների ընդունման առանձնահատկությունների սահմանումը,

–ինտեգրված ենթակառուցվածքների և դրանց գործունեության բոլոր կողմերի իրավական ապահովումը,

Է) տեխնիկապես կանոնակարգել ստանդարտացումը և ցուցակավորումը, ինչը պետք է ներառի՝

–ՍՈՒ- կարևորագույն համալրող արտադրատեսակների միօրինակացման մակարդակի բարձրացումը,

–արտադրանքի կենսաշրջանի բոլոր փուլերում արտադրանքին ներկայացվող պարտադիր և կամայական պահանջների մշակումը, ընդունումն ու կիրառումը (տեխնիկական կանոնակարգերի մշակում),

–արդյունաբերության փոխադրումը ռազմական նյութատեխնիկական համակարգ, նրա կառավարման ավտոմատացումը (ՍՈՒ- սպասարկման ենթակառուցվածքի կիրառում),

–արդյունաբերական գիտահետազոտական կազմակերպությունների և արտադրական ձեռնարկությունների ներգրավումը տեխնիկական կանոնակարգման պրոցեսում, կոնստրուկտորական և տեխնոլոգիական փաստաթղթերի ապահովագրական ֆոնդի ստեղծումը և պահպանումը:

Ներկա տնտեսական պայմաններում բարեփոխումների և վերակազմավորման գործընթացը պետք է իրականացվի սահուն և աստիճանաբար: Այն պետք է հիմնված լինի գիտական սկզբունքների վրա՝ ռազմատեխնիկական համագործակցության հնարավորությունների և ձեռք բերված փորձի համակցությամբ, ինչպես նաև կատարելագործման և բարեփոխումների ուղղությամբ բոլոր հնարավոր միջոցների ձեռնարկմամբ: Միևնույն ժամանակ այդ գործընթացում պետք է հաշվի առնվեն հավանական հակառակորդի՝ Աղբբեջանի պատրաստությունները ռազմաարդյունաբերության բնագավառում և մեր համապատասխան մրցունակության ապահովման անհրաժեշտությունը:

ВОЕННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ И ЗАДАЧИ ЕЁ РЕОРГАНИЗАЦИИ

Ю. Г. ХАЧАТУРОВ, генерал-полковник, начальник Главного штаба
ВС РА—Первый заместитель министра обороны, П. А. ШАДЯН, полковник,
начальник Военно-промышленного управления МО РА, К. А. ДАДАЛЯН, полковник,
заместитель начальника Военно-промышленного управления МО РА

РЕЗЮМЕ

За относительно короткий период независимости РА военная промышленность провела значительную работу по обеспечению ВС РА эффективными и современными системами В и ВТ, организации их ремонта, обслуживания и модернизации. МО РА в лице своего Военно-промышленного управления (ВПУ) направляет, координирует и объединяет усилия предприятий и организаций военно-промышленной сферы (ВПС). Наряду с ремонтом и восстановлением В и ВТ советских образцов, уже в начальном периоде формирования военной промышленности РА на базе мощного военно-промышленного комплекса советского периода проводились работы по модернизации некоторых изделий, нацеленные на улучшение их ТТХ. Параллельно создавались нормативно-технические, правовые и экономические документы, регламентирующие деятельность отрасли.

НИОКР оборонного значения в РА осуществляются по таким целевым направлениям, как: увеличение эксплуатационного ресурса изделий спецтехники путем модернизации узлов и деталей, в том числе, замены снятых с производства; улучшение ТТХ изделий за счет применения новой элементной базы, а также разработки, производства и внедрения новых образцов, учебных тренажеров и составляющих АСУ ВС и вооружения. Создание новых образцов необходимо планировать, исходя из анализа соответствующих разделов Военной Доктрины РА, соответственно определяя основные виды и количество выпускаемых изделий, а также с учетом развития военно-технической сферы вероятного противника.

Реформы в военно-промышленной сфере должны быть направлены на удовлетворение материальных и финансовых нужд оборонной инфраструктуры, формирование научно-технических и производственных основ для создания систем нового поколения, развитие взаимовыгодного международного сотрудничества и усовершенствование нормативно-правовой базы. Эти задачи можно решить только посредством разработки комплексных программ, учитывающих направления развития В и ВТ в мировых масштабах, переформирование производственных отношений в условиях рыночной экономики, производственные, научно-технические и финансовые возможности государства, а также уровень подготовки кадров с сохранением и развитием имеющегося научно-технического потенциала.

Основными мероприятиями по реорганизации, оптимизации и развитию оборонной промышленности являются:

- разработка стратегии, включающей координацию и управление сферой;
- развитие научно-технического и производственного потенциалов;
- решение кадровых и социальных проблем;
- систематизация и усовершенствование государственных программ развития сферы.

В современных экономических условиях реформы и процесс реорганизации должны осуществляться с учетом приобретенного опыта и использованием возможностей, предоставляемых военно-техническим сотрудничеством как с зарубежными партнерами, так и государственными и негосударственными организациями внутри страны.

THE MILITARY INDUSTRY AND THE TASKS OF ITS REORGANIZATION

*Y. G. KHACHATUROV, Colonel-General, Chief of the Main Staff
of the RA Armed Forces—First Deputy Minister of Defense,*

*P. A. SHADYAN, Colonel, Chief of the Military-Industrial Board of the MoD, RA,
K. A. DADALYAN, Colonel, Deputy Chief of the Military-Industrial Board of the MoD, RA*

SUMMARY

In the relatively short period of the RA independence, the military industry conducted significant work on providing the RA Armed Forces with efficient and modern systems of the Armament and Defense Technology, organizing their repair, maintenance and modernization. The MoD, RA, on behalf of its Military-Industrial Board (MIB) directs, coordinates and joins efforts of the enterprises and organizations of the military-industrial sphere (MIS). Together with the repair and restoration of the Armament and Defense Technology of Soviet samples, the activities on modernizing some samples, targeted at the improvement of their performance characteristics were already carried out in the initial period of the RA Military Industry formation on the basis of the powerful Military-Industrial Complex of the Soviet period. Normative-technical, legal and economic documents, regulating the activity of the branch, were parallelly drafted.

The R&D of the defense value in the RA is carried out in such target directions as: increase of exploitative resource of articles of special technical equipment through modernization of knots and parts, including replacement of the ones, gone out of production; improvement of performance characteristics of articles due to the application of a new base of elements, as well as elaboration, production and introduction of new samples, training simulators and components of the Armed Forces ACS and armament. The creation of new standards of the Armament and Defense Technology must be planned proceeding from the analysis of corresponding sections of the RA Military Doctrine, accordingly determining the basic kinds and amount of the produced items, as well as taking into account the development of the military-technical sphere of a potential opponent.

Reforms in the military-industrial sphere must be conducted for the satisfaction of material and financial needs of the defense infrastructure, formation of scientific-technical and production bases for the establishment of new generation systems, development of mutually beneficial international cooperation and improvement of the normative-legal base. These tasks can be solved only through the elaboration of complex programs, taking into account the directions of the worldwide development of the Armament and Defense Technology, reformation of production relations in terms of market economy, production, scientific-technical and financial capabilities of the State, as well as the level of personnel

training with the preservation and development of the existing scientific-technical potential.

The basic measures on reorganization, optimization and development of the defense industry are:

- development of the strategy, including coordination and control of the sphere;
- development of the scientific-technical and production potentials;
- solution of personnel and social problems;
- systematization and improvement of state programs on the development of the sphere.

In the contemporary economic terms the reforms and the process of reorganization must be carried out taking into account the obtained experience and with the use of opportunities, given by the military-technical cooperation both with foreign partners, and state and non-governmental organizations inside the country.

ՀՀ ԶՈՒ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՎՏՈՍԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԸԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ո. Վ. ԱԹՈՅՑԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Երևանի ավտոմալի կառավարման համակարգի զիրահենության հիմքի բոլոր գործադրությունները» (ԵրԱԿՀԳՀ) ՓԲԸ-ի գործադրի գնումներին, ՅՈՒ. Գ. ՄՈՒԻԿՅԱՆ, գեղանիկական զիրությունների թեկնածու, ԵրԱԿՀԳՀ-ի գործադրի գնումների գեղակալ զիրության գծով,
Հ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ, գեղանիկական զիրությունների թեկնածու, ԵրԱԿՀԳՀ-ի համակարգային նախագծման բաժնի պետ, Վ. Ո. ԲԱՐՍԵՂՅԱՆ,
ԵրԱԿՀԳՀ-ի կիրառական ծրագրային ապահովման մշակման բաժնի պետ,
Լ. Գ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, ԵրԱԿՀԳՀ-ի ցանցային և կիրառական ծրագրային ապահովման մշակման բաժնի պետ

21-րդ դարի սկիզբը բնութագրվում է մարդու կենսագործունեության բոլոր բնագավառներում ավտոմատացման համար անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների համընդիանուր ներդրմանը և կիրառմամբ:

Մարդկությունը մեծ արագությամբ շարժվում է դեպի տեղեկության հասարակություն, և այն երկիրը, որը դա հաշվի չի առնում, կարող է անդառնալիորեն հետ մնալ համընդիանուր առաջընթացից:

Այդ գործընթացներում ամրող աշխարհում առաջնահերթ տեղ է հատկացվում պետության և նրա գինված ուժերի կառավարման ավտոմատացման հարցերին:

«Տեղեկության սպառնալիք», «տեղեկության գենը» և «տեղեկության պատերազմ» հասկացություններն արդեն հաստատուն տեղ են զբաղեցրել միջազետական հարաբերությունների բառացանկում: Միջազետական հակամարտություններում, այդ բվում՝ պատերազմներում, մասնակից բոլոր կողմերն էլ աստիճանաբար սկսում են օգտագործել տեղեկատվական դաշտը և նրանով ընձեռվող հնարավորությունները:

Ուազմական կառավարման և կապի այն համակարգերը, որոնցում կիրառվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, իրենց նշանակությամբ հավասարեցվում են ամենահզոր տեսակի գեներերին: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի ԶՈՒ-ի կառավարման ավտոմատացված համակարգի (ԶՈՒԿԱՀ) գործառության ալգորիթմները, խնդիրների դրվագը և տեղեկության պարունակությունը մշակվել են ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտարի դեկանարդության, պաշտպանության նախարարության և Գլխավոր շտարի վարչությունների ու քաղաքացիության անմիջական մասնակցությամբ: Ըստ որում, շատ կարևոր է այն հանգամանքը, որ այս հարցում ռազմական մասնակետների մասնակցության աստիճանն ու դերը մեծացել են համակարգի զարգացմանը և լուծվող խնդիրների շրջանակի ընդլայնմանը գուգընթաց:

ԶՈՒԿԱՀ-ն ԶՈՒ-ի կազմականացնելու համար կառուցվածքին համանման կառուցվածքը ունեցող տարածքային աստիճանակարգության բազմաօրյեկտ ավտոմատացված համակարգ է, որի օբյեկտները գինված են համակարգչային ու կապի ժամանակակից միջոցներով և տեղեկույթը փոխանակում են ՀՀ պաշտպանության

նախարարության տեղեկույթի փոխանակման գերատեսչական համալիրի (ՏՓՀ) կապուղիներով:

ԶՈՒԿԱՀ-ի տրամաբանական սխեման ըստ կառավարման 10 աստիճանակարգային մակարդակների բերված է նկ. 1-ում: Այստեղ կատարված են հետևյալ նշագրումները.

–ՀԿ՝ իրամանատարական կետ,

–ԿՀԿ՝ կենտրոնական ՀԿ,

–ԳՀԿ՝ գլխավոր ՀԿ:

ԶՈՒԿԱՀ-ի օբյեկտների համար մշակված են ավտոմատացման միջոցների համալիրներ՝ որպես տեղային հաշվողական ցանցեր, որոնց աշխատանքային տեղերի քանակը կարող է փոփոխվել մի քանի տասնյակից (Գ.Ը ԿՀԿ-ի համար) մինչև մեկի (ստորին մակարդակների ՀԿ-ների համար):

ԶՈՒԿԱՀ-ն նախատեսված է ԶՈՒ-ի կառավարման խնդիրների օպերատիվ, հուսալի և զաղտնի ավտոմատացված լրացման համար ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ պատերազմական շրջանում:

ԶՈՒԿԱՀ-ն կատարում է հետևյալ հիմնական գործառույթները.

–լներացիկ իրադրության, զինված ուժերի և ռազմական տեխնիկայի ու միջոցների փիճակի, մարտակազմի, տեղաբաշխման, մարտական պատրաստության աստիճանի մասին տեղեկույթի հավաքում, մշակում և արտապատկերում,

–մարտական գործողությունների (զորավարժությունների, վարժանքների) օպերատիվ պլանավորման համար անհրաժեշտ տեղեկույթի նախապատրաստում և պլանի համապատասխան հատվածների հաղորդում համակարգի յուրաքանչյուր օրյեկտին,

–տեղեկույթի տրամադրում համակարգի օպերատիվ անձնակազմին՝ իրադրության վերլուծության և տարբեր իրավիճակներում ԶՈՒ-ի կառավարման համապատասխան որոշումներ կայացնելու համար,

– ԶՈՒ-ի կառավարման ապահովում մարտական կառավարման հրամանների ձևավորման, ենթակա օբյեկտներին ցրման և նրանցից համապատասխան գեկույցների ստացման միջոցով:

Նշված գործառույթներից բացի, ԶՈՒԿԱՀ-ն ապահովում է՝

–համակարգում մշակվող տեղեկույթի (այդ բվում՝ մարտական գործողությունների պլանների և ԶՈՒ-երի իրական կառուցվածքի) պաշտպանությունը և անվտանգությունը, ներառյալ՝ ՏՓՀ կապուղիներով փոխանցվող տվյալների ծածկագրումը,

–տեղեկույթի մշակման, պահպանման, արտապատկերման և փոխանցման համակարգի տեխնիկական առաջադրանքով սահմանվող ժամանակահավաքանականային պահանջների կատարումը,

–համակարգի կենսունակության և աշխատունակության պահպանումը ԶՈՒ-ի կազմիաստիքային կառուցվածքի, մարտակազմի և տեղաբաշխման փոփոխման, ինչպես նաև տարբեր վերային իրավիճակների ստեղծման դեպքում:

ԶՈՒԿԱՀ-ում շրջանառում և մշակվում են հետևյալ տիպի տվյալները.

–ձևայնացված կարծ հաղորդագրությունները (հրամաններ, հրամանների ստացման հաստատումներ, հրամանների կատարման ընթացքի և արդյունքների մասին գեկույցներ),

Մակարդակ	ԶՈՒԿԱՀ-ի օբյեկտներ	Հրամանատարական կետեր
1		գ.գ.ՀԿ
2		գ.Ը ԿՀԿ
3		գորատեսակների մակարդակի ԳՀԿ-ներ
4		գորամիավորումների մակարդակի ԳՀԿ-ներ
5		միավորումների ՀԿ-ներ
6		գորամասերի ՀԿ-ներ
7		գորամասերի կազմի մեջ մտնող գումարտակների (դիվիզիոնների) ՀԿ-ներ
8		վաշտերի ՀԿ-ներ
9		դասակաների ՀԿ-ներ
10		ջոկերի (հաշվարկների) ՀԿ-ներ

Նկ. 1. ԶՈՒԿԱՀ-ի տրամաբանական սխեման

–ձևայնացված երկար գեկույցներ՝ ՀՀ ԶՈՒ-ում ընդունված ձևերով և տրաֆարետներով, որոնք պարունակում են տվյալներ օբյեկտների մարտակազմի, տեղաբաշխման, պատրաստության աստիճանի, օպերատիվ իրավիճակի, հակառակորդի մասին և այլն,

–ազատ բովանդակությամբ և ծավալով չձևայնացված տեղեկույթ (կարգադրություններ, նամակներ, հրահանգներ, զանազան տեքստեր):

Նշված տիպի հաղորդագրություններով ձևավորվում և պահպում են ԶՈՒԿԱՀ-ի օպերատիվ տվյալների բազաները և չձևայնացված տեղեկույթի արխիվներն ու գրանցամատյանները:

ԶՈՒԿԱՀ-ի ելքային տեղեկույթը ներառում է.

- ձևայնացված հաղորդագրությունների համակարգային և ենթահամակարգային ցուցակներ,
 - սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՍՈ-Տ) ու ռազմատեխնիկական գույքի (Ը-ՏԳ) տեսակների դասակարգիչներ,
 - համակարգում օգտագործվող տեղեկատվական օբյեկտների և պարամետրների աստրիբուտների պայմանական և իրական անվանումների կողեր,
 - համակարգի օբյեկտները տարրեր աստիճանի մարտական պատրաստության քերման միջոցառումների պլաններ,
 - մարտական հերթապահության տեղեկաբարտեր,
 - էլեկտրոնային քարտեզներ,
 - համակարգի կենսունակությունն ապահովող և այլ տվյալներ պարունակող ենթահամակարգեր:

ԶՈՒՄԱՀ-ի օպերատիվ տվյալների բազաները և ելքային տեղեկությային զանգվածները, այդ թվում՝ համակարգի կազմհաստիքային կառուցվածքը, բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ մարտական և վարժական:

Համակարգի ամբողջ տեղեկությանին բազան ունի տարածքային բաշխվածություն, ընդ որում, կառավարման միևնույն աստիճանակարգային ճյուղի օրյեկտների բազաները տեղադրված են ներքեւից վերև, այսինքն՝ յուրաքանչյուր օրյեկտ պարունակում է իր և իր բոլոր ենթակա օրյեկտների բազաները:

Տեղեկույթի այսպիսի բազմակի կրկնօրինակումը հնարավորություն է տալիս ճշշտ և ժամանակին կատարելու աղավաղված բազմաերի վերականգնումը հատուկ մշակված ծրագրային մեխանիզմների կիրառմամբ:

ԶՈՒԿԱՀ-ի կառավարումը կարող է իրագործվել երկու եղանակով:

- կենդրուացված կառավարման վերին մակարդակի օրյեկտներից,
 - ապակենդրուացված առանձին գորատեսակների (վարչությունների) գլխավոր հրանանատարական կետերից:

ԶՈՒՄԱՀ-ի օրենսդրության մեջ նշանակված կարող է կատարվել հասցեափորման հետևյալ տարրերակներով.

- շրջաբերական,
 - ընտրողական,
 - ընտրողական-շրջաբերական,
 - ըստ ցուցակի,
 - բազմահասցեանոց,
 - կոնկրետ օբյեկտի՝ առանց նրա վերադաս օբյեկտներին ծանուցելու:

Նշենք ՉՈՒԿԱԾ-ի հրամանների և կարծ գեկույցների կիրառման որոշ առանձ-նահատկություններ.

1. համակարգում կիրառվող հրամանները ամփոփված են երկու տարբեր ցուցակներում՝
–կենտրոնական հրամաններ,

– Ենթահամակարգային հրամաններ:

Ընդ որում, բացի անվանում ունեցող հրամաններից, համակարգում կարող են տրվել նաև համարակալված հրամաններ, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր ենթահամակարգի համար օպերատիվ կերպով ստեղծելու հրամանների ուրույն ցուցակ,

2. օրյեկտների կողմից տրվող հրամանը հասցեատիրոջը (հասցեատերերին) հասցվում է համաձայն կառավարման այն սկզբունքների, որոնք ընդունված են ՀՈՒ-ում,

3. օրյեկտներից ներկայացվող գեկույցները հասնում են կառավարման օրյեկտներ,

4. կառավարման ճյուղի միջանկյալ օրյեկտները անհրաժեշտության դեպքում կարող են կրկնել վերադաս օրյեկտների կողմից տրված հրամանները,

5. կառավարման ճյուղի ցանկացած օրյեկտ կարող է գեկուցել ենթակա օրյեկտների փոխարեն,

6. համակարգում հնարավորություն կա դադարեցնելու ցանկացած հրամանի կատարումը,

7. համակարգի վերին մակարդակի օրյեկտները կարող են արգելել ենթակա օրյեկտների կառավարումը միջանկյալ օրյեկտների կողմից,

8. համակարգում շրջանառող հաղորդագրությունների միջև կարող են լինել անհամատեղելիության և փոխադարձ բացասման հարաբերություններ, եթե օրյեկտի ստացած նոր հաղորդագրությունը պահանջում է վերացնել որոշ նախկին հաղորդագրություններ: Սույն հանգամանքը հաշվի է առնելու տվյալների բազաների օպերատիվ վարման խնդիրներում:

ԶՈՒԿԱՀ-ի ֆունկցիոնալ կիրառական խնդիրների լուծումը կատարվում է տեղեկույթի մշակման հետևյալ տրակտներում.

1. հրամանարկվական պրակտիկ՝

– մարտական կառավարման հրամանների ձևավորում ու հաղորդում ենթակա օրյեկտներին,

– հրամանների ստացման հաստատումների ձևավորում ու հաղորդում վերադաս օրյեկտներին,

– մարտական կառավարման հրամանների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ գեկույցների ձևավորում ու հաղորդում վերադաս օրյեկտներին,

– մարտական կազմի ու թվաքանակի, տեղաբաշխման, պատրաստության աստիճանի, օպերատիվ և օդային իրավիճակների, հակառակորդի մասին և այլ անհրաժեշտ տվյալներ պարունակող գեկույցների ձևավորում ու հաղորդում վերադաս օրյեկտներին,

– հրամանների, հրամանների հաստատումների ու գեկույցների հաղորդման և ստացման մասին տեղեկանքների ձևավորում,

– հրամանի էլեկտրոնային ստորագրում վերադաս օրյեկտի հրամանատարի կողմից,

2. լրեղեկալուսկական լրակը՝

–օպերատորի հարցման՝ տարբեր տեղեկատվություններին վերաբերող տեղեկույթի ձևավորում և ստանդարտ տեղեկանքների տեսքով արտապատկերում,

–մարտական գործողությունների պլանների և այլ ելքային տեղեկույթի ձևավորում, մուտքագրում, ճշգրտում,

–մարտական պատրաստության մի վիճակից մյուսին համակարգի օբյեկտների տեղափոխման ուղղությամբ միջոցառումների պլանների ձևավորում, մուտքագրում, հաստատում, փոխանցում և անցման խնդրի կատարում ու վերահսկում,

–կիրառական խնդիրների լուծում էլեկտրոնային քարտեզների հենքի վրա,

–մարտական հերթապահության վերաբերյալ տեղեկույթի մուտքագրում, մշակում և արտապատկերում, այդ թվում նաև էլեկտրոնային քարտեզների հենքի վրա,

–մարտական առաջադրանքների և խնդիրների ձևավորում, մուտքագրում, հաստատում, փոխանցում ու կատարման գործընթացի վերահսկում,

–ԶՈՒ-ի ՍՈՒ ու Ղ-ՏԳ դասակարգիչների ստեղծում, մուտքագրում և դրանցից օգտվելու մեխանիզմների ձևավորում,

–հակառակորդի մասին հետախուզական գեկույցների հաղորդում ու մշակում,

3. փաստարդերի փոխանակման լրակը՝

–համակարգի օբյեկտների միջև զանազան ձևայնացված և չձևայնացված տերստերի, ամփոփագրերի, որոշումների, հաշվեցուցակային գեկույցների փոխանակում,

4. լրեղեկույթի պաշտպանության լրակը՝

–օպերատորի անձի նույնականացում,

–համակարգի տեղեկույթին և գործառույթներին օպերատորների մուտքի բոլյտվության սահմանում, բաշխում ու իրականացում,

–օբյեկտներում պահպող և փոխանակման համալիրի կապուղիներով փոխանցվող տեղեկույթի ծածկագրում ու վերծանում,

5. լրեղեկույթի գրանցման և փաստագրման լրակը՝

–օբյեկտում շրջանառող բոլոր հաղորդագրությունների, այդ թվում՝ օպերատորների հարցումների, նրանց շրահանգավորված և սխալ գործողությունների, ինչպես նաև համակարգի գործառության խախտումների ու խափանումների փաստերի գրանցում՝ ժամանակագրական կարգով,

–գրանցված տեղեկույթի պահոցների ստեղծում ու վարում,

–տպվող տեղեկույթի փաստագրում ու համապատասխան քարտադարանների ստեղծում,

–համակարգում շրջանառող տեղեկույթի երկարատև պահոցների ստեղծում ու վարում:

Մշակված համակարգը, ավտոմատացման միջոցների համալիրների հետ մեկտեղ, ներդրված է բանակի հուսալի կառավարման համար բավարար թվով օբյեկտներում: Քանի որ համակարգը բարդ բազմագործառութային կառույց է, ապա նրա արդյունավետ օգտագործումը պահանջում է բոլոր մակարդակների հրամանատարների

կողմից նրա խորը և հանգանանալից ուսումնասիրում, այդ բվում՝ համակարգիներով վարժ աշխատելու կարողություն:

Մոտ հեռանկարում անհրաժեշտ է համարվում դիտարկվող համակարգի հետևյալ հնարավորությունների զարգացումը.

1. հրամանատարական կետերից կառավարման համակարգի կատարելագործում,

2. խնդիրների համայիրի ավտոմատացված լուծման, ուզմական գործողությունների արդյունավետ ու հաջող վարձման համար օպերացիաների մոդելավորման զարգացում,

3. կապի համակարգի կատարելագործում ու հետագա զարգացում, ինչը կապահովի ժամանակակից չափանիշներին համապատասխանող, մեծ արագագործությամբ ավտոմատացված կապը Զինված ուժերի տեղաբաշխման և հնարավոր ուզմական գործողությունների ամրող տարածքում,

4. քարտեզների հենքի վրա լուծվող խնդիրների ծավալների և շրջանի ընդլայնում,

5. ԿԱՀ-ի պաշտպանվածության, կենսունակության և հուսալիության բնութագրերի բարելավում և այլն:

Այսպիսով՝ Զինված ուժերում կառավարման ավտոմատացված համակարգի ճիշտ օգտագործումը, ներկա և ապագա պահանջներին համապատասխան նրա զարգացումն ու կատարելագործումը կնպաստեն ԶՈՒ-ի մարտունակության և գործունեության արդյունավետության մեծացմանը:

ЗНАЧЕНИЕ, СТРУКТУРА И КРАТКОЕ ОПИСАНИЕ РАБОТЫ АВТОМАТИЗИРОВАННОЙ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ ВС РА

Р. В. АТОЯН, академик НАН РА, Исполнительный директор ЗАО «Ереванский научно-исследовательский институт систем автоматического управления» (ЕрНИИСАУ), Ю. Г. МОСИКЯН, кандидат технических наук, заместитель по науке исполнительного директора ЕрНИИСАУ, Г. А. МЕЛИКЯН, кандидат технических наук, начальник отдела системного планирования ЕрНИИСАУ,

В. Р. БАРСЕГЯН, начальник отдела разработки прикладного программного обеспечения ЕрНИИСАУ, Л. Г. МЕЛКУМЯН, начальник отдела разработки сетевого и прикладного программного обеспечения ЕрНИИСАУ

РЕЗЮМЕ

Автоматизированная система управления (АСУ) ВС РА предназначена для оперативного, надежного и засекреченного решения задач управления ВС как в мирное, так и военное время.

Логическая структура АСУ ВС содержит десять ступеней управления, для каждой из которых разработаны комплексы систем автоматизации в виде локальных вычислительных сетей, где количество рабочих мест может изменяться от нескольких десятков (Центральный командный пункт (КП) ГШ) до одного (командные пункты нижних уровней).

Основными функциями АСУ ВС являются: сбор, обработка и отображение информации об обстановке, состоянии личного состава, В и ВТ войск, а также данных, необходимых для планирования военных операций и учений, обеспечение управления ВС посредством надежной закодированной передачи приказов подчиненным объектам и получения соответствующих докладов от них. Кроме того, АСУ ВС также обеспечивает: защищенность информации, в том числе—передаваемой по каналам связи, оперативность обработки и передачи данных, сохранение живучести и работоспособности системы в различных аварийных ситуациях.

Управление АСУ ВС может осуществляться как централизованно, так и с КП отдельных войсковых соединений.

Решение функциональных прикладных задач АСУ ВС происходит в информационном и приказном трактах, а также в трактах обмена и регистрации документации, защиты информации и т. д.

Представляется необходимым в ближайшей перспективе усовершенствовать систему управления с КП, развить систему автоматизированного моделирования боевых действий, усовершенствовать систему связи, расширить круг задач, решаемых на картографической основе, повысить надежность, живучесть и защищенность АСУ.

THE SIGNIFICANCE, STRUCTURE AND CONCISE DESCRIPTION OF FUNCTIONING OF THE AUTOMATED CONTROL SYSTEM OF THE RA ARMED FORCES

R. V. ATOYAN, Full Member of the NAS RA, Executive Director of «Yerevan Automated Control Systems Scientific-Research Institute» (YerACSSRI), CJSC,

*Y. G. MOSSIKYAN, Candidate of Technical Sciences, Deputy Executive Director on Science of the YerACSSRI, H. A. MELIKYAN, Candidate of Technical Sciences,
Head of the Hardware Design Department of the YerACSSRI, V. R. BARSEGHYAN,
Head of the Applied Software Development Department of the YerACSSRI,
L. G. MELKUMYAN, Head of the Network and Applied Software Development Department of the YerACSSRI*

SUMMARY

The Automated Control System (ACS) of the RA Armed Forces is intended for the operative, reliable and confidential solution to problems concerning the Armed Forces control, both in peace and wartime.

The logical structure of the Armed Forces ACS contains ten steps of controlling, and complexes of automation systems are elaborated for each of them in the form of local computer networks, where the quantity of workplaces can vary from several tens (the Central command post (CP) of the Main (General) Staff) up to one (command posts of the lower levels).

The basic functions of the Armed Forces ACS are: gathering, processing and display of the information on the situation, state of the personnel, Armament and Defense Technology of the troops, as well as the data necessary for planning military operations and exercises, ensuring the Armed Forces control through a safe coded transfer of orders to subordinate objects and the reception of relevant reports from them. Besides, the Armed Forces ACS also ensures: information se-

curity, including the data transferred through communication channels, efficiency of data processing and transmission, preservation of the persistence and operability of the system in various emergency situations.

The Armed Forces ACS management can be carried out both in a centralized way, and from the Command Posts of separate army units.

The solution to functional applied tasks of the Armed Forces ACS takes place in the informative and order routes, and also in the routes of documents exchange and registration, information protection, etc.

In the nearest perspective it is necessary to improve the control system from the CP, develop the system of automated modelling of combat actions, improve communications system, extend the range of tasks, solved on the cartographic basis, increase reliability, persistence and security of the ACS.

ՀՀ ԶՈՒ-Ի ՍՊԱՌԱՋԻՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԳՏՆՎՈՂ ԶՐԱՀԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Զ. ԴԱԲՐԻՒԵԼՅԱՆ, լիոնգնդապետ, ՀՀ ՊՆ սպառագինուրյան վարչուրյան
զրահաղանձային ծառայուրյան պետի լիոնակալ, Ժ. Հ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
մայոր, ՀՀ ՊՆ միջազգային ռազմական համագործակցության
և պաշտպանական ծրագրերի վարչուրյան ավագ սպա, Հ. Հ. ԿՈՍՏՈՆՅԱՆ
կապիտան, ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական վարչուրյան բաժնի ավագ
սպա, Ա. Հ. ԹՈՒՄՈՆՅԱՆ, լիոնմիկական զիրուրյունների թեկնածու,
«65 ռազմական գործարան» ՓԲԸ-ի լիորեն, Ա. Ա. ԳՅՈՒՐՋՅԱՆ,
«Չարենցավաճի հասլոցաշխական գործարան» ԲԲԸ-ի
լիոնմիկական ծառայուրյան պետ

Ներկայումս ՀՀ ԶՈՒ-ի սպառագինուրյան մեջ գտնվող զրահատեխնիկան (ԶՏ) մշակվել է ԽԵՀՀՄ-ում դեռ 1960-1970-ական թվականներին և նախատեսված է եղել սառը պատերազմի տարիներին լայնածավալ ռազմական գործողությունների վարման համար, հիմնականում՝ եվրոպական հարթավայրային քատերաբեմում: Սակայն վերջին ժամանակների տեղային պատերազմների փորձի հաշվառմամբ ճշգրտումներ են մտցվել ԶՏ մարտական կիրառման գործում, հատկապես՝ լեռնաան-տառային տեղանքում և բնակավայրերում:

Ենելով լայնամասշտար պատերազմների բռնկման քիչ հավանականությունից՝ բազմաթիվ երկրներ իրենց ԶՏ-ն հարմարեցնում են տեղային պատերազմներում կիրառելու համար: Բացառություն չեն և Հայաստանի Հանրապետությունը, որի համար ևս կա հնարավոր տեղային պատերազմի նախապատրաստման խնդիր: Այդ խնդրի լուծման համար պահանջվում է կամ զանգվածային վերագինում, ինչը կապված է հսկայական ֆինանսական ծախսերի հետ, կամ առկա ԶՏ արդիականացում՝ մարտավարատեխնիկական բնութագրերի բարեկամամբ և այդ գործընթացներում հայրենական ծեմնարկությունների հնարավորինս լայն ընդգրկմամբ:

Ավանդաբար ԶՏ հիմնական մարտական հատկանիշներ են համարվում կրակային հզորությունը, պաշտպանվածությունը և տարաշարժությունը:

Կրակային հզորությունը ԶՏ կարողությունն է ուղիղ նշանառության կրակով ոչնչացնելու հակառակորդի դիմակայող միջոցները: Տեխնիկական տեսանկյունից կրակային հզորությունը հիմնականում բնորոշվում է ԶՏ-ի վրա տեղակայված սպառագինուրյան և այն սպասարկող համակարգերի որակով ու քանակով: Այս ոլորտում արդիականացման աշխատանքները պետք է ուղղված լինեն սպառագինուրյան, զինամքերի, կրակի կառավարման համակարգերի կատարելագործմանը, ինչպես նաև դիտարկման ու նշանառման պայմանների բարեկամանը:

Պաշտպանվածությունը ԶՏ կարողությունն է հակառակորդի կրակի (հարվածների) տակ պահպանելու մարտունակությունը, այսինքն՝ դիմակայելու խոցման միջոցների ներգործությանը, ինչը ԶՏ միջոցի անձնակազմին հնարավորություն կտա կատարելու իր մարտական առաջադրանքները: Ներկայումս պաշտպանվածության ապահովման խնդիրը վճռորոշ է դարձել բոլոր տեսակի ՍՈՒ-ների համար: Դա պայ-

մանավորված է այն հանգամանքով, որ վերջին տարիներին զրահապատ օրյեկտների խոցման միջոցները դարձել են բազմազան, կտրուկ աճել են նրանց քանակն ու արդյունավետությունը: ԶՏ-ի դեմ պայքարում կարող են օգտագործվել ոչ միայն հատուկ հակատանկային գեներեր, այլև ընդհանուր նախանշանակման միջոցներ (ավիացիա, հրետանի, ականներ և այլն), որոնք ստացել են ընդգծված զրահահար ուղղվածություն: Այդ պատճառով պաշտպանվածության աստիճանի բարձրացման խնդրի լուծումը որոշակի իմաստով կանխորդում է ՍՈՒ-Տ զարգացման ուղղությունը:

ԶՏ արդիականացման գործում առաջնահերթ խնդիրներից է՝ **լրարաշարժունակյան** ապահովումը, առաջին հերթին՝ մեքենաների դինամիկական հատկությունների բարեկավումը և երթային արագության մեծացումը: Պահանջվում էն մեծ հզորությամբ շարժիչներ, որոնք ունենան լավ շահագործումային հատկություններ, ապահովեն վառելիքի նվազ տեսակարար ծախս և առանց լրացավորման մեծ վազք: Ընդ որում, ուժակայանքը պետք է մեքենայում հնարավորինս քիչ տեղ զրադեցնի: Նշված խնդիրների լուծման պարտադիր նախապայման է ԶՏ-ի մեջ ներկայումս օգտագործվող կարրյուրատորային շարժիչների փոխարինումը դիզելային շարժիչներով:

Այժմ դիտարկենք ՀՀ ԶՈՒ-ի սպառազինության մեջ գտնվող ԶՏ առանձին ննուշների արդիականացման ուղիները վերը նշված մարտական հատկությունների լավացման տեսանկյունից:

Հետևակի մարտական մեքենաներ ԲՄԴ-1, ԲՄԴ-2

Խորհրդային ԲՄԴ-1 և ԲՄԴ-2 մեքենաները ծագվել են միջուկային գենքի կիրառման պայմաններում մոտոհրածգային ստորաբաժնումների գործողությունների վարման անհրաժեշտության հաշվառմամբ, ընդումին կարևոր նշանակություն էր տրվել ջրային արգելքների հաղթահարման պահանջներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր աշխարհագրական տեղանքում մեծ ջրային արգելքներ չկան, առավել օպտիմալ է համարվել ջրային արգելքների հաղթահարման ունակությունը պահպանել միայն հետախուզական մեքենաների համար: Դա հնարավորություն կտա ՀՍՍ-ում ապահովելու լրացուցիչ ազատ տեղ:

Ժամանակակից ավանդական ՀՍՍ-ն ունի մի շարք թերություններ, որոնցից առավել էական է ոչ բավարար զրահապաշտպանությունը: ՀՍՍ-ն խոցելի է ոչ միայն ժամանակակից հակատանկային միջոցների ու հիմնական մարտական տանկերի, այլև ուրիշ ՀՍՍ-ների կրակի համար: Զարմանալի չէ, որ ինչպես խորհրդային, այնպես էլ արտասահմանյան ՀՍՍ-ները կիրառելի չեղան ժամանակակից տեղային գինված հակամարտություններում:

Պաշտպանվածություններ կարող է բարելավվել լրացուցիչ զրահապաշտպանիչ միջոցների կիրառմամբ: Մասնավորապես՝ իրանի կողային մասի և աշտարակի խելային (հետևի) մասի վրա տեղադրվում են լրացուցիչ զրահակրաններ, որոնք մեքենայի կողային պրոյեկցիան պաշտպանում են 12,7 մմ տրամաչափի զրահահար զնդակից՝ 150 մ հեռավորությունից ցանկացած անկյան տակ զնդակումն դեպքում, իսկ հակաականային պաշտպանությունը ուժեղացվում է շարժիչափոխիսադրդային և կառավարման հատվածամասերի հատակները հակաականային տակնոցներով

պաշտպանելու միջոցով: Պաշտպանվածության աստիճանի բարձրացմանը կարող է զգալիորեն նպաստել նաև հրդեհի մարման համակարգի տեղակայումը:

Կրակային հղորությունը: Կրակային միջոցների հարցը անկասկած առավել վիճահարույց հարցերից է, որը կապված է նրա հիմնական գործառույթների հետ: Քանի որ մարտադաշտում ՀՍՍ հիմնական խնդիրներն են հետևակի համար ծառայել որպես պաշտպանված տրանսպորտային, ինչպես նաև կրակային աջակցության միջոց, ՀՍՍ սպառազինությունից պահանջվող կարևորագույն գործառույթներն են.

–քարստոցներից (ապաստարաններից) դրւու կամ ոչ զրահապատ քարստոցներում (ապաստարաններում) գտնվող հակառակորդի հետևակի կամ հակատանկային միջոցների կրակի ճնշումը,

–ամրացված քարստոցներում (ապաստարաններում) և խրամատներում գտնվող հակառակորդի հետևակի կամ հակատանկային միջոցների կրակի ճնշումը,

–իհակառակորդի ոչ զրահապատ տրանսպորտային միջոցների ու քերև զրահապատ մեքենաների խոցումը կամ կրակի ճնշումը,

–ինքնապաշտպանությունը տանկերի կրակից:

Նշված խնդիրների առավել արդյունավետ լուծում կարող է լինել արագածից իրանորդի, նրա հետ զույգված գնդացրի, հակատանկային կառավարվող հրբիուային համալիրի (ՀՏԿՀ) և ավտոմատ նոնականետի համակցումը:

Տարաշարժունությունը: ՀՍՍ պաշտպանվածության և կրակային հղորության բարելավումը բնականաբար կիանգեցնի տարաշարժունության նվազմանը, ինչը հնարավոր է հաղթահարել ընթացամասի արդիականացմամբ և ավելի հզոր շարժիչի տեղակայմամբ:

Ներկայումս ԲՄՊ-1 և ԲՄՊ-2 զրահամեքենաների արդիականացման համար միջազգային շուկայում առաջարկվում են մի շարք տարրերակներ:

Մասնավորապես՝ **ԲՄՊ-1-ն արդիականացնելու** համար հնարավոր է երկու տարրերակ.

առաջին՝

–ԱԳ-17 ավտոմատ նոնականետի տեղակայում,

–9U133U «Կոնկուրս» ՀՏԿՀ տեղակայում,

–ԲՄՊ-2 մեքենայի թրուորի և քարշանիվների տեղադրում,

երկրորդ՝

–ԲՄՊ-2 մեքենայի մարտական հատվածամասի տեղադրում,

–ԲՄՊ-2 մեքենայի թրուորի և քարշանիվների տեղադրում,

–ընթացամասի արդիականացում:

ԲՄՊ-2-ն արդիականացնելու համար առաջարկվում է՝

–ԱԳ-17 ավտոմատ նոնականետի տեղակայում,

–նշանառուի՝ լազերային լուսավորիչով ԲՊԿ-3-42 երկօկուլյար շրջադիտակային համակցված նշանոցի (ԵՇՀՆ) կամ ջերմադիտման մոդուլով ԲՊԿ-Մ նշանոցի տեղակայում,

– իրամանատարի դիտման՝ լազերային ակտիվ-ինքնուլսային լուսափրմանը ՏԿՆ-ԱԻ տանկային համակցված գիշերային սարքի (ՏՀԳ-Ա) տեղակայում,

– մեխանիկ-վարորդի համապիտանի ՊՄՎ սարքի տեղակայում,

– լրացուցիչ սպառագինության կրակի կառավարման համակարգի արդիականացում,

– 360 ձիառու հզորությամբ ՈՒՏԴ-23 շարժիչի տեղադրում,

– լնբացամասի արդիականացում,

– լրացուցիչ զրահապաշտպանության տեղադրում՝ վերը նշված տարրերակով:

Նկատի ունենալով ԲՄՊ-1 և ԲՄՊ-2 մարտական մեքենաների արդիականացման անհրաժեշտությունը՝ նպատակահարմար է օգտվել «Կուրզանմաշզավոր» ԲԲԸ-ի՝ որպես ՀՍՍ-ներ արտադրողի կողմից առաջարկվող լուծումների փարեթից: Դա հնարավորություն կտա խուսափելու մեքենաների արդիականացման հետ կապված հավելյալ ծախսերից: Համայիր արդիականացումից հետո ինչպես ԲՄՊ-1, այնպես էլ ԲՄՊ-2 մեքենաների արդյունավետության և հուսալիության աստիճանը ստանդարտ մեքենաների համեմատությամբ զգալիորեն կրաքարանա: Արդիականացված ՀՍՍ-ն լիովին կիսամապատասխանի թերև զրահապատ մեքենաներին ներկայացվող ժամանակակից պահանջներին և դեռ երկար ժամանակ կլիրառվի բանակում: Կրակային հզորության, պաշտպանվածության և տարաշարժունության զգալի բարելավումը հնարավորություն կտա մարտադաշտում ձեռք թերելու հակառակորդի նկատմամբ որոշակի առավելություն:

ՍԱՈՒ-57Մ ինքնագնաց հրետանային կայանը

ՍԱՈՒ-57Մ ինքնագնաց հրետանային կայանը կազմված է արդիականացված U-60 զենիթային հրանորդից, որը տեղադրված է ԱՏԼԲ քարշակ-փոխադրիչի վրա:

Կայանը նախատեսված է մոտոհրածգային ստորաբաժանումների կազմում օգտագործման, կենդանի ուժի, պաշտպանական կառույցների, հրետանային և ականանետային մարտկոցների ոչնչացման, զրահատեխնիկայի գրոհների հետմղման, հարձակման ժամանակ կրակային աջակցության և ցածրաքիո օբյեկտների խոցման համար:

Կայանը կարող է կրակ վարել ինչպես սարքավորված դիրքերից, այնպես էլ լնբացքից: Կայանը ունի մինչև 60 արկ մարտալրակազմ և կարող է վարել միակի ու ավտոմատ կրակ:

Կայանի հաշվարկը կազմված է 4 մարդուց՝ իրամանատար, նշանառու-հրածիգ, լիցքավորող և մեխանիկ-վարորդ: Կայանը ունի բարձր տարաշարժունություն և մինչև 6 կմ հեռահարությամբ ավտոմատ կրակի վարման հնարավորություն:

57 մմ տրամաչափի հրանորդ տեղադրված է ԱՏԼԲ հարթակի վրա և ունի 360° պտտվելու հնարավորություն, իսկ ուղղահայաց նշանառության անկյունը $-2 + 87^{\circ}$ է: Հրանորդ ծնափոխված է մեկ մարդու կողմից կրակը կառավարելու համար (նշանառություն, թերում, փողի բարձրացում և կրակ):

Մարտալրակազմը տեղադրվում է ԱՏԼԲ-ի թեռնային հատվածամասում. կրակի վարման ժամանակ արկերով պահունակները տեղադրվում են հատուկ հարմա-

թեզված սեղանին, որտեղից լիքրավորող դրանցով մատակարարում է հրանորի ընդունիչը: Քարշակի բեռնային հատվածանատում տեղադրվում են դարակաշար՝ մարտալրակազմի տեղադրման համար և նստոցներ՝ հաշվարկի համար: Արկերով տուփերն ամրակներով ամրացվում են դարակաշարերին:

Ցամաքային և օդային նշանակետերին նշանառությունը կատարվում է համապատասխան օպտիկական սարքերի միջոցով:

ԱՍՈՒ-57-ը սարքավորված է արտաքին և ներքին կապի միջոցներով:

ԲՏԾ-60, ԲՏԾ-60 ՊԲ, ԲՏԾ-70 գրահափոխադրիչներ

Խորհրդային Սիուրյան վիրուզումից հետո ՀՀ Զինված ուժերին բաժին հասած



ԲՏԾ-70 գրահափոխադրիչ

ԲՏԾ-60 և ԲՏԾ-70 գրահափոխադրիչները մշակվել են 1960-ական թվականներին և, ինչպես ՀՍՄ պարագայում, նախատեսված են եղել Եվրոպայում լայնամասշտար պատերազմական գործողություններ վարելու համար: Այս մեքենաների հիմնական թերություններն են ցածր տարաշարժունությունն ու կրակային հզորությունը: Երկու կարրյուրատորային շարժիչների կիրառումը հանգեցնում է բենզինի գերածախսի և, դրա հետ կապված, առանց լրացավորման ընթացապաշարի նվազման: Բացի այդ, պտտող մոմենտի փոքրության պատճառով նվազում է մեքենաների անցունակությունը բարդ ճանապարհային պայմաններում: Զրային արգելվների հաղթահարման սարքավորանքի առկայությունը ևս կարևոր գործոն չէ, քանի որ, ինչպես վերը նշվեց, ամենևին ել անհրաժեշտ չէ ՀՀ և սահմանակից երկրներում կիրառելու դեպքում: Նշված սարքավորանքից հրաժարումը հնարավորություն կտա մեքենայում լրացուցիչ տեղ ազատելու և կիեշտացնի դիմելային շարժիչի տեղադրումը:

Նախքան կրակային հզորության հարցը քննարկելը պետք է հասկանալ ԶՓԴ-ների կիրառման հայեցակարգը: Գոյություն ունեն ԶՓԴ-ների մարտական կիրառման նկատմամբ երկու տարրեր մոտեցումներ: ՆԱՏՕ-ի երկրների մոտեցմամբ՝ ԶՓԴ-ն նախատեսված է բացառապես հետևակային ջոկի անձնակազմը ծավալման

շրջաններ (գրոհի բնագծեր) գրահի պաշտպանությամբ տեղափոխելու համար, քայց նախատեսված չէ այլ մարտական գրահամեքենաների հետ մարտի մեջ մտնելու համար, ուստի և նրա սպառագինությունը սահմանափակվում է ծանր գնդացիրներով և (կամ) ավտոմատ նոնականետներով: Մինչդեռ համաձայն նախկին ԽՍՀՄ-ում և ներկայիս ՌԴ-ում ձևավորված հայեցակարգի՝ ԶՓԴ-ները կարող են ոչ միայն հրաձգային ստորաբաժանումներ (դեսանտ) փոխադրել, այլև, ի հաշիվ հզոր սպառագինության, ապահովել մարտական արդյունավետ կրակային աջակցություն հետևակին: Վերլուծելով տեղային պատերազմների փորձը, ԶՓԴ-ների մարտական հնարավորությունները և դրանք համադրելով ՀՀ ու սահմանակից երկրների տեղանքի առանձնահատկությունների հետ՝ հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ ԶՈՒ-ում ԶՓԴ-ներն ավելի հաճախ կարող են կիրառվել որպես կրակային աջակցության միջոց, քան իրենց առաջնային դերում (անձնակազմ տեղափոխել): Դրանով է, մասնավորապես, բացատրվում այն փաստը, որ, օրինակ, 1-ին և 2-րդ չեղնական պատերազմներում դաշնային հետևակայինները գերադասում էին հարձակման (երթերի) ժամանակ գտնվել ոչ թե ԶՓԴ-ների ներսում, այլ դրանց գրահի վրա: ԶՓԴ-ն անձնակազմին իշեցնելուց հետո, օգտագործելով տեղանքի քողարկիչ հնարավորությունները, հարմար դիրք էր գրադենում և կրակային աջակցություն ցուցաբերում գրոհող հետևակին՝ միաժամանակ մնալով ձեռքի հակատանկային զենքերի հեռահարության սահմաններից դուրս: Պաշտպանությունում ԶՓԴ-ն նույնպես կարող է շատ կարևոր դեր խաղալ՝ նպաստելով պաշտպանության կայունությանը և ծառայելով որպես շարժունակ ռեզերվ: Այս ամենը ավելի արդիական է դառնում մեր պայմաններում, քանի որ տեղանքի անհարությունների հետևանքով կտրուկ նվազում է ՀՏԿՀ-ների և տանկային հրանորների արդյունավետ հեռահարությունը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ԶՓԴ-ների կրակային հզորության բարելավումը արդիականացման ամենավճռորոշ նախապայմաններից է, քանի որ ներկայումս ԲՏԸ-60-ում և ԲՏԸ-70-ում տեղակայված Վաղիմիրովի և Տիխոնմիրովի մեծ տրամաչափի գնդացիրները չեն կարող խցել ՀՍՍ-ների ճակատային գրահը և իրենց թույլ բեկորաֆուզասային գործողության հետևանքով սակավ արդյունավետ են:

ԲՏԸ-60ՊԲ գրահափոխադրիչի արդիականացման ժամանակ կատարվել են հետևյալ աշխատանքները՝

–180 ձիաուժ հզորությամբ երկու բենզինային շարժիչներից կազմված հին հաստիքային ուժակայանքը փոխարինվել է 260 ձիաուժ հզորությամբ ԿԱՍՊԶ-7403 դիգելային շարժիչով,

–երկու բաշխիչ և երկու փոխանցման տուփերի փոխարեն տեղադրվել են մեկ բազմաֆունկցիոնալ փոխանցման տուփ, որը հնարավորություն է տալիս ստանալու համապատասխան քարշային ճիգեր քարշանիվների և ջրանետ շարժասարքի վրա, ինչպես նաև պտտող մոմենտ հաղորդող քարշակման կարապիկին (լերյոդկա),

–արգելակման համակարգում հին մեքենայի մեկլունտորանի սխեմայի փոխարեն կիրառվել է երկկունտորանի սխեման: Կոնտորները աշխատում են միաժամա-

նակ, սակայն մեկ կոնտուրի խափանման դեպքում երկրորդը հուսալիորեն արգելակելու հնարավորություն է տալիս,

–ի տարբերություն իին մեքենայից, արդիականացված մեքենայում տեղադրված է հակահետզորման սարք, որը նախատեսված է 30° զախվերից մեքենան ցած գլորումից պահպանելու, ինչպես նաև մեքենան տեղից առաջ շարժելու նպատակով վարորդի գործողությունների պարզեցման համար:

Արդիականացման շնորհիվ ստացվել է մի մեքենա, որն իր տեխնիկական բնուրագրերով գալիքորեն գերազանցում է ԲՏՌ-60ՊԲ-ը:

ԲՏՌ-70-23Մ զրահափոխադրիչը արդիականացված է այն նույն սկզբունքով, որը կիրառվել է ԲՌԴԴ-2-23Մ զրահապատ հետախուզաքետքային մեքենայի համար:

ՉՓԴ-ի միակ մարտական հատկությունը, որի բարելավումը կապված է լուրջ դժվարությունների հետ, նրա պաշտպանվածությունն է: Դժվարությունները պայմանավորված են մեքենայի քաշի ավելացմամբ: Օրինակ՝ ԲՏՌ-80 զրահափոխադրիչի պաշտպանվածության մեծացումը քվում է անհնարին, քանի որ նա այնքան ծանր է իր նախատիպից՝ ԲՏՌ-60Պ-ից (համապատասխանարար՝ 13,6 և 9,8 տ), որ հեշտությամբ խրվում է փափուկ բնահողերի մեջ: ՈՒստի հիմնականում պետք է ուշադրություն դարձվի հրդեհի մարման սարքավորանքի տեղադրման և հրածգային զենքերի կրակից ու հակահետևակային ականների պայթյունից անիվների պաշտպանության ապահովման հարցին:

Այժմ դիտարկենք ԲՏՌ-60 և ԲՏՌ-70 զրահափոխադրիչների համալիր արդիականացման հեռանկարները:

Տարաշարժունուրյուն: Ուազմական տեխնիկայի համար բենզինային շարժիչի նկատմամբ դիգելյային շարժիչի առավելությունները ակնհայտ են և բոլորին հայտնի: Մեծ հզորության և շահագործման պարզության հետ մեկտեղ դրանք մարտում հրդեհա- և պայթյունանվտանգ են: Բացի այդ, դիգելյային ուժակայանքի կիրառման դեպքում մեքենայի՝ առանց լրացափորման վագրը 500 կմ-ից աճում է մինչև 800 կմ, բարելավվում են քարշային բնուրագրերը փափուկ բնահողերի, լեռնային ճանապարհների վրա և խիստ կտրտված տեղանքում: Տարբեր երկրներում կատարվել են արդիականացման մի շարք աշխատանքներ՝ ուղղված երկու բենզինային շարժիչների փոխարինմանը մեկ դիգելյային շարժիչով: Մասնավորապես՝ «Խարկովի մեքենաշինական կոնստրուկտորական բյուրոն» (ԽՄԿԲ) արդիականացրել է ԲՏՌ-70-ը՝ տեղակայելով 6 գլանանց ՈՒՏԴ-20 շարժիչ: Վառելիքի ծախսի զգալի նվազման հետ մեկտեղ աճել են մեքենայի հզորությունը (230 ձիաուժից հասնելով 300-ի), շարժիչի տեսակարար հզորությունը (20 ձիաուժ/տ-ից՝ 23-ի), առավելագույն պտտող մոմենտը (58 կգ ուժ/մ-ից՝ 100-ի) և ընթացապահարը (400 (560) կմ-ից՝ 600 (840)-ի), նվազել է վառելիքի տեսակարար ծախսը (252 գ/ձիաուժ•ժամ-ից՝ 175-ի): Միևնույն ժամանակ մեքենայի լրիվ զանգվածը 11,5 տ-ից հասել է 13-ի: Արդիականացված մեքենան անցել է պետական փորձարկումներ, և ՈՒկրաինայի ՊՆ-ի նորոգման գործարաններից մեկում կայսվի նրա սերիական արտադրությունը:

Արդիականացման իր տարբերակն է առաջարկում ուսաստանյան ավտոմոբի-

լային «Տեխնոսերվիս» ձեռնարկությունը, որը 90 ծիառութ հզորությամբ երկու բենզինային շարժիչների փոխարեն տեղադրում է մեկ 180 ծիառութ հզորությամբ ՅաՄԶ-236Դ շարժիչ: Նոր դիզելային շարժիչի տեղակայման ժամանակ ձեռնարկությունն ստիպված է եղել լուծելու ԶՓԴ-ի վրա դրա տեղադրման հետ կապված պրոբլեմները. ՅաՄԶ-236 ուժակայանքն ավելի բարձր է, քան բենզինային շարժիչները: Նոր շարժիչի տեղակայման համար փոփոխության է ենթարկվել շարժիչային հատվածամասի բացովի կափարիչը: Վերջինս սարքավորված է օդափոխանակման մեխանիզմով, որը փոխառված է ԲՏԸ-80-ից: Տեղադրված է նաև լրացուցիչ բաշխիչ տուփ (ԼԲՏ), որը շարժիչի պտտող մոմենտը վերաբաշխում է երկու հաստիքային բաշխիչ տուփերի միջև. այդ կերպ բազային մեքենայի ուժային փոխանցումը պահպանվում է իր սկզբնական տեսքով: Արդիականացված ԶՓԴ-ի ուժային փոխանցումը կառուցված է ազրեգատային սկզբունքով: ՈՒժային ազրեգատը (շարժիչ, կցորդիչ, փոխանցումատուփ) և հովացման ազրեգատը (ռադիոստոր և կենտրոնախույս օդափոխիչ) տեղակայված են միասնական շրջանակի վրա և ուժային հատվածամասում տեղաբաշխված են հավաքովի տեսքով: ԼԲՏ-ն իրանի մեջ տեղադրվում է իր կախոցով և փոխանցումատուփի ելքային լիսեռի հետ միանում է միջակա կարդանային լիսեռի միջոցով: ՈՒժային փոխանցման այդպիսի կառուցվածքը հնարավորություն է տվել ոչ միայն առավելագույնս նվազեցնելու իրանի լրածշակումն ու շարժիչային հատվածամասի դասավորվածքի փոփոխությունները, այլև հեշտացնելու շահագործման ժամանակ ուժային բրոկի և դրա առանձին տարրերի փոխարինումը:

Տարաշարժունության բարելավման մեկ այլ տարրերակ իրականացրել է ԶՓԴ-ներ արտադրող «Արզամասի մեքենաշինական գործարան» (ԱՄԳ) ձեռնարկությունը, որը հարթել է ՈՒ-Դ Զինված ուժերի սպառազինության մեջ գտնվող ԲՏԸ-60 և ԲՏԸ-70 գրահափոխադրիչների արդիականացման գծով մրցույթում: Երկու մեքենաներում էլ տեղադրվում է ԿԱՍԱԶ-7403 8 գլանանոց դիզելային շարժիչ, որը բարեւում 2600 պտույտի դեպքում զարգացնում է 260 ծիառութ հզորություն (նմանատիպ ԿԱՍԱԶ-740 շարժիչ իր արդիականացված ԲՏԸ-70Դ մեքենայում տեղադրում է «Ուեմիզել» ՓԲԸ-ն): Դա ապահովում է մինչև 100 կմ/ժ առավելագույն արագություն (բազային ԲՏԸ-60/70-ի արագությունը չի գերազանցում 80 կմ/ժ) և 600 կմ վազքատարածություն՝ առանց լրացուցիչ վառելիքաբերի (բազային ԲՏԸ-60 և ԲՏԸ-70 ԶՓԴ-ների 500 կմ-ի փոխարեն):

Կրակային հզորություն: Տվյալ մարտական հատկանիշի բարելավմանն ուղղված աշխատանքները կենտրոնանում են ԶՓԴ-ների գլխավոր սպառազինությունը՝ 14,5 մմ-ոց ԿՊՎԾ գնդացիրը, ավելի հզոր զենքերով փոխարինելու վրա: Արդեն հիշատակված ԱՄԳ ձեռնարկությունն իր ԲՏԸ-60-ի արդիականացման փաթեթում ընդգրկվել է ԲՏԸ-80-ից փոխառված աշտարակի ԲՊՈՒ-1 համապիտանի նշանոցի տեղադրում (թեպետ նա զինված է նոյն ԿՊՎԾ գնդացրով, սակայն հնարավորություն է տալիս կրակ վարելու ուղղաձիգ նշանառության մինչև 60° անկյուններով՝ բազային ԲՏԸ-60-ի 40°-ի փոխարեն): Դրանով ապահովվում է ցածրացի օրենսդրություն, ինչպես նաև բաղաքային պայմաններում շենքերի վերսի հարկերում դիրքավորված

հակառակորդի դեմ պայքարի հնարավորությունը: Ինչ վերաբերում է ԲՏԾ-70-ի արդիականացմանը, ապա ձեռնարկությունը նրա վրա տեղադրում է ԲՏԾ-80Ա-ից փոխառված ԲՊՊՈՒ աշտարակը, որը զինված է 30 մմ-ոց 2Ա72 հրանոքով: Հրանոքը տեղակայված է հրետասայլի վրա, որն էլ տեղադրվում է աշտարակում: Այսպիսով՝ հրանոքը և նրա հետ գույգված Կալաշնիկովի ՊԿՏ տանկային զնդացիրը դրւու են բերված անձնակազմով զրադեցված մասից, ինչը հնարավորություն է տվել ընդարձակելու աշտարակի տակ գտնվող տարածությունը, բարելավելու նշանառուի աշխատանքի հարմարվետությունը և զիսավորը՝ լուծելու կրակի վարժան ժամանակ անձնակազմով զրադեցված մասում աղմուկի և զագերի տարածման խնդիրները: Հրանոքի և ՊԿՏ գնդացրի ուղղաձիգ նշանառության անկյունը -5° ից մինչև $+70^{\circ}$ է: Ինչպես հրանոքը, այնպես էլ զնդացիրը ունեն պահունակներից ժապավենային լիցքավորում, ընդ որում, հրանոքի լիցքավորումը երկժապավենային է. մի ժապավենը պարունակում է բեկորաֆուզասային և բեկորալուսածրիչ, իսկ մյուսը՝ զրահահարլուսածրիչ արկեր: Լիցքավորման փոխարկումը մեկ ժապավենից մյուսին կատարվում է ակնրարրորեն, ինչը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով խոցելու (ոչնչացնելու) ինչպես հակառակորդի կենդանի ուժը, այնպես էլ զրահապատ նշանակետերն ու կրակակետերը: Հրանոքի մարտարակազմը 300 կրակոց է, իսկ զնդացրին՝ 2000: Կրակի կառավարումը կատարվում է 1Պ3-9 ցերեկային և ՏՊՆ-3-42 գիշերային նշանոցների միջոցով: Ինչպես նշում են ձեռնարկության ներկայացուցիչները, արդիականացված ԲՏԾ-60-ը և ԲՏԾ-70-ը իրենց մարտական և տեխնիկական բնուրագրերով համեմատելի են ԲՏԾ-80-ի հետ:

Այդուհանդերձ, ԲՏԾ-70-ի արդիականացված տարրերակը ունի մի շատ էական բերություն, այն է՝ հրանոքը տեղակայված է աշտարակից դրւու: Այդպիսի տեղակայումը կարելի է համարել ոչ հուսալի, քանի որ մարտի ժամանակ դա կարող է հանգեցնել հրանոքի խափանմանը՝ անգամ եթե դիմունը հրաձգային զնդացներ, և առաջ բերել արտաքին ներգործությունների նկատմամբ (ձյուն, անձքե, աղտոտվածություն) հրանոքի զգայունության կտրուկ աճումը:

ՀՀ ԶՈՒ-Ի ԶՓԴ-ների հավաքակազմի կրակային հղորության արդիականացման մեկ այլ տարրերակ է դրանց վերազինումը ԶՈՒ-23 հրանոքներով, ինչն առ այսօր արվել է սահմանափակ քանակով: Թեպետ պահանջվում են որոշակի կառուցվածքային լրամշակումներ, և ԶՈՒ-23 հրանոքն զգալիորեն զիջում է 2Ա72 հրանոքին այնպիսի կարևոր հատկանիշներով, ինչպիսիք են արդյունավետ կրակի հեռավորությունը (2Ա72-ի համար՝ 2000 մ (զրահատեխնիկայի դեմ) և 4000 մ (կենդանի ուժի դեմ)), ԶՈՒ-23-ի համար՝ 2500 մ) և բեկորաֆուզասային արկում եղած պայքուցիկ նյութի քաշը (համապատասխանաբար՝ 125 և 18 գ), սակայն զերազանցում է այլ կարևոր բնուրագրերով, նաևնավորապես՝ աշտարակում տեղակայման հնարավորությամբ: Բացի այդ, ԶՈՒ-23-ը թեև փոքր տրամաշափի է, այդուհանդերձ ունի մեծ արդյունավետություն ինչպես հետևակի, այնպես էլ թերև զրահապատ մերենաների ոչնչացման առումով և զրահահարլուսածրիչ արկերով կարող է խոցել ԲՏԾ-80-ի ճակատային զրահը:

Պաշտպանվածություն: ԱՄԳ-ի արդիականացրած ԲՏԸ-60-ը և ԲՏԸ-70-ը պաշտպանվածության առումով համարժեք են ԲՏԸ-80-ին, ինչը ձեռք է բերվել առավել կարևոր մասերի լրացուցիչ զրահապաշտպանության, հակահրդեհային սարքավորանքի և գնդակակայուն անվաղողերի կիրառման շնորհիվ: Անվաղողերն ունեն անխուզ կառուցվածք և օժտված են օդի ճնշման կենտրոնացված կարգավորման համակարգով, ԶՓԴ-ին հնարավորություն են տալիս ինչպես գնդակներից, այնպես էլ հակահետևակային ականների պայթյունից ստացված վնասվածքների դեպքում շարունակելու շարժումը և կատարելու մարտական առաջադրանքը մինչև 20 կմ/ժ արագությամբ ու 200 կմ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

Այսպիսով՝ հանգում ենք այն եզրակացության, որ ԲՏԸ-60 և ԲՏԸ-70 ԶՓԴ-ների արդիականացման լավագույն փաթեթ առաջարկում է ռուսաստանյան ԱՄԳ ձեռնարկությունը: Շարժիչի լավագույն տարրերակն է ՅաՄԶ-236-ը, որը հուսալի է և շահագործման մեջ պարզ, իսկ 2Մ72 հրանորդ ամենաարդյունավետ կրակային միջոցն է: Ընդ որում, պետք է վերացնել արդեն իսկ արդիականացված ԲՏԸ-70Դ մերենաների շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները և լրամշակել կառուցվածքը: Միևնույն ժամանակ պետք է ուսումնասիրվի կրակային հզորության մեծացման այնպիսի լուծումների կիրառումը, ինչպիսին է, օրինակ, աշտարակում գույզված ԶՈՒ-23 հրանորդների կամ 2Մ72 (2Մ42) հրանորդների տեղակայման հնարավորությունը:

ԲՈՂՄ-2 զրահապատ հետախուզագիտքային մեքենա (ԶՀԴՄ)

ԶՀԴՄ-ները խորհրդային սպառազինության մեջ են ընդունվել 1962 թ.: Ի տարբերություն ՀՍՍ-ներից և ԶՓԴ-ներից, ԶՀԴՄ-ին ներկայացվող կարևոր պահանջներից է ջրային արգելվներն ինքնուրույնաբար հաղթահարելու կարողությունը, այդ պատճառով ՀՀ ԶՈՒ-ում առկա ԲՈՂՄ-2 մեքենաների արդիականացման հարցում պարտադիր նախապայման պետք է լինի տվյալ սարքափորանքի պահպանումը:

Ինչ վերաբերում է ԲՈՂՄ-2 մեքենայի մարտական հատկությունների բարեկավմանը, ապա նոր ինչպես կրակային հզորությունը (ԲՊՈՒ-1 աշտարակ՝ ԿՊՎՏ և ՊԿՏ գնդացիրներով), այնպես էլ պաշտպանվածությունը (պաշտպանություն գնդակներից) մեքենայի առջև դրվող խնդիրների կատարման համար քիչ թե շատ բավարար են համարվում: ՈՒստի արդիականացման աշխատանքները պետք է ուղղվեն տարաշարժունության բարեկավմանը:

Արդեն հիշատակված ԱՄԳ ձեռնարկությունը ԲՈՂՄ-2 մեքենայի արդիականացման իր տարրերակում բազային 140 ձիառութ հզորությամբ կարբյուրատորային ԳԱԶ-41 շարժիչի փոխարեն տեղադրութ է 136 ձիառութ հզորությամբ դիզելային Դ-2459 շարժիչ, ինչի շնորհիվ առում են մեքենայի առավելագույն արագությունը և ընթացապաշարը: Արդիականացված մեքենան, որը Ո-Դ ԶՈՒ-ում ստացել է ԲՈՂՄ-2Մ անվանումը, ունի նաև նոր գնդակակայուն անվարդեր, լրացուցիչ զրահապաշտպանություն, ցանքային ուղեվարական «Գ-ամմա-1» կամ «Գ-ամմա-2» համակարգ և Ո-168-35ՈՒ կամ Ո-173 ռադիոկայան (բազային Ո-123-ի փոխարեն): Մեքենայում կարող է տեղադրվել նաև ջրային արգելվների հաղթահարման ԲՏԸ-80-ից փոխառված համակարգը:

ԲՈՂՄ-2-23Մ զրահապատ հետախուզադետքային մեքենա

ԲՈՂՄ-2-23Մ մեքենան արդիականացված աշտարակով ԶՀԴՄ է, որում 14,5-մմ ԿՊՎՏ և 7,62-մմ ՊԿՏ գնդացիրների փոխարեն տեղակայված է 23 մմ տրամաչափի 2Ս14 ավտոմատ հրանոր: Մեքենայի կրակային հզորության աստիճանի բարձրացումը (ուժեղացումը) հնարավորություն է տալիս, բացի հիմնական գործա-

ՀԱՍԵՍՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԱԳՐԵՐ

Հ/հ	Անվանումը, չափման միավորը	Բազային ԲՈՂՄ-2	ԽՄԿԲ-ի արդիականացված ԲՈՂՄ-2
1	Շարժիչի անվանումը	Գ.ԱԶ-41	ՍՍԴ-21-082
2	Շարժիչի տեսակը	Կարբյուրատորային	Դիգելային
3	Շարժիչի տեսակարար հզորությունը, ձիառուժ	140	145
4	Օգտագործվող վառելիքը	Քենաչն Ա-76	Դիգ. վառելիք
5	Վառելիքի տեսակարար ծախսը, գ/ձիառուժ-ժ	250	165
6	Առավելագույն պտտող մոմենտը, կգ.ուժ/մ	36	60
7	Շարժիչի շահագործման ռեսուրսը, ժամ	4000	6000
8	Առավելագույն արագությունը, կմ/ժ	95	95
9	Լողալու արագությունը, կմ/ժ	10	10
10	Միջին արագությունը, կմ/ժ	55	60
11	Ընթացապաշարը, կմ/ժ	750	1000
12	Լողապաշարը, կմ/ժ	14-16	18-20
13	Շարժիչի տեխսպասարկման պարբերությունը՝ SU-1, ժամ SU-2, ժամ	20 60	60 240
14	Մեքենայի երկարությունը, մմ	5750	6100
15	Մեքենայի զանգվածը, կգ	7000	7900

Ույրեներից, նաև արյունավետ կերպով պայքարելու թերևն զրահապատ մարտական տեխնիկայի դեմ, ճնշելու հրետանային և ականանետային մարտկոցները և պաշտպանական կառույցները, խոցելու ցածրաբիո օբյեկտները մինչև 2500 մ հեռավորության վրա:

Մարտական հատվածամասը զրահապատ աշտարակ է, որի ներսում տեղադրված է 23 մմ տրամաչափի 2Ս14 ավտոմատ հրանոր: Աշտարակից կախված է կարուել, որի վրա տեղադրված են 200 փամփուշտով պահատուի, պարկուճատուի և նշանառուի նստոցը:

Պահատուիքի թկանցքի վրա հավաքակցված է ուղեսարքվածք (տրակտ)՝ լիցքավորված ժապավենի մատուցման համար:

Վառողային գազերի հեռացման համար աշտարակի վերին մասում տեղակայված է օդափոխիչ:

Ուղղահայաց նշանառության անկյունը $-5 +35^{\circ}$ է, իսկ հորիզոնականը՝ 360° :

Կրակը վարդում է 23 մմ բեկորաֆուզային հրկիզող, բեկորաֆուզային հրկիզող-լուսաձրիչ և գրահահար հրկիզող-լուսաձրիչ արկերով:

ՈՒկրաինական ԽՄԿԲ ծեռնարկությունը նույնականացնելու համարել է ԲՌԴԱ-2 մեքենայի արդիականացում: Այդ ծեռնարկությունը տեղադրել է ՍՍԴ-21-08 դիզելային շարժիչ, որը հնարավորություն է տվել զգային բարելավելու մեքենայի տարաշարժունության բնուրագրերը, ընդ որում՝

–Վառելիքի ծախսի զգային նվազման հաշվին 25 %-ով ավելացել է մեքենայի ընթացապաշարը՝ առանց վառելիքի ծավալի ավելացման,

–շարժիչի պտտող մոմենտի 1,7 անգամ աճման հաշվին մեծացել է մեքենայի անցունակությունը դժվարանցանելի ճանապարհային պայմաններում,

–1,5 անգամ մեծացել է մեքենայի շարժիչի շահագործման ժամկետը,

–3-4 անգամ մեծացել է ուժակայանքի տեխսպասարկման պարբերությունը:

ПУТИ МОДЕРНИЗАЦИИ БРОНЕТАНКОВОЙ ТЕХНИКИ ВС РА

Յ. Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, подполковник, заместитель начальника бронетанковой службы

Управления вооружения МО РА, Ժ. Ա. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ, майор, старший офицер Управления международного военного сотрудничества и оборонных программ МО РА,

Օ. Գ. КОСТАНՅԱՆ, капитан, старший офицер отдела Военно-промышленного управления МО РА, Բ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, кандидат технических наук, директор ЗАО «Военный завод 65», Ա. Ա. ԳՅՈՒՐՋՅԱՆ, начальник технической службы ОАО «Чаренцаванский станкостроительный завод»

РЕЗЮМЕ

Бронетехника, состоящая на вооружении армии РА, в большинстве своем разработана в 60-ые годы и требует усовершенствования ТТХ. Работы по модернизации БМП-1, БМП-2, БТР-60, БТР-70 ведутся в направлении улучшения основных характеристик машин: огневой мощи, защищенности и маневренности.

Основным направлением модернизации бронетехники является замена карбюраторных двигателей дизельными, что позволяет значительно уменьшить расход топлива и увеличить крутящий момент двигателя при сохранении мощности. Некоторое утяжеление машин, связанное с дополнительным бронированием и заменой огневых средств на более мощные, частично компенсируется исключением бортового оборудования, предназначенного для форсирования водных преград, не являющегося необходимым с учетом географических особенностей региона.

THE WAYS TO MODERNIZE THE ARMOURED HARDWARE OF THE RA ARMED FORCES

Z. M. GABRIELYAN, Lieutenant-Colonel, Deputy Chief of the Armoured Service of the Board of Armament of the MoD, RA, Zh. H. AMIRKHANYAN, Major, Senior Officer of the Board of the International Military Cooperation and Defense Programs of the MoD, RA, H. H. KOSTANYAN, Captain, Senior Officer of the Department of the Military-Industrial Board of the MoD, RA, R. H. TUMANYAN, Candidate of Technical Sciences, Director of the CJSC «65 Munitions Factory», A. A. GYURDJYAN, Chief of the Maintenance of the Public Corporation «Charentsavan Machine-Tool Factory»

SUMMARY

The armoured hardware, which is at arming in the RA Armed Forces, is mainly developed in 1960s and its performance characteristics need improvement. The activities on modernizing the IFV-1 (infantry fighting vehicle), IFV-2, APC-60 (armoured personnel carrier), APC-70 are carried on in the direction of improving basic characteristics of vehicles: fire power, protectability and manoeuvrability.

The mainstream of the armoured hardware modernization is the replacement of carburettor engines by diesel ones, which allows to greatly cut down fuel consumption and increase engine rotational moment at power preservation. Some weighting of vehicles, connected with the supplementary armouring and the change of fire means for more high-powered ones, is partially compensated with the elimination of board equipment meant for the forcing of water barriers, which is not necessary if taking into account the geographical peculiarities of the region.

**ԵՐԵՎԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

գ. թ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը (ԵրՍՄԳՀԻ) ստեղծվել է 1956 թ.՝ ԽՍԿԿ ԿԿ և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1955 թ. նոյեմբերի 11-ի հմ. 897 որոշման և ԽՍՀՄ ավտոմատացման և սարքաշինության նախարարության 1956 թ. օգոստոսի 14-ի հմ. 129 իրամանի համաձայն:

Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը (ԵրՍՄԳՀԻ) ստեղծվել է 1956 թ.՝ ԽՍԿԿ ԿԿ և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1955 թ. նոյեմբերի 11-ի հմ. 897 որոշման և ԽՍՀՄ ավտոմատացման և սարքաշինության նախարարության 1956 թ. օգոստոսի 14-ի հմ. 129 իրամանի համաձայն:

Մինչև 1993 թ. ինստիտուտը կատարում էր գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ (ԳՀՓԿԱ-ներ) հետևյալ ուղղություններով.

1. համապիտանի և հատուկ նախանշանակման էլեկտրոնային հաշվողական մեքենաների (ԷՀՄ) և ծրագրային ապահովման մշակում ու ներդրում արտադրության մեջ,

2. ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով հատուկ նախանշանակման ապարատաձրագրային համալիրների, կառավարման ավտոմատացված համակարգերի նախագծում՝ դառնալով ԽՍՀՄ-ում այդ բնագավառի գլխամասային ձեռնարկություն,

3. ԷՀՄ-ի օպերատիվ հիշողության սարքերի, սնուցման երկրորդային աղբյուրների և այլ սարքավորանքի մշակում ու արտադրության կազմակերպում:

Ինստիտուտում մշակված սարքերի, համալիրների փորձնական նմուշների և գլխամասային խմբաքանակի արտադրությունն ապահովելու համար 1960 թ. ստեղծվեց ինստիտուտին կից փորձարարական գործարան:

1992 թ. ԵրՍՄԳՀԻ-ի մի քանի ստորաբաժնումների հիմքի վրա ստեղծվեց Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտը (ներկայում՝ «ԵրԱՎՀԳՀԻ» ՓԲԸ): Նոյն թվականին ինստիտուտի փորձարարական գործարանը վերակազմավորվեց առանձին ձեռնարկության (ներկայում՝ «ԵրՍՄԳ» ՓԲԸ): 2000 թ. ԵրՍՄԳՀԻ-ն վերակազմավորվեց փակ բաժնետիրական ընկերության: Հայաստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության կառավարությունների 2002 թ. հունիսի 17-ի Համաձայնագրի և 2002 թ. նոյեմբերի 5-ի արձանագրության համաձայն՝ «ԵրՍՄԳՀԻ» ՓԲԸ-ի բաժնետոմսների 100 %-ը հանձնվեց Ռուսաստանի Դաշնությանը:

ՈՒնենալով համապատասխան աշխատանքների կատարման բազմամյա փորձ՝ ինստիտուտը ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերների կատարմանը, մասնավորապես, նորոգվեցին, վերականգնվեցին և մարտական հերթափոխի դրվեցին հատուկ նախանշանակման կարևոր ռազմատեխնիկական համալիրներ:

Ներկայումս ձեռնարկությունն աշխատանքներ է կատարում ՀՀ պետական վերուժ, ինչպես նաև տարբեր նախարարությունների, գերատեսչությունների և

իրավաբանական անձանց, այդ բվում՝ արտասահմանյան կազմակերպությունների, պատվերներով։ Կատարվող աշխատանքների ոլորտը բազմազան է և ընդգրկում է ինչպես հանրապետության պաշտպանունակության ու անվտանգության ապահովման, այնպես էլ էներգետիկայի, տցիալական, բանկային և այլ ոլորտներ։ Մշակումները ներառում են տեղեկատվական տեխնոլոգիաների գրեթե ամբողջ սպեկտրը։ Ինստիտուտի աշխատանքներում լայնորեն կիրառվում են միկրոէլեկտրոնային նորագոյն տարրեր, ժամանակակից օպերացիոն միջավայրներ, ծրագրավորման և նախագծման արդյունավետ գործիքային միջոցներ։

Աշխատանքների բարձր մակարդակով կատարմանը մեծապես նպաստում է այս հանգամանքը, որ ճեղնարկություննում գործում են մշակման, արտադրման և շահագործման ուղեկցման համար անհրաժեշտ բոլոր ծառայությունները։

Պաշտպանության նախարարության պատվերներով կատարվող աշխատանքները կազմում են ճեղնարկության գործունեության գերակշիռ մասը և վերահսկվում են զինվորական ներկայացուցչության կողմից։ Այդ աշխատանքներն ընթանում են հետևյալ ուղղություններով։

–ուղղութեանիկական և ուղղութեղորոշումային, իրետանու կրակի կառավարման համալիրների կառավարման ավտոմատացված համակարգերի մշակում,

–տիպային ավտոմատացման շարժական և ստացիոնար միջոցների մշակում,

–տեղեկատվական-վերլուծական համակարգերի մշակում,

–հատուկ նախանշանակման սարքերի ու սարքավորանքի մշակում և բողարկում,

–վարժաարքային համալիրների մշակում և բողարկում,

–համապատասխան ռազմական տեխնիկայի արդիականացում։

Այս ուղղություններով ստեղծված և ներդրված հասուկ միջոցներից հարկ է նշել հետևյալ համակարգերը։

–հատուկ նախանշանակման համակարգը, որն ապահովում է տարրեր աղբյուրներից ստացված տեղեկույթի մշակում, դասակարգում և տվյալների շտեմարաններում գրանցում,

–իրետանու կրակի կառավարման ավտոմատացված համալիրը, որը նախատեսված է իրետանային դիվիզիոնի հրամանատարաշտաբային մերենայի արդիականացման համար՝ հեռակողային կապի ապահովման հնարավորությամբ,

–տեղեկույթի հավաքման և մշակման կառավարման ավտոմատացված համակարգը, որը կատարում է օդային օբյեկտների վերաբերյալ տարածայնորեն բաշխված տարրեր ուղղութեղորոշումային կայաններից ստացվող տեղեկույթի երկրորդային և երրորդային մշակում, թիրախների հայտնաբերում և ընդհանրացված տեղեկույթի տրամադրում օգտագործողներին,



–ուղղութեանիկական կայանների արդիականացված համալիրը, որը նախատեսված է ինքնարիոնների կողային ուղղութեղորոշումային կայանների հայտնաբերման համար, մշակվել է ժամանակակից տեխնիկական ու ծրագրային միջոցների կիրառմամբ և զգայիրեն ընդլայնում է այդ կայանների հնարավորությունները,

–կառավարման ավտոմատացված համալիրները, որոնք ապահովում են երերի

անընդմեջ մշտագննում, ստացված տեղեկույթի ավտոմատ մշակում, գրանցում և դասակարգում,

–հաղորդակցային սարքավորանքի համալիրը, որը կազմված է տվյալների հաղորդման բազմակապուղի սարքից և էլեկտրոնային հաշվողական մեքենայից,

–կարճակիք տիրույթում աշխատող ռադիոհաղորդիչների հայտնաբերման և տեղորշման կայանների արդիականացման համալիրը, որը մշակվել է ժամանակակից տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների կիրառմամբ և զգային ընդլայնում է կայանների հնարավորությունները,



Տեղեկույթի ծածկագրային պաշտպանության ապարատաձրագրային համալիրներ

–տեղեկույթի ծածկագրային պաշտպանության ապարատաձրագրային համալիրները, որոնք ապահովում են երաշխավորված կայունություն, հավաստագրված են և լայնորեն օգտագործվում են ՀՀ պետական կառույցներում,

–խոսակցային տեղեկույթի ծածկագրման ապարատների շարքը, որը նախատեսված է երկար և քառակա կապի գծերով հեռախոսային ցանցերում փոխանակվող տեղեկույթի երաշխավորված պաշտպանության համար՝ բարձր որակի պարզուցության ապահովմամբ,

–թվային ծայնագրման բազմակապուղի սարքը, որը նախատեսված է հեռախոսագծերից, ռադիո- և ռադիոռելեային կայանների ցածր հաճախականային ելքերից ստացվող ծայնային տեղեկույթի գրանցման համար՝ ապահովելով կապուղիների վիճակի և դրանց ակտիվության օրյեկտիվ վերահսկողությունը,

–վարժասարքային համալիրը, որը նախատեսված է հակատանկային հրթուային համալիրների արձակման սարքերի օպերատորների պատրաստման համար,

–վարժասարքային համալիրը, որը նախատեսված է գենիբահրիուային համալիրի հրածակների պատրաստման համար,


–վարժասարքային համալիրը, որը նախատեսված է հրածգային գենքի հրածիգների պատրաստման համար:

Կատարված աշխատանքները հնարավորություն են ընձեռել լուծելու մի շարք առաջնահերթ խնդիրներ, մասնավորապես՝ ինստիտուտում ստեղծելու ըստ ուղղությունների մասնագիտացված ինժեներատեխնիկական աշխատանքային խմբեր: Միևնույն ժամանակ մշակվել են նաև մի շարք տեխնոլոգիական, սպասարկող,

նմանարկիչ ծրագրեր ու սարքավորանք, որոնք անհրաժեշտ են աշխատանքների հետագա ծավալման համար: Բացի այդ, ընդհանրացվել և ձևավորվել են այն բոլոր խիստ կարևոր հիմնախնդիրները, որոնք բխում են ինչպես կուտակված փորձից, այնպես էլ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ռազմական տեխնիկայի զարգացման միտումներից:

Մշակվել է հեռանկարային ծրագիր՝ ուղղված այդ հիմնախնդիրների հետազոտմանը և նոր նախագծերի ստեղծմանը: Այն ներառում է հետևյալ ուղղությունները.

1. հատուկ նախանշանակման համակարգերի մշակում ու ներդրում, տեխնի-



Խոսակցային տեղեկույթի ծածկագրման (ճախից) և թվային ծայնագրման բազմակապուղի (աշից) սարքեր

կական և համակարգային միջոցների ստեղծում ու կատարելագործում, այդ թվում՝ տվյալների շտեմարանների կառուցվածքային ընդլայնում, օգտագործողների աշխատանքը բարեկավոր նոր միջոցների ստեղծում, որոշումների ընդունմանն աջակցող փորձագիտական համակարգի մշակում,

2. ռազմական տեխնիկայի արդիականացում, այդ թվում՝ ալեհավաքային համակարգերում թվային մերոդների և ազդանշանային պրոցեսորների կիրառմամբ գանձանա ռադիոտեխնիկական միջոցների հնարավորությունների ընդլայնում,

3. տեղեկույթի պաշտպանության միջոցների զարգացում, այդ թվում՝ ավելի բարդ ալգորիթմների ու ծրագրային ապահովման մշակում, նոր տիպի ապարատածրագրային սարքերի ստեղծում,

4. վարժաարքային համալիրների ստեղծում և կատարելագործում, այդ թվում՝ ինչպես կառուցվածքային առումով առանձին սարքերի և համալիրների, այնպես էլ գործող համալիրներում ներկառուցվող վարժաարքերի մշակում:

Այլ բնագավառներում կիրառվում են ինստիտուտում մշակված հետևյալ համակարգերը.

–ՀՀ Սոցիալական ապահովագրության հիմնադրամի պատվերով 1998 թ. մշակվել է կենսաքաղաքների նշանակման և վճարման «Արաք» համակարգը, որը գործում է կենտրոնական և բոլոր տարածքային ստորաբաժանումներում, հիմնադրամի պատվերով 2004 թ. մշակվել է նաև անհատական կենսաքաղաքային ապահովության «Պառնա» համակարգը,

– 1999 թ. մշակվել է անապահովության գնահատման և ընտանեկան նպաստների բաշխման «Փարոս» համակարգը,

–Պետական առողջապահական գործակալության պատվերով 2001 թ. մշակվել և ներդրվել է առողջապահական հիմնարկների տվյալների մշակման և վերլուծության «Սիդա» համակարգը,

–2004 թ. արդարադատության նախարարության պատվերով մշակվել և ներդրվել է Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինների գործունեությունը կարգավորող տեղեկատվական համակարգը,



Զենիթահրթիռային համակարգի արձակման կայանքի
օպերատորների վարժասարք

–2004–2007 թթ. նախաձեռնության կարգով ստեղծվել է կույրերի հայերեն լեզվով հաղորդակցման «Արև» տեղեկատվական համակարգը, որը մշակվել է «Հայակն» համադրիչի և ինքնատիպ համակարգչային տեխնոլոգիայի կիրառմամբ։ Նրա շնորհիվ տեղեկության հաղորդակցման հնարավորություն են ստացել շուրջ 400 կույրեր։ Համակարգը, ինելով ինքնուսուցվող, մի շաբթ ցուցանիշներով գերազանցում է այսօր գոյություն ունեցող նմանատիպ համակարգերը։

–Հայաստանի Հանրապետության ոստիկանության պատվերով 2006 թ. ստեղծվել է Հայաստանի բնակչության պետական ռեգիստրի համակարգը, իսկ 2007 թ. մշակվել է ընտրողների ռեգիստրը, որն ապահովում է ընտրատարածքներում ընտրացուցակների ճշգրտությունը, իսկ 2006–2007 թթ. ընթացքում նաև համակարգչափորվել են Հայաստանի ոստիկանության տարածքային կենտրոնները և միավորվել են տվյալների տեղեկության բազաները՝ կազմելով մեկ միասնական համակարգ։

–Նախաձեռնության կարգով մշակվել և պիլոտային ծրագրի սահմաններում ներդրվել է Էլեկտրաէներգիայի (0,4 կՎ-ից ցածր լարման) հաշվառման, վերահսկման

ու կառավարման տեղեկատվական չափողական համակարգը, որը կարող է կիրառվել նաև գազի ու ջրի ծախսի հաշվառման ավտոմատացման համար,

–մշակվել, պատրաստվել և ներդրվել է բանկային գործառույթների կատարման էլեկտրոնային տվյալների խսկությունն ու հավաստիությունն ապահովող էլեկտրոնային թվային ստորագրության ապարատաձրագրային միջոցների համալիրը:

Զեռնարկության զարգացման ճանապարհին ձեռք բերված հաջողությունների հետ մեկտեղ կան որոշակի դժվարություններ և պրոբլեմներ, որոնք վերաբերում են ընկերության գործունեության տարրեր կողմերին՝ կազմակերպական, գիտատեխնիկական, ֆինանսատնտեսական, կառույցին և այլն: Կարենորդում է ձեռնարկության սերնախոփության՝ երիտասարդ մասնագետների պատրաստման, որակավորման և ինստիտուտի թեմատիկ աշխատանքներում ներգրավման խնդիրը:

Վերլուծությունը ցոյց է տալիս, որ ՊՆ պատվերներով աշխատող բոլոր կազմակերպությունների համար կարևոր հատկանշական պրոբլեմներից են՝

–մասնագիտական բարձր որակավորում ունեցող կաղըներով պատշաճ մակարդակի համայնքածության ապահովումը,

–ժամանակակից տեխնիկական, տեխնոլոգիական ու գործիքային անհրաժեշտ միջոցներով ապահովումը:

Նշված պրոբլեմների լուծման համար առաջարկվում է.

1. պլանավորել աշխատանքները հեռանկարային ծրագրերի շրջանակներում. հեռանկարային ծրագրերից բխող երկարաժամկետ պայմանագրերը կարող են զգալիորեն կրծատել մասնագետների հոսունությունը,

2. պլանավորել պայմանագրային գները՝ հաշվի առնելով նման աշխատանքների համաշխարհային գները,

3. ամեն տարի տրամադրել նպատակային տեղեր՝ ասպիրանտուրայում ուսուցման համար,

4. ստեղծել ռազմագիտական ու ռազմատեխնիկական ուղեկցման հաստատություն, որի խնդիրները պետք է լինեն՝

–գիտահետազոտական և փորձակոնսորտիւստորական աշխատանքների կատարման հիմնավորումը, խնդիրների առաջադրումը,

–կիրառման, ներդրման ոլորտների նախանշումը,

–համատեղելիության ապահովումը,

–մարտավարատեխնիկական հիմնական բնութագրերի առաջադրումը,

–մշակման գործընթացի ուղեկցումը,

5. մշակել և ներդրել ձեռնարկությունների ատեսավորման մեխանիզմ՝ սպառագինության ու ռազմական տեխնիկայի նախագծման, արտադրության և նորոգման աշխատանքների կատարելու բույլտվություն (լիցենզիա) ձևակերպելու նպատակով,

6. լիցենզավորման միջոցով կազմավորել ռազմաարդյունաբերության ոլորտում աշխատող ձեռնարկությունների շրջանը, ստեղծել ՌԱՀ-ի ձեռնարկությունների գործունեությունը համակարգող կառույց:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РАБОТ И ПЕРСПЕКТИВЫ
РАЗВИТИЯ ЕРЕВАНСКОГО НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО
ИНСТИТУТА МАТЕМАТИЧЕСКИХ МАШИН

Г. Т. ОГАНЕСЯН, Генеральный директор ЗАО «Ереванский
научно-исследовательский институт математических машин»

РЕЗЮМЕ

ЗАО «Ереванский научно-исследовательский институт математических машин» (ЕрНИИММ), пакет акций которого передан РФ, имеет все необходимые службы для разработки, производства и авторского сопровождения продукции. Большая часть работ выполняется по заказу МО РА и контролируется ее военным представительством. Эти работы ведутся в следующих основных направлениях:

- разработка автоматизированных систем специального назначения,
- разработка информационно-аналитических систем,
- разработка и выпуск спецтехники,
- разработка и производство тренажеров,
- модернизация военной техники,
- разработка передвижных и стационарных средств автоматизации.

Кроме военных разработок, ЕрНИИММ в последние годы выполнял также заказы государственных и общественных организаций и частных лиц, в том числе—зарубежных.

Для успешного развития ЕрНИИММ и отрасли в целом необходимо осуществление ряда мероприятий, в том числе:

- планирование работ в рамках долгосрочных программ,
- обеспечение подготовки профессиональных кадров высокой квалификации,
- создание института военно-научного и военно-технического сопровождения,
- разработка и внедрение механизмов аттестации предприятий, выполняющих военные заказы,
- определение состава предприятий ВПК и создание структуры, координирующей их деятельность.

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՌ



Արգելապատերի քանդման ինժեներական մեքենա



Զրահատեխնիկայի նորոգման աշխատանքներ արտադրամասին
կից տարածքում




ԲՈ-ԴՄ-2 զրահապատ հետախուզադետքային մեքենայի
նորոգման աշխատանքներ




Փամփուշտների արտադրություն



Փամփուշտների փաքեթավորում



Հզոր լազերների հետազոտման կայանը



Ոչ գծային օպտիկական բյուրեղներ (լազերների համար)

**THE PRINCIPAL DIRECTIONS OF ACTIVITIES
AND DEVELOPMENT PERSPECTIVES
OF THE YEREVAN COMPUTER RESEARCH
AND DEVELOPMENT INSTITUTE**

*G. T. HOVHANNISSYAN, General Director of
«Yerevan Computer Research and Development Institute», CJSC*

SUMMARY

The «Yerevan Computer Research and Development Institute» (YCRDI), CJSC, the share portfolio of which has been submitted to the RF, has all the necessary services for the elaboration, production and author's output guiding. The greater part of activities is carried out to the MoD, RA order and is under the control of its military representation. These activities are conducted in the following principal directions:

- elaboration of automated systems of special purpose,
- elaboration of information-analytical systems,
- elaboration and output of special technical equipment,
- elaboration and production of simulators,
- modernization of defense technology,
- elaboration of mobile and stationary means of automation.

Apart from the elaborations in the military sphere, in recent years the YCRDI has been also executing orders of state and non-governmental organizations and private persons, including those from abroad.

For the successful development of the YCRDI and the sphere on the whole it is necessary to put into practice a number of measures, including:

- scheduling the activities in the framework of long-term programs,
- ensuring the training of highly skilled professionals,
- establishing an institution of defense-related scientific and technical guiding,
- elaborating and introducing mechanisms reviewing the enterprises which fulfill military orders,
- determining the composition of enterprises of the Military-Industrial Complex and setting up a structure coordinating their activities.

ՈԱԴԻՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՑ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կ. Ա. ԴԱԴԱԼՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ուազմարդյունաբերական
վարչության պետի փեղակալ, Ա. Պ. ՊԵՏՏՐՈՍՅԱՆ, փոխգնդապետ,
ՀՀ ՊՆ ուազմարդյունաբերական վարչության քածակ պետ

Պաշտպանական ոլորտում հասուն գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-ներ) պլանավորման և կատարման ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվել հակաօդային պաշտպանության (ՀՕՊ), հրետանու, հասուն նախանշանակման ուղղութեխնիկական համալիրների արդիականացման ու նոր նմուշների ստեղծմանը: Այս աշխատանքներն ընդլայնվեցին, երբ, նախ, ՀՀ ձեռնարկությունների կողմից յուրացվեց այս միջոցների նորոգումը և զգացվեց անհրաժեշտ բարձրորակ պահեստամասների սակավություն, և երկրորդ՝ նորոգման աշխատանքների ընթացքում ձեռնարկությունների ինժեներատեխնիկական անձնակազմն արդեն սկսեց տիրապետել համալիրների ամբողջական կառուցվածքին: Առաջարկներ արդեցին դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի բարելավմամբ մասնակի արդիականացման վերաբերյալ:

Որոշակի աշխատանքներ են տարպել ՀՕՊ-ի մի շարք գենիֆրահրթիռային կայանների և օդային տարածքների հետախուզման ու նշանակետերի հայտնաբերման տարբեր ուղղութեղորշումային կայանների արդիականացման ուղղությամբ:

Ուղղութեղորշումային կայանների՝ շարժվող նշանակետերի ընտրման համակարգի արդյունավետության ապահովման համար պահանջվում են սպասարկման մեծ ծավալով աշխատանքներ: Այդ համակարգը կառուցված էր էլեկտրավակուումային լամպերի հիմքի վրա, որոնց շահագործման ժամկետը փոքր էր (այդ պատճառով էլ դրանց արտադրությունը դադարեցվել է): Մեր մասնագետները կարողացան սեղմ ժամկետներում մշակել թվային նոր համակարգ, կատարել անհրաժեշտ գրային փորձարկումներ և այդ համակարգերը ներդրել բոլոր տիպի ուղղութեղորշումային կայաններում:

Ուղղութեղորշումային կայանների արդիականացման հաջորդ փուլը անդրադարձած ազդանշանի ընդունիչի մուտքային ուղղություն էր: Այս խնդիրը պետք էր լուծել հատկապես դեղիմնետրային տիրույթի ուղղութեղորշումային կայաններում՝ դրանց մուտքային ուղիների միօրինակության ապահովմամբ: Այս աշխատանքները կատարվեցին առանց կայանների ու համալիրների կառուցվածքի փոփոխությունների և լրացակումների:

Որոշակի խնդիրներ առաջացան տարբեր համալիրների էլեկտրասնուցման երկրորդային աղբյուրների լարման կայունարարների արդիականացման ժամանակ. թեև սինեմատեխնիկական և կառուցվածքային լուծումներն առաջին հայացքից պարզ էին թվում, սակայն աշխատանքները բավականին դանդաղ էին ընթանում, և ներկայում դեռ չի ավարտվել գորային փորձարկումների փուլը: Նոր մշակումներն իրենց բնութագրերով գերազանցում են հաստիքային համակարգերը, միևնույն ժամանակ չեն պահանջում կառուցվածքային փոփոխություններ ուղղութեղորշումային կայանների ներքին կապերում: Այդ մշակումների շնորհիվ բարելավվել են

ՀՕՊ-ի միջոցների ընդհանուր մարտավարատեխնիկական բնութագրերը, ընդ որում, նոր համակարգերը գրեթե չեն պահանջում կարգաբերման աշխատանքներ և ունեն շահագործման տասն անգամ ավելի մեծ ժամկետ: Նվազել է նաև սպասարկման աշխատանքների ծավալը:

ՀՕՊ-ի համալիրների էլեկտրանուցման համար մշակվել և բոլորիկում է ժամանակակից պարամետրներով էլեկտրակայան, որն ունի մեծ ՕԳ-գ, շահագործման մեջ պարզ է, և կարգավորման աշխատանքները հնարավորինս ավտոմատացված են:

ՀՕՊ-ի միջոցների նորոգման և դրանց բաղկացուցիչ համակարգերի արդիականացման ընթացքում ձեռք բերված փորձը և մի շարք երկրներում նախազգված ժամանակակից ռադիոտեղորոշումային կայանների կառուցվածքի ուսումնասիրությունը հնարավորություն տվեցին ձեռնամալի լինելու քվային ռադիոտեղորոշումային կայանի ստեղծմանը: Արդիականացված կայանն այսօր արդեն անցնում է գորային փորձարկումներ և իր մարտավարատեխնիկական բնուրագրերով գերազանցում է նախկին կայանը: Ի տարրերություն բազայինց՝ նոր կայանը կառուցված է ժամանակակից էլեմենտային հիմքով և ապահովում է՝

— պասիվ խանգարումներից պաշտպանության համակարգի աշխատանքի կայունություն և մեծ արդյունավետություն,

–ակտիվ խանգարումներից պաշտպանության մեջ ճկունություն.

— օղային օրյեկտների թոշքուղիների նշագծման, ռադիոտեղորոշումային տեղեկությի գրանցման, հաղորդման և արխիվացման ավտոմատացում,

—կայանի համատեղելիություն կառավարման ավտոմատացված համակարգերի (ԿԱՀ-եր) հետ.

— տեսնիկական սպասարկման սակավ աշխատատրություն և կարճա-
տևություն՝ շնորհիկ թեստավորման և ախտորոշման ներկառուցված համակարգերի,

–աշխատունակության արագ վերականգնում,

–օպերատորի աշխատատեղի հարմարավետություն և աշխատանքի պարզություն, և այլն:

ՀՕՊ-ի տեխնիկական միջոցներից բացի, մշակվել և կիրառվել են նաև ԿԱՀ-ի և կոնկրետ խնդիրների լուծման ծրագրային փաթեթներ: Այս գործում անհրաժեշտ է նշել ՀՕՊ-ի գորքերի սպասների անմիջական մասնակցությունը ոչ միայն խնդիրների հատակ ձևակերպմանը, այլև դրանց լուծման ուղղությունների ու եղանակների ընտրությանը: Այսպես, մշակվել և կիրառության մեջ են դրվել մի շարք ծրագրային փաթեթներ, որոնք ապահովում են ՀՕՊ-ի գորքերի հիմնական կառավարային խնդիրների լուծման ավտոմատացումը և զորագործությունների անցկացումը՝ արանց հաստիքային տեխնիկական միջոցների կիրառման:

Մշակված ծրագրային փաթեթների տվյալների բազան են կազմում տարածաշրջանի գրաֆիկական քարտեզի տվյալները, որոնք կառավարման էկրանին տարածեանողեն տառընդուակված են:

Ծրագրային փաթեթները հմարավորություն են տալիս հավաքելու, վերլուծելու և մերենալի ինչողության մեջ գրանցելու բնույթները տեղեկություն, մշակելու պատճառականությունը:

խան տեղեկույթը, որն անհրաժեշտության դեպքում կարելի է արտապատկերել էկրաններին՝ ապահովելով հետևյալ խնդիրների լուծումը.

1. իրադրությունների տեղեկութային մոդելի ձևավորում և արտապատկերում, այդ բվում՝

–օդային իրադրության վերաբերյալ տեղեկույթի հավաքում, մշակում և արտապատկերում,

–կառավարվող օբյեկտների դիրքի, վիճակի և աշխատանքային բնութագրերի վերաբերյալ տեղեկույթի հավաքում, մշակում և արտապատկերում,



Ռադիոտեղորոշումային կայան

–կառավարվող օբյեկտների վիճակի վերահսկում,

2. նշանակետերի բաշխում և ցուցում, այդ բվում՝

–հակառակորդի օդային նշանակետերի բվի և հարվածների տևողության ավտոմատ հաշվարկում,

–խոցման գոտուն օդային նշանակետերի մոտենալու հաջորդականության որոշում և ժամանակի հաշվարկում,

–նշանակետերի բաշխում ըստ կրակակետերի,

–ստորաբաժանումների հրթիռների արձակման պահի ու խոցման գոտու ավտոմատ հաշվարկում, նշանակետի և հրթիռի հանդիպման կետի որոշում, և այլն,

3. օդային իրադրության ելակետային տվյալների մուտքագրում, պահպանում և թարմացում, ընդամենական նշվում են՝

–հրթիռնական հարթությունում բարիչքուղիները՝ ըստ հանգուցային կետերի,

–օդային օբյեկտների ուղեգծերը՝ օբյեկտների համարների, նշանակետերի տիպերի, պետական պատկանելության, բվի, հատկանիշների, բոփչքուղու կետերի և տվյալների նշմամբ,

4. զանազան օդային իրադրությունների խաղարկման համար տվյալների ձևավորում, արտապատկերում և հաղորդում հրամանատարական կետեր,

5. հրամանների, հաղորդագրությունների և գեկույցների ձևավորում և փոխանակում կառավարվող օրյեկտների ու հրամանատարական կետերի միջև,
 6. ելքային ու մուտքային տեղեկույթի արխիվացում,
 7. տեղեկույթի, մասնավորապես, օդային օրյեկտների թուչքային ուղիների գծապատկերների և բարձրությունների ժամանակային գրաֆիկների, հաշվետվությունների, տեղեկանքների վավերագրում,
 8. համակարգում շրջանառող ամրող տեղեկույթի արտապատկերում անհատական և կողեկտիվ օգտագործման ցուցատախտակներին ու մոնիթորներին:

Հրետանու կրակի կառավարման և խնդիրների արագ լուծման համար մշակվել է հրետանային հետախուզության օպտիկական կտրոնային համակարգը, որը հնարավորություն է տալիս՝

- դիտելու տեղանքը, հայտնաբերելու և առանձնացնելու նշանակետերը,
 - որոշելու առանձնացված նշանակետերի հեռավորությունը և կորորդինատները,
 - հավաքելու, գրանցելու, պահպանելու և արտապատկերելու առանձնացված նշանակետերի տվյալները,
 - կատարելու հրետանային խնդիրների լուծման համար անհրաժեշտ հաշվարկումներ:

Հրետանու խնդիրների լուծման ժամանակ օգտագործվող օդերևութաբանական տվյալների ճշգրտությունն ապահովելու համար մշակվել են համապատասխան համալիրներ, որոնց փորձարկումները ավարտական փուլում են: Շուտով փորձարկումների կիանձնվի նաև դյուրակիր դրայվերյան ռադիոտեղորոշումային կայանը, որը կիամալիք հրետանային հետախուզության համակարգը: Այս կայանը, ի տարրերություն գոյություն ունեցող այլ կայաններից, կինհ սակավ էներգատար և ավելի քերև՝ միևնույն ժամանակ ապահովելով հայտնաբերման մեծ ճշգրտություն և արագությունների չափման լայն տիրույթ (սկսած առանձին մարդկանց տեղաշարժից մինչև արագընթաց տրանսպորտային միջոցներին):

Նշված աշխատանքները կատարվում են մի շաբթ մասնագիտացած ձեռնարկություններում, որոնք գործում են խորհրդային ժամանակներից, երբ այս ոլորտը Հայաստանում շատ զարգացած էր: Մասնավորապես՝ «Երևանի մաքենատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ում կատարվում են հատուկ նախանշանական համալիրների, կայանների, սարքերի և դրանց առանձին հանգույցների, ալեհավաքների, այլ տեխնիկական միջոցների նորոգում, վերականգնում և արդիականացում:

Առանձնահատող ուշադրություն է դարձվում մարտական հերթապահության

մեջ գտնվող տեխնիկական միջոցների նորոգման և տեխնիկական սպասարկման գործընթացին: Այս ուղղությամբ մի շարք ընկերությունների հատուկ խմբերի կողմից կատարված աշխատանքները համարվում են տեխնիկական միջոցները մարտական վիճակում պահելու գրավականներից մեկը:

Ուղիղութեխնիկական միջոցների արդիականացման և նոր նմուշների ստեղծման ոլորտում հանրապետությունում առկա է գիտատեխնիկական մեծ ներուժ, որի համախմբումը և համադասումը կդառնան աշխատանքների որակական բարեկավմանն ուղղված հեռանկարային ծրագրերի իրականացման լավագույն միջոց: Այս առումով ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է՝

– ավարտին հասցնել արդեն սկսված ԳՀՓԿԱ-ների զարգացման միջնաժամկետ հեռանկարային ծրագրերը,

– ԳՀՓԿԱ-ներ կատարող բազային կազմակերպությունների հետ համատեղ վերլուծել անցած տարիների գործունեությունը, քարտացուցակավորել կատարված աշխատանքների արդյունքները, ստեղծել ավարտուն համակարգերի ամփոփ անձնագրեր՝ նպատակ ունենալով նաև նոր ստեղծվող սպառագինության ու ռազմական տեխնիկայի (ՍՈՏ) և համալրող արտադրատեսակների միօրինակացումը,

– ստեղծել համարասող գիտատեխնիկական խորհուրդ և պարբերաբար անցկացնել գիտաժողովներ ու քննարկումներ՝ ԳՀՓԿԱ-ներ կատարող բազային կազմակերպությունների միջև կապերն ամրապնդելու և փոխշահավետ համագործակցություն ապահովելու նպատակով,

– պլանավորված ու նպատակային հիմնարար հետազոտությունների կատարման և երկակի նախանշանակման արտադրանքի մշակման նպատակով համակարգել ԳՀՓԿԱ-ների ոլորտում համագործակցությունը ՀՀ պաշտպանության, ՀՀ առևտի և տնտեսական զարգացման, ՀՀ գիտության և կրթության նախարարությունների ու ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի միջև, ուսումնասիրել ՀՀ-ում գործող և առաջմն պետական պաշտպանական պատվերներ չկատարող մի շարք կազմակերպությունների գիտատեխնիկական հնարավորությունները,

– ուսումնասիրել բազային կազմակերպությունների ներկա հնարավորությունները և պայմաններ ստեղծել հատկապես գերակա ոլորտություններով գիտատեխնիկական ներուժի պահպանման ու զարգացման համար, աջակցել ոլորտի համալրմանը երիտասարդ գիտնականներով և մասնագետներով, ինչի համար բարձրագույն ուսումնական հաստատությունների և ռազմական արդյունարերության ոլորտի ձեռնարկությունների միջև ստեղծել սերտ համագործակցության հիմքեր՝ ապահովելով այդ կազմակերպություններում ուսանողների պրակտիկայի անցկացումը և հետագա աշխատանքի երաշխավորումը:

Այս ոլորտում արդյունավետ համապետական քաղաքանությունը, մասնավորապես՝ նպատակատղված ներքին ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը, կապահովի նոր որակական արդյունքներ՝ հնարավորություն ընձեռնությունը գալու արտաքին շուկա, ինչը ոլորտը կդարձնի շահութափեր և պայմաններ կստեղծի արտաքրութետային ներդրումների համար:

ПРОЦЕСС МОДЕРНИЗАЦИИ РАДИОТЕХНИЧЕСКИХ СРЕДСТВ И НАПРАВЛЕНИЯ ИХ РАЗВИТИЯ

К. А. ДАДАЛЯН, полковник, заместитель начальника Военно-промышленного управления МО РА, А. П. ПЕТРОСЯН, подполковник, начальник отдела Военно-промышленного управления МО РА

РЕЗЮМЕ

Радиотехнические устройства являются важными составными частями многих ракетных и артиллерийских систем, состоящих на вооружении ВС РА. Работы по восстановлению и ремонту этих изделий послужили основой для ряда НИОКР, нацеленных на улучшение ТТХ устаревших образцов путем замены снятых с производства электровакуумных приборов блоками собственной разработки на базе твердотельных элементов. Параллельно производилась компьютеризация систем, что создало возможности для автоматизации решения ряда расчетных задач и обеспечения высокой оперативности управления.

Для дальнейшего развития НИОКР в данной области необходимы: стандартизация и паспортизация разработанных и разрабатываемых радиотехнических средств, создание координирующего научно-технического совета по НИОКР, а также сохранение и повышение научно-технического потенциала путем подготовки профессиональных кадров высокой квалификации.

THE PROCESS OF MODERNIZATION OF RADIO EQUIPMENTS AND DIRECTIONS OF THEIR DEVELOPMENT

*K. A. DADALYAN, Colonel, Deputy Chief of the Military-Industrial Board of the MoD, RA,
A. P. PETROSSYAN, Lieutenant-Colonel, Chief of the Department
of the Military-Industrial Board of the MoD, RA*

SUMMARY

Radiotechnical devices are important components of missile and artillery systems, which are at arming in the RA Armed Forces. Activities on the reconstruction and repair of these articles served as a basis for a number of R&D, targeted at the improvement of performance characteristics of obsolete samples through the change of electrovacuum appliances, gone out of production, for the blocks of their own engineering on the basis of solid-state components. Parallel with it, the computerization of the system was carried out, which gave opportunities for the automated solution to a number of calculation tasks and for ensuring a high control efficiency.

For further progress of the R&D in the given sphere it is necessary to standardize and issue passport system of radio aids both elaborated and in the process of elaboration, create coordinating scientific-technical council on R&D, as well as preserve and increase the scientific-technical potential through training highly qualified professionals.

**ՕՊՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՕՊՏԻԿԱԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՀԱՍՏԱԿԱՐԳԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ. Ա. ՇԱԴՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ուսամարդունաբերական վարչության
պետ, Ա. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, դիիլմիկական գիլրությունների քեկնածու,
«Երևանի օպտիկաֆիզիկական չափումների գիլրահեկաղաղութական
ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրին, Գ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ, «Մարդ» ՍՊԸ-ի
տնօրին, Տ. Կ. ԴԱՎԱԼՅԱՆ, «Մարդ» ՍՊԸ-ի կրթսեր ինժեներ**

Օպտիկական և օպտիկաէլեկտրոնային համակարգերը (ՕՕԷՀ-ներ)՝ որպես սպառագինության և ուղղական տեխնիկայի (ՍՈ-Տ) բաղկացուցիչ մաս, լայն կիրառություն ունեն բոլոր զարգացած երկրների բանակներում: Ընդ որում, այդ համակարգերը մշտապես կատարենագործվում են՝ ապահովելով հարձակողական ու պաշտպանական համակարգերի մեջ արդյունավետությունը: Դրանք, մասնավորապես, կիրառվում են հակառակորդի նշանակետերի հայտնաբերման, ելակետային տվյալների ծնևափորման ու հաղորդման, յուրային խոցից միջոցների ուղղորդման, անձնակազմի պաշտպանվածության ապահովման և այլ նպատակներով: Այս ոլորտի հետագա զարգացումը նոր հնարավորություններ է ստեղծում ինչպես գոյություն ունեցող համակարգերի արմատական արդիականացման, այնպես էլ նոր կառուցվածքային մոտեցումների ու սկզբունքների կիրառմամբ համաշխարհային չափանիշներին բավարարող նմուշների մշակման ու արտադրության համար, քանի որ ՕՕԷՀ-ներն իրենց ուրույն տեղն ունեն և՛ որպես ինքնուրույն համալիրներ ու սարքեր, և՛ որպես ՍՈ-Տ համալրող մասեր:

Հայաստանում անկախության ձեռքբերումից հետո ևս շարունակեցին գործել օպտիկաէլեկտրոնային, մասնավորապես՝ լազերային, ոլորտի մի շարք կազմակերպություններ, որոնք խորհրդային տարիներին հասել էին որոշակի հաջորդությունների: Դրանք պահպանել և զարգացնում են արտաքին տնտեսական համագործակցությունը, ինչը նախադրյալներ է ստեղծում, որպեսզի հայրենական ձեռնարկությունները հեռանկարային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով հետ չմնան առաջատար երկրներում այդ ոլորտի զարգացման տեմպերից: Այսօր այդ կազմակերպությունների որակյալ ինժեներատեխնիկական աշխատակազմներն իրենց գիտելիքն ու փորձն են փոխանցում երիտասարդ սերունդներին:

Նորանկախ Հայաստանի Զինված ուժերում խորհրդային բանակից մնացած ՕՕԷՀ-ների ու սարքերի նորոգման հետ մեկտեղ ոլորտի ձեռնարկություններն սկսեցին մշակել հայրենական արտադրատեսակներ: Դրանցից առաջինը իրածգային գեներերի, հրետանու և նոնականետների համար նախատեսված օպտիկական նշանառության սարքերն էին: Մինչև վերջերս արտադրվում էին նաև ջերմադիտման սարքեր՝ ստեղծված դեռ խորհրդային մշակումների հիման վրա: Սակայն ներկայումս դրանց թողարկումը դադարեցվել է շուկայում նոր՝ ավելի լավ մարտավարատեխնիկական բնութագրերով, սարքեր հայտնվելու պատճառով:

Հայաստանում մշակվել և արտադրվում են օպտիկական էլեկտրոնային համակարգեր այննմարմնային լազերների կիրառմամբ, այդ թվում՝

–մինչև 20 կմ հեռավորություն չափող լազերային հեռաչափներ,

–դիտնան համակարգեր՝ համարված գիշերային տեսանելիության սարքով, հեռուստախցիկներով և լազերային հեռաչափով,

–օպտիկական սարքեր՝ ներկառուցված լազերային հեռաչափներով,

–օպտիկական և լազերային համակարգեր ներառող մի շարք վարժասարքեր,

–օպտիկական նշանոցներ, և այլն:

Պաշտպանական ոլորտում ՕՕԷՀ-ների արդիականացումը կատարվում է հետևյալ հիմնական ուղղություններով:

1. Օպտիկական միջոցների ու լազերային ճառագայթման հայտնաբերման, այդ միջոցների և ճառագայթման աղբյուրների ճշգրիտ տեղորոշման, ապակողմնորոշման և նշանացուցման համակարգերի մշակում

Հակառակորդի օպտիկական միջոցների հայտնաբերումը հնարավորություն է տալիս վաղորոք տեղորոշելու նրա ինչպես կառավարման, այնպես էլ խոցման միջոցների տեղաբաշխման կոորդինատները, քանի որ օպտիկական սարքերն ու բաղադրամասերն առկա են ինչպես ՍՈ-Տ կազմում, այնպես էլ անձնակազմի հանդերձանքում (հեռադիտակներ, ակնոցներ, գիշերային տեսանելիության ու ջերմադիտման սարքեր, լազերային հեռաչափներ, տարրեր նշանոցներ, լուսարձակներ և այլն): Հայտնաբերումը կատարվում է տեսածրող լազերների և ընդունիչ սարքերի միջոցով. գրանցում է օպտիկական սարքերից անդրադարձած ճառագայթումը, եթե այն գգալիորեն գերազանցում է շրջակա միջավայրի ֆոնը: Անդրադարձած ճառագայթման գրանցման միջոցով կատարվում է նաև օպտիկական սարքերի գտնվելու վայրի ճշգրիտ տեղորոշում, ինչը հնարավորություն է տալիս անհրաժեշտ պահին խոցելու դրանք:

Լազերային ճառագայթման հայտնաբերումը և տեխնիկական բնութագրերի որոշումը հնարավորություն են տալիս պարզելու հակառակորդի կողմից կիրառվող ՍՈ-Տ տեսակները, անձնակազմին նախազգուշացնելու իր դեմ կիրառվող գեներերի և արձակված հրթիռների (ռումբերի) մասին և այլն: Լազերային ճառագայթման հայտնաբերման (ԼՇՀ) համակարգերը հիմնականում բաղկացած են ընդունող փոխակերպիչներից և գրանցված ազդանշանների մշակման ու անձնակազմին տեղեկացման համակարգից, ընդունիչ փոխակերպիչները կարող են տեղակայվել ինչպես որոշակի անկյունային սեկտորով, այնպես էլ շրջանաձև, ինչով ապահովվում է լազերային ճառագայթման գրանցումը բոլոր հնարավոր ուղղություններով: ԼՇՀ համակարգերը հաճախ համարվում են ապակողմնորոշման հակազդման կամ պաշտպանական համակարգերով, որոնք գործարկվում են կամ ավտոմատացված եղանակով՝ ըստ ազդանշանների մշակման համակարգի ելքային հրահանգի, կամ անձնակազմի կողմից՝ ըստ իրադրության:

Լազերային նշանացուցման սարքերը նախատեսված են ինքնակառավարվող հրթիռների ու ռումբերի ճշգրիտ ուղղորդման համար և ապահովում են օբյեկտների

խոցման մեծ արդյունավետություն: Թռիչքի տարբեր փուլերում այդ հրթիռների ու ոռոմքերի կառավարումը կարող է իրագործվել ինչպես հեռակառավարման եղանակով, այնպես էլ ծրագրային՝ մինչև խոցվող օրյեկտից անդրադարձած լազերային ազդանշանի ընդունումը: Խոցվող օրյեկտի վրա լազերային ճառագայթը կարող է ուղղվել ոչ միայն հրթիռների արձակման կայանից, այլև օրյեկտի տեսանելիության գոտու ցանկացած կետից:

Լազերային ճառագայթներով հեռակառավարվող հրթիռները իրմանականում կառավարվում են արձակման համալիրներից:

2. Լազերային, հեռուստատեսային և օպտիկական նշանառության համակարգերի արդիականացում, նոր նմուշների ստեղծում

Նշանառության այս համակարգերը իրմանականում լինում են համակցված և լայնորեն կիրառվում են գրահատանկային ու հրետանային միջոցների կրակի կառավարման համար: Ընդ որում, լազերները կիրառվում են ոչ միայն մինչև խոցվող օրյեկտները եղած հեռավորությունը ճշգրտորեն չափելու, այլև դիտման արդյունավետությունը գիշերային տեսանելիության սարքերով մեծացնելու նպատակով: Հեռուստատեսային համակարգերն արդեն կիրառվում են նաև հրածային գեներերի նշանառության համակարգերում՝ ապահովելով կրակ վարելու ժամանակ հրածիզների ազատ գործողությունները:

3. Գիտահետազոտական աշխատանքներ լազերային հակազգայարարական համակարգերի ստեղծման ուղղությամբ, նոր նմուշների մշակում

Հակազգայարարական լազերային համակարգերը (ՀԼՀ-ներ) նախատեսված են հակառակորդի ցամաքային և օդային միջոցների կրակի կառավարման, ուղեկարական համակարգերի, դիտման և այլ օպտիկական ստորանային սարքերի զգայարարները (ազդանշաններ ընդունող տվյալներն ու փոխակերպիչները) հայտնաբերելու և լազերային ճառագայթման ներգործությամբ շարքից հանելու համար: ՀԼՀ-ները լինում են դյուրակի անհատական, ինչպես նաև շարժական տեխնիկական միջոցներում կամ նախապես սարքավորված ստացիոնար կետերում տեղակայվող: Համակարգերը իրմանականում բաղկացած են լինում լազերային բլոկից, դիտման և նշանառման սարքից ու տեղադրվում են հորիզոնական և ուղղաձիգ ուղղություններով պտտվող հենքի վրա: Այս համակարգերի ստեղծման ուղղությամբ արտասահմանում կատարվում են լայնածավալ հետազոտություններ. մասնավորապես, ըստ արևմտյան մամուլի հաղորդագրությունների՝ դյուրակի անհատական լազերային գենքի երկու նմուշ փորձարկվում են ԱՄՆ-ի Թեխսաս և Վիրջինիա նահանգների գորակայաններում:

Նոր գիտահետազոտական աշխատանքների ուղղություններից մեկը համաշխի շառավիլային քենուացմամբ ճառագայթում գեներող այնդմարմնային լազերների ստեղծումն է: Ի դեպ, դրա համար անհրաժեշտ է ստանալ ներոեզրնատորային քենուացում, ինչը պահանջում է օպտիկական տարրերի և ռեզոնատորների պատրաստման հնարավորությունների ուսումնավիրում: Այս տիպի լազերների ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանց ճառագայթման

Կիրառման դեպքում նյութերի քայլայման շեմը մի քանի անգամ ավելի ցածր է, քան սովորական լազերային ճառագայթման ներգործության ժամանակ: Այս երևոյթը նախադրյալներ է ստեղծում ավելի արդյունավետ հակազդայրարական լազերային համակարգերի մշակման համար:

Մագնիսամակածային մղմաքը լազերների ստեղծման ուղղությամբ հայ մասնագետների կողմից վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունների շնորհիվ



Đ»í 3 Èáó½áôÅÙ3 Ý .. Íñ3 ÍC Í3 é3 Í 3 ñÙ3 Ý ñåÍ CÍ 3 ;È»Í Í ñáÝ3 ÙCÝ Ñ3 Ù3 Í 3 ñ.

այդ լազերներն արդյունավետ կիրառություն ստացան ոչ միայն պաշտպանական բնագավառում, այլև արդյունաբերության զանազան ճյուղերում։ Այս տիպի լազերների առավելությունն այն է, որ դրանք չունեն էլեկտրոդներ, օժտված են շահագործման մեջ ռեսուրսով, արագագործությամբ, գեներում են գերկարճ իմպուլսներ և հզոր ճառագալիում՝ ի հայիվ մեծ ՕԳ-ի։

4. Հրետանային խնդիրների լուծման նոր սերնդի ավտոմատացված համակարգերի մշակում

Այս համակարգերը նախատեսված են գործելու ինքնակառավարմամբ և կրակի կառավարման ավտոմատացված համալիրի կազմում: Համակարգերն ունեն հեռակառավարման հնարավորություն և ապահովում են տեղանքի զննում, ցերեկային և քոյլ լուսավորության պայմաններում նշանակետերի հայտնաբերում և առանձնացում, ինչպես նաև դրանց հեռավորության և անկյունային կոորդինատների որոշում: Համակարգերում ներառված համակարգչի միջոցով կատարվում են նշանակետերի խողման համար անհրաժեշտ հաշվարկումներ:

Նոր սերնդի օպտիկաէլեկտրոնային սարքերը ապահովում են հրետանային գործերի ստորաբաժանումների կրակի կառավարման և խցման մեջ արդյունա-

վետություն, արագացնում, պարզեցնում և ավելի նպատակահարմար դարձնում նշանակետերի բաշխումն ըստ ստորաբաժանումների կրակի (խոցման) գոտիների:

Հետանու տեղակայման և կրակի կառավարման, հետախույզների դիրքերի կողրդինատների որոշման գործում մեծ է հրետանային կողմնացույց-անկյունաչափի (քուսոյ) դերը: Խորհրդային ժամանակներում մշակված և ներկայումս էլ օգտագործվող ՊԱԲ-2Մ կողմնացույց-անկյունաչափի համեմատությամբ Հայաստանում մշակված նոր սարքն ավելի թերեւ է (Անրաշյալ՝ եռոտանու քաշը), անկյունների չափման միջին սխալը մոտ 2 անգամ փոքր է և, ի տարբերություն իր նախորդից, ուղղաձիգ ու հորիզոնական հարթություններում շարժվում է ինչպես էլեկտրամեխանիկական եղանակով՝ էլեկտրաշարժաբերմերի միջոցով:

5. Թռչող օրյեկտների ուղեկցման պասիվ օպտիկակելեկտրոնային համակարգերի մշակում

ՀՕՊ-ի գենիբահրթիռային բոլոր կայանները համարված են հեռուստաօպտիկական սարքով, որը հնարավորություն է ընձեռում ցերեկային պայմաններում կատարելու նշանակետերի ուղեկցում անկյունային կողրդինատներով: Այս սարքի արդիականացումը բույլ լուսավորության պայմաններում կապահովվի ավելի բարձր հուսալիություն և պատկերի հստակություն:

Նշանակետերի պասիվ ուղեկցման միջոցներից է նաև ինֆրակարմիք տիրույթում աշխատող համակարգը՝ այսպես կոչված նշանակետի համադասողը, որի հետ համակցված լազերային հեռաչափը հնարավորություն կունենա մինչև 20 կմ հեռավորության վրա իրականացնելու պասիվ ուղեկցում:

Ուսանձնահատուկ ուշադրության է արժանի նաև պասիվ ուղեկցման և հակազգայարական համակարգերի համատեղ կիրառումը, հատկապես՝ ինքնակառավարվող հրթիռների և ռումբերի դեմ պայքարում:

6. Տարածքների և օրյեկտների զննման, սահմանի խախտումների գրանցման ու ահազանգման համակարգերի արդիականացում

Սահմանների հսկողության համակարգերի գերակշիռ մասը ներառում է օպտիկակելեկտրոնային սարքեր, որոնք կարող են, խախտումները գրանցելուց քացի, հակագործ ավտոմատ գործողություններ կատարել սահմանախախտների դեմ:

Այս հեռակառավարվող համակարգերը իմմանականում համակցված են՝ ունենցերեկային, գիշերային ու ջերմային տեսախցիկներ և օպերատորի՝ կառավարման վահանակ, որը տեղադրվում է դիտման կետում և մալուխներով միանում տեսախցիկներին: Դիտումը կատարում է օպերատորը, որը հնարավորություն ունի տեսախցիկներն ուղղելու դեպի հետաքրքրող օրյեկտներ, փոխելու տեսանելիության դաշտը, ինչպես նաև համեմատելու օրյեկտների նոր և նախնին պատկերները: Այս ուղղությամբ կատարվող հետազոտությունները հաճգեցնում են այսպես կոչված ինտելեկտուալ և հեռակառավարվող համակարգերի ստեղծմանը, համակարգեր, որոնք արգելված գոտիներում օրյեկտներ հայտնվելու դեպքում, համաձայն ծրագրային ապահովման կամ կառավարման կետից լրացուցիչ իրահանգի, կիրառում են ուղղորդված խոցումներ: Որոշ դեպքերում կիրառվում են նաև այնպիսի հակագործ միջոցներ, որոնք

սահմանախախտներին ժամանակավորապես քոյլ չեն տալիս կողմնորոշվել տարածության մեջ։ Այս ոլորտում մեծ կիրառություն ունեն ինֆրակարմիր տիրույթի պասիվ համակարգերը։

7. ՈՒՍՏՈՒՆԱՍԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ լազերային ռադարների ատեղծման ուղղությամբ Հայտնաբերման և ուղեկցման ռադիոտեղորոշումային համակարգերին գուգահեռաբար փոքր հեռավորությունների տիրույթում լայնորեն կիրառվում են լազերային ռադարները (լիդարներ)։

Լիդարների գարգացումն ընթանում է հիմնականում մի քանի ուղղություններով՝

–միակապույի հայտնաբերող լիդարներ, որոնց միջոցով կատարվում է օրյեկտների կետային հայտնաբերում և տեղորոշում,

–մեծ թողունակությամբ պատկերային (ռաստրային) լիդարներ, որոնք հնարավորություն են տալիս ձևավորելու օրյեկտների պատկերները և կատարելու դրանց նույնականացում,

–մինուրոտի հեռավոր գննման լիդարներ, որոնց միջոցով կատարվում է շրջակա միջավայրի վիճակի օպերատիվ հսկողություն և որոշվում է գազերի առկայությունը։

Միանգամայն հասկանալի է, որ ռադիո- և լազերային տեղորոշումային համակարգերը լրացնում են միմյանց, իսկ պատկերային լիդարների գարգացումը բավական հեռանկարային է։

Այս ուղղություններով կատարվող գիտահետազոտական և փորձակոնսորտիկական աշխատանքների (ԳՀՓԿԱ-ներ) մեծ արդյունավետություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է համադատել ոլորտի մասնագիտացված ձեռնարկությունների սերտ համագործակցությունը։ Օպտիկական և օպտիկական էկտրոնային ոլորտի ձեռնարկությունների գարգացման համար անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հարցերի լուծմանը։

1. արագացնել ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական միջոցներով ձեռնարկությունների վերագինման տեմպերը, մասնավորապես, հետևյալ ոլորտներում՝

- օպտիկա, այդ թվում նաև լազերային բաղդրատարբեր,
- ճշգրիտ մերենաշինություն և էլեկտրամեխանիկա,
- օպտիկաֆիզիկական չափումներ,
- փորձարկումների կազմակերպում,

2. ապահովել ոլորտում երիտասարդ կադրերի որակավորման և մասնագիտացման քարձր մակարդակ, քանի որ այժմ կա միջին տարիքի որակյալ կադրերի պակաս (այդ թվում՝ մասնագետ բանվորների), ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տասնհինգ տարիների ընթացքում խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված ավագ և այսորվա երիտասարդ սերունդների միջև խզում է առաջացել։

3. գերակա խնդիրներից մեկը համարելով ոլորտի գիտատեխնիկական մակարդակի պահպանումը և գարգացումը՝ այդ ուղղությամբ մշակել և իրականացնել համակարգված քաղաքականություն՝ շահագրգիռ կառույցների մասնակցությամբ,

4. պայմաններ ստեղծել, որպեսզի ոլորտի ձեռնարկությունները դառնան

Աերդրումների համար ավելի գրավիչ՝ արտաքին շուկայում մրցունակ հայրենական օպտիկական ու օպտիկակառաջին (լազերային) բաղադրատարրերի ու սարքերի արտադրությունը ավելի շահութաբեր դարձնելու համար:

ОПТИЧЕСКИЕ И ОПТОЭЛЕКТРОННЫЕ СИСТЕМЫ В ОБОРОННОЙ СФЕРЕ И ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ИХ РАЗВИТИЯ

Պ. Ա. ՇԱԴՅԱՆ, полковник, начальник Военно-промышленного управления МО РА,
Ա. Օ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, кандидат технических наук, директор ЗАО «Ереванский
научно-исследовательский институт оптико-физических измерений»,
Գ. Ս. ԳԵՎՈՐԿՅԱՆ, директор ООО «Март», Т. Կ. ԴԱԴԱԼՅԱՆ, младший инженер
ООО «Март»

РЕЗЮМЕ

Оптические и оптоэлектронные системы как составные части В и ВТ, а также в качестве самостоятельных изделий, состоят на вооружении армий всех развитых стран мира.

Параллельно с ремонтом и восстановлением оптических и оптоэлектронных систем советского производства, за годы независимости в Армении производились приборы собственной разработки, в частности, оптические прицелы для стрелкового оружия, артиллерии и гранатометов. На базе твердотельных лазеров собственной разработки в Армении производились: дальномеры; системы наблюдения и разведки, оснащенные приборами ночного видения, телекамерами и лазерными дальномерами; лазерные комплексы для поражения оптических систем противника; различные тренажеры с применением оптических (лазерных) систем.

В настоящее время основными направлениями модернизации оптических и оптоэлектронных систем в оборонной сфере являются: разработка систем обнаружения и определения координат оптических приборов и источников лазерного излучения, систем противодействия оптоэлектронным средствам, нового поколения систем управления артиллерийским огнем, пассивных оптоэлектронных систем сопровождения летающих объектов, лазерных радаров (лидеров) и др.

Для обеспечения высокой эффективности НИОКР в этих направлениях необходимо обеспечить решение таких задач, как: ускорение технического переоснащения предприятий профиля современным оборудованием и контрольно-измерительными приборами, подготовка молодых кадров высокой квалификации и обеспечение естественной смены поколений научно-технических кадров с сохранением существующего с советских времен высокого интеллектуального потенциала, повышение научно-технического уровня работ и создание благоприятных условий для привлечения инвестиций.

Развитие оптической и оптоэлектронной областей, разработка и производство новых систем, улучшающих ТТХ В и ВТ, относятся к ряду приоритетных задач военно-промышленного комплекса РА.

OPTICAL AND OPTOELECTRONIC SYSTEMS
IN THE DEFENSE SPHERE
AND PRINCIPAL DIRECTIONS OF THEIR DEVELOPMENT

P. A. SHADYAN, *Colonel, Chief of the Military-Industrial Board of the MoD, RA,*
A. H. VARDANYAN, *Candidate of Technical Sciences, Director of*
«Yerevan Scientific-Research Institute of Opto-Physical Measurements», CJSC,
G. S. GEVORKYAN, *Director of «Mart», LLC,*
T. K. DADALYAN, *Junior Engineer of «Mart», LLC*

SUMMARY

Optical and optoelectronic systems as constituents of the Armament and Defense Technology, and as independent products, are at arming of the armed forces of all the world developed countries.

Parallel with the repair and restoration of optical and optoelectronic systems of the Soviet production, devices of internal elaboration, particularly, telescopic sights for small arms, artillery and grenade launchers were manufactured in the years of independence in Armenia. On the basis of solid-state lasers of internal elaboration there were rangefinders; systems of observation and reconnaissance equipped with devices of night vision, television cameras and laser rangefinders; laser complexes for affecting the opponent's optical system; various simulators with the application of optical (laser) systems produced in Armenia.

At present the principal directions of modernizing optical and optoelectronic systems in the defense sphere are: elaboration of systems of coordinates detection and determination of optical devices and sources of laser radiation, systems counteracting the optoelectronic means, new generation systems of gunfire control, passive optoelectronic systems tracking flying objects, laser radars (lidars), etc.

To ensure high efficiency of R&D in these directions it is necessary to guarantee the solution to such problems as: acceleration of technical reequipment of the profile enterprises with modern equipment and gages, training of highly qualified young specialists and ensuring natural change of generations of scientific-technical staff preserving the high intellectual potential, existing from the Soviet times, increase of scientific-technical level of work and creation of favourable conditions to attract investments.

The development of optical and optoelectronic spheres, elaboration and production of new systems, improving performance characteristics of the Armament and Defense Technology, concern a number of priority problems of the RA Military-Industrial Complex.

ՆԱՆՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՌԱԿԱՐՆԵՐԸ

**Ա. Գ. ՊԵՏՐՈՎՅԱՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, Ռուս-հայկական (Սլավոնական) պետական
համալսարանի ֆիզիկաբիոհիկական ֆակուլտետի դեկան**

Նանոտեխնոլոգիա բառը համեմատաբար նոր է՝ առաջին անգամ այն օգտագործվել է 1974 թ. ճապոնացի գիտնական Տանիգուչի կողմից¹: Սակայն այսօր այն ոչ միայն ունի լայն տարածում, այլև տարբեր, հաճախ ոչ ճշգրիտ մեկնաբանումներ: ՈՒստի և նպատակահարմար է սկսել նանոտեխնոլոգիայի սահմանումից:

«Նանո» նախաձանցը ընդիհանուր առմամբ նշանակում է ինչ-ոք մեծության մեկ միլիարդերրորդական (10^{-9}) մաս: Նանոտեխնոլոգիաները գործ ունեն նյութի տարաքնությունը կառուցվածքների հետ, որոնց բնութագրական չափերը մետրի միլիարդերրորդականի (10^{-9} մ=1 նմ) կարգի են: Նանոտեխնոլոգիան կարելի է սահմանել որպես գիտության մի բնագավառ, որը ներառում է հետևյալ ուղղությունները²:

–ատոմական, մոլեկուլային կամ մակրոմոլեկուլային մակարդակում (1÷100 նմ չափերի տիրույթում) կատարվող գիտական հետազոտություններ և տեխնոլոգիական մշակումներ,

–նվազագույն չափերի շնորհիվ նոր հատկություններով ու գործառույթներով օժտված կառուցվածքների և սարքերի ստեղծում,

–ատոմական մասշտարով կառավարում և փոփոխակում:

Առաջին հայացքից կարող է թվայ, թե նանոտեխնոլոգիան նոր գիտություն է, սակայն դա այդպես չէ. նանոմասշտարային սարքերը, նյութերը և կառուցվածքները ունեն հիմ պատմություն³: Կան տեղեկություններ, որ դեռ 4-րդ դարում հռոմեացի ապակեգործները կարողանում էին ստանալ գունավոր ապակիներ՝ դրանց բաղադրության մեջ ավելացնելով մետաղների փոքրագույն մասնիկներ: Օրինակ՝ նրանք, փոփոխելով ապակու մեջ տարրալուծվող ուկու փոշեհատիկների չափերը, ստանում էին տարբեր գույներ ու երանգներ: 19-րդ դարում լուսանկարչությունն արդեն համարվում էր լավ զարգացած տեխնոլոգիա: Այն հիմնված էր լուսի ազդեցությամբ լուսագույն շերտում արծաթի բրոմիդի քայլայման և մաքուր արծաթի նանոմասնիկների առաջացնան երևույթի վրա: Արդեն ավելի քան 100 տարի է, ինչ ածխածնի նանշափային փոշու կիրառման արտադրվում են ավտոմեքենաների ռետիներ: Բերված օրինակներից երևում է, որ իրականում նանոտեխնոլոգիաները հիմ պատմություն ունեն, իսկ վերջին տարիներին դրանց լայն, հեղափոխական զարգացումը պար-

¹ Տես N. Taniguchi. On the Basic Concept of Nanotechnology. Tokyo, 1974, Part 2:

² Տես W. H. Hunt. Nanomaterials: Nomenclature, Novelty and Necessity. «JOM», 2004, October, Vol. 56, համար R. Jones. The Future of Nanotechnology. 2004, August (www.nanotechweb.org/articles/feature/3/8/1/1):

³ Տես «Nanoscience and Nanotechnologies: Opportunities and Uncertainties». «The Royal Society and the Royal Academy of Engineering». 2004, 29 July (www.royalsoc.ac.uk/policy/):

**ԵՐԵՎԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵԹԵՍԱՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՈՐՈՇ ՄՃԱԿՈՒՄՆԵՐ**

ՀՐԱՋԻԳՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԾՆ ՎԱՐԺԱՎԱՍԱԼԻՔ



Ժամանակակից մուլտիմեդիական համալիր է, որն ապահովում է հրաձգային գենքով հրածգորթյան ձայնագղանշանային և 3D տեսագղանշանային նմանարկում։ Վերարտադրելով մարտական իրադրությունը՝ հնարավորություն է տալիս իրականացնելու հրածիզմերի արդյունավետ ուսուցում և հրածգորթյան ընթացքում նրանց ձեռք բերած հմտությունների ավտոմատ գնահատում՝ առանց զինամքերի օգտագործման։ Կիրառված են տեղեկատվական տեխնոլոգիաների, լազերային տեխնիկայի և տեսագղանշանների գրանցման միջոցների ասպարեզում վերջին գիտատեխնիկական նվաճումները։

Վարժականական հնարավորություն է տալիս.

– Էկրանի վրա նմանարկելու հրածգորթյան տարրեր սյուժեներ օրվա տարրեր ժամերին և տարրեր եղանակային պայմաններում,

– օգտագործելու տարրեր տիպի, այդ թվում՝ շարժվող, թիրախներ,

– տարրեր դիրքերից կրակ արձակելու (կանգնած, պառկած, ծնկից),

– զրանցելու հրածգորթյան ընթացքում հրածիզմի բոլոր գործողությունները,

– նմանարկելու թիրախի խոցումը հաջող կրակոցի դեպքում,

– հաշվի առնելու կրակոցի վրա ազդյող հիմնական գործոնները (տիեզերական ձգողականություն, քանի, մընոլորտային ճնշում և այլն),

– նմանարկելու կրակոցը և գենքի հետհարվածը, ինչպես նաև վերալիցքավորում՝ ավտոմատ հրածգորթյան դեպքում, տվյալների բազայում պահպանելու ատեսավորման արդյունքները։

Էկրանի շափու, մ

3x2

Հեռավորությունը օպտիկական հսկման բլոկից

ոչ պակաս, քան 5,5

մինչև էկրան, մ

ոչ պակաս, քան 3

Զետեղարանի բարձրությունը, մ

ոչ պակաս, քան 5

Լուսավորվածությունը, լուսք

ՀԱՊՈՐԴԱԿՑԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ

Համալիրը կազմված է հետևյալ սարքերից՝

- տվյալների հաղորդման խմբային սարք,
- հաղորդակցային հատուկ էլեկտրոնային հաշվողական մեքենա

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՊՈՐԴԱՎԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՍԱՐՔ



Նախատեսված է առանձնացված լարային կապուղիներով կամ կարճալիք և գերկարճալիք ռադիոալիքներով հեռախոսային կողավորված տեղեկույթի ընդունման և հաղորդման համար:

ՍԱՐՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Ինտերֆեյս՝

RS232 (RS485)

Տեղեկույթի հաղորդման արագություն, բիտ/վրկ՝

75, 600, 1200, 2400, 4800

Կապի հեռավորություն՝

- Η-274Մ մարտիսով կազմված լարային կապուղով, կմ
- ռադիոկապուղով՝

մինչև 5

որոշվում է

ռադիոկայանի տիպով

4, 8, 12, 16, 20

27

ոչ ավելի, քան 30

ոչ պակաս, քան 10000

-20 ÷ +50

ոչ ավելի, քան 98

Լարային կամ ռադիոկապուղիների թիվը, հատ

Սնուցման լարումը, Վ

Սպառման հզորությունը, Վտ

Սիջին աշխատատևողությունը մինչև խափանում, ժ

Զերմաստճանի աշխատանքային տիրույթը, °C

Շրջակայքի հարաբերական խոնավությունը, %

Եզրաշափքը, մմ

- չորս կապուղով՝

265 x 365 x 55

- քանի կապուղով՝

265 x 365 x 203

ՀԱՊՈՐԴԱԿՑԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱԾՎՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ



Հաղորդակցային մեքենան հաշվողական բավարար միջոցներով հագեցած, հաղորդակցային և ուղևարական մեծ հնարավորություններ ունեցող, թերև, դիմացկուն, դյուրակիր, հատուկ հաշվողական սարք է: Սարքը նախատեսված է դիվիզիոնի, գումարտակի, մարտկոցի հրամանատարների ավտոմեքենաները համարելու, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, դրանք տարածքային հաշվողական ցանցում միավորելու համար:

ՍԱՐՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Պրոցեսոր	Geode Gx-300
Օպերատիվ հիշողության սարք, Մբայտ	128
Կուտակիչ՝ կոչում մազնիսական սկավառակի վրա, Գբայտ	2,1
Compact Flash սկավառակ, Մբայտ	128
Հարք դիսպլեյ՝	միագույն, 1/4 VGA
Արտապատկերման հնարավորությունը՝	320 x 240 պիքսել
Արտապատկերման մակերեսը, մմ	115 x 86
Հաջորդական պորտեր՝	COM1, COM2
LPT գուգահեռ պորտը՝	SPP, EPP, ESP
Համապատանի պորտը՝	բանելակարգերին սատարող
Մայրուղային հաղորդագիծը՝	RS485
Հաջորդական հաղորդագծերը՝	USB1, USB2
Տեղական ցանցը՝	Ethernet, 10/100 Base-T
Զայնային (AUDIO) կապուղին՝	AC" 97 համատեղելի
Լարային կամ ռադիո- կապուղին, հատ	2
Ներդրված GPS ACE-III ռադիոռեզունիչն ապահովում է՝	
– կոռորդինատների որոշման ճշգրտություն, մ	մինչև 5
– տեղաշարժման արագության չափման ճշգրտություն, մ/վրկ	0,1
– ժամանակի չափման ճշգրտություն, նվրկ	95
Ծածկագրման ներդրված սարքով տեղեկույթի հաղորդման (ընդունման) ծածկագրման (վերծանման)	
արագությունը, Կրայտ/Վրկ	60
Սնուցման լարումը, Վ	10 – 17
Սպառման հզրությունը, Վտ	ոչ ավելի, քան 25
Միջին աշխատատևորությունը մինչև խափանում, Ժ	ոչ պակաս, քան 10000
Զերմաստճանի աշխատանքային տիրույթը՝	-20 ÷ +50°C
Ծրջապատի հարաբերական խոնավությունը՝ 25 °C դեպքում, %	ոչ ավելի, քան 98
Եզրաչափը, մմ	290 x 230 x 78
Զանգվածը, կգ	ոչ ավելի, քան 5,8

**ՀԱՎԱՏԱՆԿԱՅԻՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՍՏԱՒՐՆԵՐԻ
ԱՐՁԱԿՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՎԱՐԺԱՍԱՐՔ**



Վարժասարքային համալիրը ուսումնավարժական միջոց է, որը նախատեսված է օպերատորների պատրաստման համար: Տարբեր մարտական իրադրություններում և եղանակաժամանակային պայմաններում՝ այն ապահովում է օպերատորների ուսուցում իրականին մոտ պայմաններում և նրանց գործողությունների գնահատում՝ տվյալ իրադրությունում:

Վարժասարքային համալիրը կազմված է իրահանգչի համար մեկ աշխատատեղից և օպերատորների համար մինչև երեք աշխատատեղերից, որոնք մտնում են մեկ միասնական տեղային ցանցի մեջ:

Բոլոր աշխատատեղերի մոնիթորների վրա նմանարկվում են՝
 – տեղանքը (լեռնային, անտառային, հարթավայրային և այլն),
 – տարվա ժամանակը (ամառ, ձմեռ և այլն),
 – եղանակային պայմանները (արևոտ, ամպամած, անձրևային և այլն),
 – նշված տեղում մինչև երեք անշարժ և շարժական թիրախների տեղակայում՝ 500–4000 մ հեռավորության վրա,
 – թիրախի շարժում՝ ճակատային, թևային կամ ճակատաթևային՝ 10–80 կմ/ժամ արագությամբ:

Օպերատորների գործողությունների վերահսկումը կատարվում է՝
 – օրյեկտիվորնեմ՝ արդյունքների գնահատման անհոփագողով,
 – սուբյեկտիվորնեմ՝ տեսողական (ըստ հրահանգչի աշխատատեղի էլեկտրական արտացոլված իրադրության պատկերի):

Վարժասարքային համալիրն ապահովում է ստուգման արդյունքների գրանցում և արխիվացում:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Սննան լարումը միաֆազ ցանցից, Վ	220 ± 10
Սպառվող հղորությունը, Վտ	ոչ ավելի, քան 1200
Զերմաստիճանի աշխատանքային տիրույթը, $^{\circ}\text{C}$	$+10 \div +40$
Հարաբերական խոնավությունը 25°C դեպքում, %	80
Անընդմեջ աշխատաժամանակը, ժ	ոչ ավելի, քան 16
Սիջին կենսաշրջանը, ժ	10000
Տեղաբաշխման պահանջվող նվազագույն մակերեսը, m^2	16

**Ծփումների համար՝ «Երևան» ՓԲԸ, հեռ. (37410) 27 53 96, 27 74 12,
ֆաքս՝ (37410) 27 68 52, 27 67 15, Էլ. փոստ՝ ycerdi@ycrdi.am, Էլ. կայք՝ www.ycerdi.am**

գապես պայմանավորված է նանոնյութերի ու նանոկառուցվածքների աճեցման և հետազոտման մեթոդներում առկա մեծ առաջընթացով:

Նանոտեխնոլոգիաների վերը բերված նկարագրումից հետևում է, որ նանոնյութերի համար կարևոր են չափերը⁴: Բանն այն է, որ սովորական ժամանությունում մարմինների ուսումնասիրության ժամանակ դրանք կազմող միկրոմասնիկների քնութագրերը միջինացվում են և ի հայտ չեն գալիս: Այդպիսի միջինացված քնութագրերից են, օրինակ, խտորյունը և Յունգի մորուլ՝ մեխանիկայում, էլեկտրական դիմադրությունը և մագնիսացվածությունը՝ էլեկտրամագնիսականության տեսությունում, դիէլեկտրական քափանցելիությունը՝ օպտիկայում, և այլն: Սակայն երբ մարմնի չափերը փոքրանում են մինչև նամոներեր, նա ձեռք է բերում նոր հատկություններ, որոնք չունեն նոյն նյութի մեծ ծավալ ունեցող նմուշները, և, ինչը առավել կարևոր է, այդ նոր հատկությունները կախված են նմուշի չափերից: Դա վերաբերում է մարմինների էլեկտրական, մագնիսական, օպտիկական, սեգմետաէլեկտրական, մեխանիկական և այլ հատկությունների:

Նանոնյութերի և նանոմասնիկների վարքի այդպիսի փոփոխությունը տեղի է ունենում երկու հիմնական պատճառով⁵:

Առաջինը նանոնյութի մեծ տեսակարար մակերեսն է:

$$S = A / \rho V,$$

որտեղ՝ A -ն նանոմասնիկի արտաքին մակերեսն է, V -ն՝ ծավալը, իսկ ρ -ն՝ նյութի խտորյունը:

Նանոմասնիկի ատոմների մի զգալի մասը գտնվում է նրա մակերևույթին, ինչի հետևանքով էլ նանոմետրական չափերի հատիկներից բաղկացած նյութի տեսակարար (մեկ գրամի հաշվով) մակերեսը կարող է կազմել $100 \div 400 \text{ } \mu^2$: Նշենք, որ այդպիսի մեծ տեսակարար մակերեսները բնութագրական են նաև մեծ քիմիական ակտիվությամբ օժտված կատալիզատորների, զանազան մետաղական և օրոխային փոշիների համար: Նանոկառուցվածքային նյութերի շատ հատկություններ, օրինակ, էլեկտրադիմադրությունը և քիմիական ակտիվությունը, ևս էապես կախված են նրանց տեսակարար մակերեսից:

Նանոնյութերի մի կարևոր դաս են հատուկ պոլիմերային նանոկոմպոնենտները, որոնցում կավել նանոհատիկները, ներառվելով պոլիմերային մատրիցում, զգալիորեն մեծացնում են նրա կարծրությունը՝ միաժամանակ փոքրացնելով խոնավանցիկությունը:

Բազմաթիվ կիրառություններ ունեն մետաղների և կիսահաղորդիչների նանոհատիկային փոշիները: Օրինակ՝ ցինկի օքսիդի նանոչափային մասնիկներն օգտագործվում են արեգակնային էլեկտրաների ստեղծման, իսկ երկարի նանոմասնիկները՝ եռարձորերինով վարակված գրունտային ջրերի մաքրման համար: Հայտնի է նաև,

⁴ Տես Է. Ղազարյան, Ա. Պետրոսյան, Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքները: Ե., 2005, նաև՝ H. S. Nalwa. Handbook of Nanostructured Materials and Nanotechnology. Boston, 2000, Vol. 1—5:

⁵ Տես Ռ. Ջոնս, նշ. աշխ.:

որ նանոկառուցվածքային կերամիկական ծածկույթները ռազմանավերի իրանները դարձնում են ավելի հարվածադիմացկուն և երկարակյաց⁶:

Այսօր նանոմաշտարային նյութերից առավել մեծ ուշադրություն են գրավում ածխածնային կատարյալ մակրոնուկուլային կառուցվածքները՝ ֆուլերները և նանոխողովակները⁷: Վերջիններս, կախված իրենց ատոմների փոխասավորությունից, ծառայում են որպես մետաղական կամ կիսահաղործային նանոլարեր: Նանոխողովակներն իրենց կատարյալ կառուցվածքի շնորհիվ ունեն մոտ 30 անգամ ավելի մեծ ամրության պաշար, քան նման պողպատն լարերը: Դրանց ջերմահաղորդականությունը 50 %-ով գերազանցում է աղամանով ջերմահաղորդականությունը: Այդ հատկությունների շնորհիվ նանոխողովակներն ունեն մի շարք կիրառություններ էլեկտրոնիկայում և սպորտում (օրինակ՝ որպես թենիսի բարձրորակ թևճակներ): Ենթադրվում է, որ նանոխողովակները մոտ ապագայում կծառայեն նաև որպես վառելիքային մարտկոցների տարրերի ջերմաէլեկտրական փոխակերպիչների կարևորագույն բաղադրամասեր, ինչպես նաև՝ որպես հոսանքատարներ:

Նանոկառուցվածքային նյութերի լայն օգտագործման հրկորոդ պատճառն ավելի կարևոր է. դրա հիմքում այն փաստն է, որ սովորաբար նյութի ամեն մի հատկության հետ կապված է ինչ-որ բնուրագրական երկարություն⁸: Օրինակ՝ հայտնի է, որ մետաղների էլեկտրահաղորդականությունը պայմանավորված է ջերմային տատանումներ կատարող ատոմներով էլեկտրոնների ցրմամբ: Տվյալ երևույթը բնուրագրվում է այսպես կոչված ազատ վազքի երկարությամբ, այսինքն՝ այն միջին հեռավորությամբ, որը էլեկտրոնն անցնում է երկու իրար հաջորդող ցրումների միջև: Սովորաբար այն մի քանի հարյուր նմ-ի կարգի մեծություն է: Եթե մարմնի չափերը դառնում են ազատ վազքի երկարության հետ համեմատելի, էլեկտրափառադրությունը կախված է լինում մարմնի չափերից: Իրավիճակը արմատապես փոխվում է, եթե մարմնի չափերն այնքան են փոքրանում, որ համեմատելի են դառնում էլեկտրոնների քվանտային (որը Բրոյլի) ալիքի երկարության հետ, որը, օրինակ, կիսահաղործիչների դեպքում 10 նմ-ի կարգի է: Նման դեպքում ի հայտ են գալիս նոր՝ քվանտաչափային, երևույթներ, որոնց հետևանքով փոփոխվում են նանոչափային մարմնի բոլոր ֆիզիկական հատկությունները:

Հասկանալի է, որ նանոէլեկտրոնիկայի զարգացման գործում էական է դառնում նյութերի և տարակառուցվածքների աճեցման տեխնոլոգիաների դերը: Վերջին տասնամյակներում դրանք նույնպես զգալի զարգացում են ապրել: Նանոկառուցվածքների ստեղծման նորագույն տեխնոլոգիական մեթոդներից են, առաջին հերթին, մոլեկու-

⁶ Տե՛ս T. Abraham. Nanoceramics, Nanotubes and Nanocomposites Paving the Way for Nanotechnology Revolution—a Review of the Industry and Markets; M. Mukhopadhyay et. al. Surfaces and Interfaces in Nanostructured Materials and Trends in LIGA, Miniaturization and Nanoscale Materials. «Materials Processing and Manufacturing Division Fifth Global Symposium». Warrendale, 2004, PP. 247—269:

⁷ Տե՛ս M. H. Dresselhaus, G. Dresselhaus, P. C. Eklund. Science of Fullerenes and Carbon Nanotubes. San Diego, 1995:

⁸ Տե՛ս E. Ղազարյան, U. Պետրոսյան, 62. աշխ.:

լային փնջային էպիտաքսիան (MBE) և մետաղ-օրգանական միացություններից գաղային էպիտաքսիան (MOCVD): Այս մեթոդները ռեակցիաներ են, որոնք տեղի են ունենում տարբեր միացությունների բարակ շերտերի էպիտաքսային աճման պրցեսում համապատասխան բաղադրիչների՝ ջերմային եղանակով ստեղծվող նորեկուլային կամ ատոմային փնջերի և գերբարձր վակուումում գտնվող, համեմատաբար ցածր ջերմաստիճանով տակդիրի միջն:

Բացի բյուրեղների աճեցման մեթոդներից, լայն զարգացում են ստացել նաև խածառման, վիմագրման, իոնային ներկալման, մետաղացման և այլ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս պրոցեսների ճշտությունը հասցնելու նանոնմետրի: Նշված տեխնոլոգիաների կիրառմամբ կարելի է աճեցնել այնպիսի գերբարակ ($\leq 10 \text{ նմ}$) կիսահաղորդչային շերտեր, որոնք օժտված լինեն մեծ համասեռությամբ, բյուրեղական ցանցի բարձր աստիճանի կատարելությամբ և ունենան բաղադրության ու լեգիրման փոփոխման տրված պրոֆիլով⁹: Այդպիսի շերտերի հիմքի վրա հեշտությամբ ստեղծվում են շատ բարակ լարեր (քվանտային լարեր) և նանորութեղիկներ (քվանտային կետեր):

Բարձրահաճախական էլեկտրոնիկայի և օպտոէլեկտրոնիկայի համար վերը նշված տեխնոլոգիական եղանակներով գալիումի արտենիոի, ինողիումի արտենիոի, գալիումի նիտրիոի և A_3B_5 ու A_2B_6 տիպի այլ միացությունների հիմքի վրա արդեն ստեղծվել են տարբեր նանոկառուցվածքներ, որոնք որակական նոր հնարավորություններ են ընձեռում գերարագագործ սարքերի, լազերների, ֆոտոդետեկտորների և այլ սարքերի մշակման համար: Նշված կառուցվածքների հիմքի վրա ներկայումս ստեղծված են 50 պիկովայրկյան ($50 \cdot 10^{-12} \text{ վրկ}$) փոխարկման ժամանակով և $20 \text{ Գ} \cdot \text{Հ}$ ($20 \cdot 10^9 \text{ Հ}$) առավելագույն աշխատանքային հաճախականությամբ տրանզիստորներ, նաև պարզվել է, որ կան ավելի լավ բնութագրերով տրանզիստորների ստեղծման հնարավորություններ¹⁰:

Օպտոէլեկտրոնիկայի բնագավառում նույնպես ստեղծված են այնպիսի սարքեր, որոնք իրենց բնութագրերով զգալիորեն գերազանցում են նմանատիպ ավանդական սարքերը¹¹: Դրանցից են՝ քվանտային փոտերով ներարկումային (ինժեկցիոն) և կասկադային հետերոլազերները, լայնական $p-n$ անցումներով շերտավոր հետերոլազերների հիմքի վրա ստեղծված բազմաալիքային ճառագայթիչները, սպեկտրի կապույտ-կանաչ տիրույթում գործող հետերոլազերները և ֆոտոդիոդները, գերցանցերի, քվանտային փոտերի և քվանտային կետերի կիրառման վրա հիմնված հեղեղային շեմային ֆոտորունիչները, վարիզոնային կառուցվածքների հիմքի վրա ստեղծված հեղեղային ֆոտորունիչները, ֆոտոտրանզիստորները և այլն: Քվանտային կետերով հետերոլազերներում հոսանքի շեմային խորությունը հաջողվել է նվազեցնել մինչև $100 \text{ } \text{Ա}/\text{սմ}^2$, որը ներարկումային լազերների համար ծերպ բերված ամենափորձ հնա-

⁹ Տես X. Կեյս, M. Պանիշ. Լազերы на гетероструктурах. М., 1981, тт. 1, 2:

¹⁰ Տես Ю. Պոջելա. Ֆизика быстродействующих транзисторов. Вильнюс, 1989:

¹¹ Տես D. Bimberg, M. Grundman, N. Ledentsov. Quantum Dot Heterostructures. Berlin, 1999:

րավոր արժեքն է: Այդ լազերները ներկայում լայնորեն օգտագործվում են խտասկավառակների ընթերցման և գրառման համար:

Կիսահաղորդչային բազմաշերտ նանոկառուցվածքների ֆիզիկայի նվաճումները մեծ հեռանկար ունեն նաև արևային էներգիայի արդյունավետ փոխակերպիչների ստեղծման առումով: Երկանցում նանոկառուցվածքներով արևային տարրերի O-Q-Q-ն ներկայում արդեն հասցված է ավելի քան 30 %-ի¹²:

Հաջողորդչամբ շարունակվում են քվանտային կետերի կիրառմամբ փոխակերպիչների և նոր սերնդի համակարգչների տարրային հենք կազմող տրամաբանական տարրերի ստեղծման աշխատանքները: Քվանտային կետերի գերբարձր խսությունը և դրանցում տեղայնացման մեծ էներգիաները հնարավորություն են տալիս ստեղծելու նոր սերնդի հիշողորդչան տարրեր, որոնք հիմնված են մեկ էլեկտրոնի տեղափոխության վրա: Նման սարքերում ավանդական էլեկտրական լիցքերի հոսանքի փոխարեն հաճախ օգտագործվում է սպինային հոսանքը, ինչը հնարավորություն է տալիս ստեղծելու սպինային տրանզիստորներ և դրանց կիրառմամբ ստանալու տեղեկույթի փոքրագույն միավորը՝ քվանտային բիտը: Նոր զարգացող այս բնագավառը կրում է «սպինատրոնիկա» անվանումը¹³:

Գալիումի և ինդիումի նիտրիդների տիպի նյութերի հիմքի վրա վերջին երկու երեք տարվա ընթացքում ստեղծվել են կապույտ-կանաչ և մանուշակագույն լույսի ոչ կոհերենտ և կոհերենտ աղբյուրներ¹⁴: Դրանց լայնածավալ արտադրությունը հնարավորություն կտա լուծելու ժամանակակից էլեկտրոնիկայի երկու շատ կարևոր խնդիրներ. առաջննը՝ ժամանակակից հաշվողական մեքենաների՝ տեղեկույթի գրանցման և ընթերցման հանգույցներում կարմիր լազերների փոխարինումն է կապույտ լազերներով, ինչի շնորհիվ ավելի քան չորս անգամ կմնանա տեղեկույթի գրանցման խսությունը, երկրորդը՝ սպիտակ լույսի արդյունավետ կիսահաղորդչային աղբյուրների ստեղծումը:

Նանոտեխնոլոգիաները լայնորեն կիրառվեն նաև ռազմական ոլորտում¹⁵: Դա առաջին հերթին վերաբերում է դրանց միջոցով զանգվածային ոչնչացման գենքից բնակչության պաշտպանության համակարգերի ստեղծմանը¹⁶: Այդ նպատակին են ծառայելու նանոնյութերի կիրառմամբ ստեղծված տարրեր տիպի կոլեկտորները և դետեկտորները, որոնք կարող են ոչ միայն կլանել և կուտակել քիմիական կամ կենսաբանական գեներերում օգտագործվող բունավոր նյութերը (զարին, V-x, անտրա-x,

¹² Stu T. Takamoto, E. Ikeda, H. Kurita and M. Ohmori. Applied Physics Letters. 1997 (<http://eu.wiley.com/WileyCDA/WileyTitle/productCd-0471973882.html>):

¹³ Stu D. Awschalom et. al. Semiconductor Spintronics and Quantum Computation. 2002 (<http://www.springer.com/materials/nanotechnology/book/978-3-540-42176-4>):

¹⁴ Stu Hideki Hirayama. Quaternary InAlGaN-based High-Efficiency Ultraviolet Light-Emitting Diodes. «Journal of Applied Physics», 2005, Vol. 97:

¹⁵ Stu Roncone Kelly. Nanotechnology: What Next-Generation Warriors Will Wear. «JOM», 2004, Vol. 56(1), ևսև J. G. Reynolds, B. R. Hart. Nanomaterials and Their Application to Defence and Homeland Security. «JOM», 2004, Vol. 56(1):

¹⁶ Stu Զ. Գ. Ռեյնոլդս, B. R. Հարթ, ևշիւ.:

տետրադրոտկսիններ և այլն), այլև որոշել, թե ինչ քունանյութ է օգտագործվել: Նման կոլեկտորների և դետեկտորների հիմքն են սիլիցիումային ՄԴԿ (մետաղ-դիէլեկտրիկ-կիսահաղորդիչ) կառուցվածքները, ծակոտկեն սիլիցիումային էլեկտրոդները, քունավոր նյութի մոլեկուլներով նախանշված օրգանական պոլիմերները և այլն:

Նանոտեխնոլոգիաները մեծ հեռանկարներ են բացում նաև սկզբունքորեն նոր տիպի գինվորական հանդերձանքի ստեղծման համար¹⁷: Սպասվում է, որ մոտ ապագայում գինվորական համազգեստը կդադարի պարզապես հազուստ լինելուց: Նախ՝



ա)



բ)



գ)

Նանոտեխնոլոգիաների կիրառման օրինակներ.

ա) քամելենային արտահագուստ, բ) մանրագործվածքում ներկառուցված ստեղնաշար,
ց) համազգեստի թևքում ներկառուցված դեկավարման վահանակ

այն կլինի շատ թեթև և կունենա մի շարք նոր հատկություններ, ինչպիսիք են գինվորի պաշտպանությունը քելորներից և գնդակներից, ճառագայթումից, բարձր և ցածր ջերմաստիճաններից, խոնավությունից, քիմիական ու կենսաբանական գեներից, գինվորին կօժտի գերմարդկային ուժով, կվերահսկի նրա առողջական վիճակը, ինչպես նաև որոշակի հեռավորության վրա կապահովի հրամանատարի և գինվորների միջև ակնքարբային կապ: Այդ նպատակով, օրինակ, ամերիկյան բանակի պատվերով ծավալուն գիտահետազոտական աշխատանքներ են սկսվել Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտում (ԱՄՏ): Եվ պատահական չէ, որ որպես նման բարդ խնդրի լուծման բանալի են ընտրված նանոնյութերն ու նանոսարքերը: Այս բնագավառում կատարվող աշխատանքները կարելի է բաժանել հետևյալ ուղղությունների¹⁸:

¹⁷ Տես Ռ. Կիլի, Աշ. աշխ.:

¹⁸ Տես նոյն տեղում:

1. Դյուրաքիր և թիրի գրահահանդերձի սրեղծում: Այդ գրահով կարելի կլինի պաշտպանել ոչ միայն զինվորի իրանը, այլև նրա ձեռքերն ու ոտքերը: Զրահահանդերձը պետք է կազմված լինի նանոմասնիկներից բաղկացած մոլեկուլային շղթաներով հյուսվածքներից, որոնք այնքան բարակ ու դյուրաքեր լինեն, որ հնարավորություն տան ձաձկելու վերջույթները, և այնքան ամուր, որ գրահարածկոնի նման կարողանան պաշտպանել զինվորի իրանը: Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների նպատակն է արհեստական պոլիմերների ու պոլիմերային նանոբելիկների միջոցով վերականգնել սարդուստայնի թելի յուրօրինակ կառուցվածքը, որը, ինչպես հայտնի է, պոլիմեր է և բաղկացած է միմյանց հաջորդող փափուկ (առածգական) և կոշտ (բյուրեղական) հատվածներից: Այդ նպատակով հետազոտողներն ուսումնասիրում են նաև այնպիսի բնական պաշտպանական վահանների կառուցվածքը, ինչպիսիք են միջատների արտաքին գրահածածկույթը և կրիաների վահանը:

2. Նանոմկանների սրեղծում: Նանոմկանները նախատեսվում է ներառել զինվորական համազգեստի արտաքին և ներքին շերտերում: Նանոմկանը, մարդու մկանի նմանությամբ, հյուսվելու է հատուկ մանրաթելերից, որոնք իրենց հերթին հագեցած են լինելու տարրեր տեսակի նանոնյութերով ու նանոսարքերով: Հիմնական զարաֆարն այն է, որ նանոմկանը, արձագանքելով արտաքին էլեկտրական գրգիշներին, կարող է իրական մկանի նման կծկվել կամ բուլանալ՝ զինվորին տալով լրացուցիչ մեծ ուժ գործադրելու հնարավորություն: Համազգեստի ներքին շերտում տեղադրված նանոմկանները, ծգվելով, կարող են լրացուցիչ ամրություն հաղորդել զինվորի իրանին՝ օգնելով, որ նա առանց հոգնելու կրի ծանր բեռներ և զինամքերը: Աշխատանքներ են տարվում նաև զինվորական համազգեստի փափուկ և դյուրաքեր գործվածքը անհրաժեշտության դեպքում նանոմկանային խրանիչների միջոցով դարձնելու օժանդակող կոշտ կաղապար, օրինակ՝ ջարդված ոտքի կամ ձեռքի համար:

3. Զինվորական համազգեստի համալրումը քիմիական և կենսաբանական զգայարարներով: Ինչպես արդեն նշվել է, ապագայի զինվորական համազգեստը պետք է ծառայի նաև որպես քիմիական և կենսաբանական բունավոր նյութերից պաշտպանող շերտ: Հեռանկարում այն պետք է ունակ լինի գրանցելու օրում փտանագոր նյութերի առկայությունը և ապահովելու զինվորի պաշտպանությունը՝ նրան հնարավորություն տալով կենտրոնանալու այլ խնդիրների վրա և ազատելով ավելորդ ծանր պաշտպանական հանդերձանք կրելու անհրաժեշտությունից: Այս խնդիրների լուծնան համար համազգեստը, բացի տարրեր տեսակի զգայարարներից, պետք է ունենա նաև պաշտպանիչ թելեր և հյուսվածքներ, որոնք, արձագանքելով վտանգի առկայությանը, ի վիճակի լինեն փակելու զինվորի օրգանիզմ վարակիչ մանրէների և բունավոր նյութերի ներթափանցման ճանապարհը: Օրինակ՝ որոշ հետազոտողներ փորձում են համազգեստի նյութի մեջ ստեղծել զգայուն նանոծակուսիներ, որոնք կփակվեն, եթե զգայարարները գրանցեն օդում կամ շրջապատում բունավոր նյութերի առկայությունը:

4. Քամելիոնային արդարագուստի սրեղծում: Այդպիսի արտահագուստը, կախված զինվորի գտնվելու տեղանքից, ընդունում է այս կամ այն գույնը կամ նախ-

շանկարը: Նման փոփոխությունները կատարվում են զինվորի վրա ամրացված անձնական մանրահամակարգչի հրահանգով՝ ըստ նախապես մշակված ծրագրի: Այս դեպքում զինվորներն ազատվում են իրենց հետ տարբեր տեսակի արտահագուստներ տանելու անհրաժեշտությունից:

5. Ֆիզիոլոգիական իրավիճակի մշտագննում: Այս նպատակով զինվորի արտահագուստը պետք է ունենա մշտագննման մի այնպիսի լրացուցիչ համակարգ, որը չափի նրա արյան ճնշումը, մարմնի կամ մաշկի ջերմաստիճանը, սրտի զարկերի թիվը և այլ ֆիզիոլոգիական պարամետրներ: Դրանք կողային համակարգչի և կապի միջոցների կիրառմամբ կհաղորդվեն զինվորի առողջությանը մշտապես հետևող բժիշկներին: Նման ծևով հրամանատարին և բժշկին տեղեկույթ կհաղորդվի ռազմադաշտում զինվորների ստացած վնասվածքների մասին, ինչի հիման վրա էլ արագ որոշում կկայացվի անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց տալու վերաբերյալ:

6. Էլեկտրոնային մանրագործվածքների սրելդում: Դրանք հատուկ գործվածքներ են, որոնց վրա արտատպված են բարակ մետաղական լարեր և շղթաներ: Ներկայում զինվորի հանդերձանքի կշռի գգալի մասն են կազմում զանազան էլեկտրական լարերը և մալուխները, որոնցով իրար են միացված նրա վրա գտնվող էլեկտրոնային սարքերը: Եթե այսպիսի լարերի և մալուխների փոխարեն միացումները կատարվեն այսպես կոչված էլեկտրոնային մանրագործվածքի միջոցով, ապա հնարավոր կլինիկ գգալիորեն փոքրացնել զինվորի ուղերեուք:

Նախատեսվում է, որ վերը նշված նանոտեխնոլոգիական մշակումների մեծ մասը մինչև 2015–2020 թթ. կկիրառվի նորագույն զինվորական համագեներում և հանդերձանքում:

Վերջում նշենք, որ 21-րդ դարում հասարակության զարգացման վրա նանոտեխնոլոգիաների գործած ազդեցությունը կարող է նույնանա վճռորոշ լինել, որքան ջերմային շարժիչներ՝ 19-րդ դարում, կամ էլեկտրականությանը՝ 20-րդ դարում¹⁹: Բացի ռազմական բնագավառից, էլեկտրոնիկայից, կապի և հաշվողական համակարգերից, նանոտեխնոլոգիաները արմատապես կվերափոխեն մարդու կենսագործունության համար անհրաժեշտ բազմաթիվ ծառայություններն ու սարքավորանքը, այդ թվում՝ վառելիքային մարտկոցների ունակությունը, արեգակնային մարտկոցների ՕԳ-ն, սննդամբերքի վերամշակումը, ջրի մաքրումն ու վնասագերծումը, դեղանյութերի ներմուծումը մարդու օրգանիզմ, կոսմետիկական քսութերը և այլն: Եվ զարմանալի չէ, որ այժմ տարբեր երկրների կառավարություններ և մասնավոր ձեռնարկություններ նանոտեխնոլոգիաների զարգացման համար մեծ ներդրումներ են կատարում: Այսպես, միայն 2005–2008 թթ. ԱՄՆ-ում այդ նապատակով նախատեսվում է ծախսել 3,7 մլրդ ԱՄՆ-ի դրամ, իսկ ճավոնիայում՝ մոտ 3 մլրդ: Եվրոպական Միությունը իր գիտահետազոտական մշակումների 7-րդ շրջանակային ծրագրով նախատեսում է նանոգիտության վրա 2007–2013 թթ. ծախսել

¹⁹Տես M. K. Roco, P. C. Уильямс и П. Аливисатос. Нанотехнологии в ближайшем десятилетии. М., 2002:

մոտ 7,5 մլրդ ԱՄՆ-ի դոլար²⁰: Նման ամնախաղեաք ֆինանսական ներդրումների համար կարևոր պատճառ են նաև կանխատեսվող մեծ շահույթները: ԱՄՆ-ի Ազգային գիտական հիմնադրամի գնահատականներով այս տասնամյակի վերջում համաշխարհային շուկայում նանոտեխնոլոգիաների բաժնի ծավալը կկազմի մոտ 1 տրիլիոն ԱՄՆ-ի դոլար: Սակայն սպասվելիք բոլոր շահույթներից, մեր կարծիքով, ամենակարևորը կիմի 21-րդ դարում գիտության և տեխնիկայի համընդհանուր զարգացման որակական նոր աստիճանի նվաճումը:

Հայաստանում, սկսած անցյալ դարի 70-ական թվականներից, նույնպես ձևավորվել են նանոկառուցվածքների և նանոնյութերի ուսումնասիրման գիտական դպրոցներ: ՈՒսումնասիրվել են տարբեր տիպի ցածր չափայնության համակարգերի (գերբարակ թաղանթներ, քվանտային լարեր, քվանտային կետեր, գերցանցեր և այլն) էլեկտրոնային, օպտիկական և կիմիտիկական հատկությունները: Վերջին տարիներին այդ աշխատանքները հաջողությամբ շարունակվել են «Կիսահաղորդչային նանուէլեկտրոնիկա» հանրապետական նպատակային ծրագրի շրջանակներում: Ներկայումս նանուէլեկտրոնիկայի և նանոտեխնոլոգիաների բնագավառում աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար խիստ անհրաժեշտ է ստեղծել «Նանոտեխնոլոգիաների հանրապետական կենտրոն», որի նպատակները պետք է լինեն՝

–հանրապետության տարբեր կազմակերպություններում նանոհամակարգերի ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և մեխանիկական հատկությունների ուսումնասիրման ուղղությամբ կատարվող գիտական հետազոտությունների զարգացումը և համադասումը,

–օժանդակումը այս բնագավառի կազմակերպությունների նորարարական գործունեությանը,

–ժամանակակից չափանիշներին համապատասխան գիտատեխնիկական, ենթակառուցվածքային և մեթոդական օգնությունը,

–օժանդակումը համաշխարհային ստանդարտներին համապատասխանող նոր գիտատար արտադրանքի մշակմանը, դրա մանրսերիական արտադրության կազմակերպմանը և շուկայում փորձարկմանը,

–օգնությունը հեռանկարային գիտահետազոտական խմբերին նոր գիտական գաղափարների ու մշակումների համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հայթայթման գործում,

–երիտասարդ կադրերի պատրաստման նպատակով օժանդակումը նանոտեխնոլոգիաների բնագավառում կատարված հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքների ներդրմանը բուհերի ուսումնական գործընթացում:

²⁰ See M. C. Roco. Government Nanotechnology Funding: An International Outlook (www.nano.gov/html/res/IntlFunding/Roco.htm):

НАНОТЕХНОЛОГИИ И ИХ ПЕРСПЕКТИВЫ

*С. Г. ПЕТРОСЯН, доктор физико-математических наук, профессор,
декан физико-технического факультета Российско-армянского (Славянского)
государственного университета*

РЕЗЮМЕ

Нанотехнологии позволяют на базе использования уникальных свойств веществ с размерами порядка 10^{-9} м разрабатывать материалы и изделия, по своим основным эксплуатационным характеристикам значительно превосходящие существующие. Наряду с широким спектром научных и гражданских применений, нанотехнологии предоставляют широкие возможности для новейших разработок в военной сфере, таких, как создание: легкой, эластичной бронеодежды; работающих по команде наномышц; химических и биологических сенсоров, интегрированных в обмундирование и защищающих от поражающих факторов химического и биологического оружия; меняющей маскировочную окраску одежду типа «хамелеон»; датчиков мониторинга физиологического состояния военнослужащего; тканей с интегрированными тоководами, электрическими цепями и т. д.

В Армении нанотехнологии пока находятся в стадии освоения, однако научно и экономически обоснованная целенаправленная деятельность властей позволит использовать имеющийся в республике научный потенциал для обеспечения их быстрого развития.

NANOTECHNOLOGIES AND THEIR PERSPECTIVES

*S. G. PETROSSYAN, Doctor of Physical-Mathematical Sciences, Professor,
Dean of the Faculty of Physics and Engineering
of the Russian-Armenian (Slavonic) State University*

SUMMARY

Nanotechnologies, on the basis of applying unique properties of the substances of 10^{-9} m size, allow to elaborate materials and articles, considerably surpassing the existing ones by their basic exploitational characteristics. Together with a wide spectrum of scientific and civil applications, nanotechnologies open up wide opportunities for the recent developments in the military sphere such as making of light, elastic armoured clothing; nanomuscles, operating at the command; chemical and biological sensors, integrated into the military uniform and protecting from the effects of the chemical and biological weapons; clothing of «chameleon»-type, changing its camouflage colouring; detectors monitoring serviceman's physiological state; fabrics with integrated current distributors, electric circuits, etc.

Nanotechnologies are still at the stage of assimilation in Armenia, however, the authorities' scientifically and economically grounded purposeful activity will allow to use the scientific potential, existing in the republic, to ensure their rapid development.

**1991 թ. ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՌՎՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ՈՒՄ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**

*L. L. ՈՒԼՈՒՔԱԲՅԱՆ, Ռուս-հայկական (Սլավոնական) պետական
համալսարանի համաշխարհային պարմուրյան
և ԵՊՀ հայոց պատմության ամբիոնների դասախոս*

20-րդ դարի 80-ական թվականների երկրորդ կեսին ԽՍՀՄ ղեկավարության վարած «վերակառուցման» քաղաքականությունը չէր նախատեսում գոյություն ունեցող խնդիրների արմատական լուծում և, հետևաբար, չկարողացավ երկիրը դուրս բերել ճգնաժամից ու կասեցնել երկիրի վիլուգման գործընթացը: Խորհրդային Սիությունում առկա ճգնաժամային երևույթների աճումը, տնտեսության շարունակական անկումը, ազգամիջյան հակամարտությունների ծավալումը, կայսերական կենտրոնի և հանրապետությունների միջև հակասությունների աննախադեպ սրումը խորը պառակտում մտցրեցին խորհրդային քաղաքական վերնախավի շարքերում: Երկրի ղեկավար Մ. Գորբաչովը, չունենալով հստակ դիրքորոշում, փորձում էր խուսանավել քաղաքական տարրեր խմբավորումների միջև, ինչն ի վերջո հանգեցրեց նրա քաղաքանության ձախողմանը:

1991 թ. առաջին ամիսներին աճեց հետադիմական ուժերի ազդեցությունը ԽՍՀՄ-ում վարվող քաղաքականության վրա: Երկրում սաստկացան բռնություններն ու կամայականությունները: Օգտվելով այն հանգանանքից, որ համաշխարհային հանրության ուշադրությունը սևեռված էր Պարսից ծոցի ճգնաժամին, Կենտրոնն ուժեղացրեց ճնշումը ԽՍՀՄ կազմում եղած ըմբոստացող հանրապետությունների և ժողովուրդների նկատմամբ: Հունվարի կեսերին Մերձբալթիկայում (հատկապես՝ Լիտվայում), ինչպես նաև Հարավային Օսեբիայում, Արցախում իրադրությունը կտրուկ սրվեց, խաղաղ բնակչության դեմ ուժ գործադրվեց, անմեղ նարդկանց արյուն թափվեց¹: Աղբբեջանը կենտրոնի աջակցությամբ շարունակում էր Արցախում իրականացնել տարիներ առաջ որդեգրած հայարավման քաղաքականությունը:

Նման գործողություններով Կրեմլը վարկաբեկում էր միութենական դաշնագրի բուն գաղափարը և իմաստագրկում Սիությունը պահպանելու հարցի վերաբերյալ հանրավեն, որը պետք է անցկացվեր 1991 թ. մարտի 17-ին: Ինչպես և սպասվում էր, հանրապետություններից մի քանիսը, այդ թվում նաև Հայաստանը, այդ հանրաքվեին դեմ արտահայտվեցին:

Հայաստանի Գերագույն խորհուրդը (ԳԽ) դեռ 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունել էր «Հայաստանի անկախության մասին հոչակագիրը», որով սկիզբ էր դրվել անկախ

¹Տես «Известия», 14 января и 15 января 1991 г.:

պետականության հաստատման գործընթացիմ²: Առաջնորդվելով «Հոչակագիր» սկզբունքներով՝ հանրապետության խորհրդարանը հունվարի 30-ի որոշմամբ նարտի 17-ի միութենական հանրաքեի հարցը համարեց չնախապատրաստված, իսկ դրա անցկացումը՝ անընդունելի³: Այս քայլով Հայաստանի ղեկավարությունը ձգում էր ծերազատվել Կենտրոնից և ամրապնդել իր իշխանությունը: Մարտի 1-ին որոշում ընդունվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու հարցով Հայաստանի Հանրապետության տարածքում հանրապետական հանրաքե անցկացնելով վերաբերյալ⁴: Հայաստանի ղեկավարության որոշմամբ այն պետք է անցկացվեր միութենական օրենսդրությանը համապատասխան՝ Կենտրոնի հետ հարաբերություններում ավելորդ լարվածություն չառելունքով: Սակայն դա միայն քաղաքական հաշվարկ էր: Այդ քայլը շնորհմեց անկախության ձգուող Հայաստանի նկատմամբ կենտրոնական իշխանությունների քաղաքականությունը. միութենական հանրաքեի անցկացումից Հայաստանի հրաժարականը ավելի խստացրեց կայսերական կենտրոնի քաղաքականությունը հանրապետության և հայ ժողովրդի նկատմամբ, և Հայաստանի դեմ ձեռնարկվեցին աննախադեպ պատժի գործողություններ:

Միութենական օրենսդրությամբ առաջնորդվելու հետևանքով (ինչի ջատագովն էր ՀՀ Գլուխական Լեռն Տեր-Պետրոսյանը) Հայաստանի անկախության հանրաքեն հետաձգվեց վեց ամսով՝ մինչև սեպտեմբեր: Այդ ընթացքում արմատապես փոխվելու էին խորհրդային տարածքում տիրող քաղաքական մքնոլորտը և, դրա հետ կապված, անկախության հանրաքեի իմաստն ու նշանակությունը:

1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին լայնածավալ ռազմական գործողություններ սկսվեցին Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի (ԼՂՄՍ), Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի, ինչպես նաև Աղբեջանի հետ Հայաստանի սահմանակից շրջանների հայ բնակչության դեմ⁵: Արցախսահայության բռնի տեղահանման այս նոր փուլի առանձնահատկությունն այն էր, որ հանցագործ ձեռնարկմանը այս անգամ աղբեջանական միլիցիայի և ավազակախմբերի հետ բացահայտ կերպով մասնակցում էին խորհրդային բանակի և ներքին գործերի ստորաբաժանումները:

Հայաստանի վրա նման ճնշում չէր կարող գործադրվել առանց ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության իմացության և օժանդակության: Կրեմլում ընդունվող որոշումների վրա զգալի ներգործություն ունեին հետադիմական ուժերը, մասնավորապես՝ ռազմաարդյունաբերական համալիրի ներկայացուցիչները: Նրանք խորհրդային կայսրության պահպանման ամենաարդյունավետ եղանակ համարում էին բռնի ուժի կիրառումը:

Ենելով օրեցօր բարդացող իրավիճակից՝ ՀՀ Գլուխական ապրիլի 25-ին հանդես եկավ ԽՍՀՄ ժողագուածավորների համագումարի արտահերթ նիստ հրավիրելու պա-

² Տես «ՀՀ Գլուխակագիր», 1990 թ. օգոստոսի 31, հմ. 16, էջ 4–6:

³ Տես «ՀՀ Գլուխակագիր», 1991 թ. հունվարի 31, հմ. 2, էջ 52:

⁴ Տես «ՀՀ Գլուխակագիր», 1991 թ. մարտի 15, հմ. 5, էջ 3–4:

⁵ Տես B. B. Արյունյան. Հոբելիա և Հայաստան. Ե., 1994, վ. 4, ս. 10–25, և այլն Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. 1159, գ. 1, պ. 98, պ. 52—57:



○ π ³Y, 2½³Í, áóÃÍ³Y Ñ π ³ á³ñ³Í, 1990 Å.

հանջով, որը, սակայն, մերժվեց⁶: Ստեղծված պայմաններում ՀՀ իշխանությունների կողմից այդ համագումարին ապավիճնելը անհիմն էր, քանի որ ԽՍՀՄ-ը, այնուամենայնիվ, շարունակում էր մնալ ամբողջատիրական երկիր, և ժողովադատական վորոշիչ կարող ինքնուրույն որոշումներ կայացնել: Կենտրոնի թելադրանքով և ռազմական միջամտուրյամբ իրավուրյունը տարածաշրջանում ավելի սրբեց: Հայաստանը պատերազմի մեջ ներքաշելու ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների վարած քաղաքանությունը ՀՀ Գլուխ գնահատում էր որպես հայ ժողովրդի և նրա օրինական իշխանությունների դեմ ուղղված պետական ահարեւշուրյան քաղաքանություն, իսկ իրականացվող գործողությունները՝ որպես ազրեսիա ՀՀ-ի դեմ⁷:

⁶ Տես «ՀՀ ԳԱ Տեղեկագիր», 1991 թ. ապրիլի 30, հմ. 8, էջ 9–10, նաև՝ «Հայաստանի Հանրապետություն», 1991 թ. նոյեմբերի 8:

⁷ *Stu ζUU*, §. 1159, q. 1, q. 98, p. 46:

Հանրապետության և հայ ժողովրդի դեմ սանձագերծված ռազմական գործողությունները բացահայտ կերպով հակասում էին ՍՍԿ-ի կանոնադրության հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև ՍՍԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերին, որոնք մարդու իրավունքների ուսնահարումը, որտեղ էլ դրանք կատարվեն, դիտում են որպես խաղաղության և միջազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիք:

Խախտելով միջազգային և խորհրդային իրավական նորմերը՝ Կրեմլը ճգուտ էր ամեն գնով պահպանելու վիլուգվող կայսրությունը: Հունիսին հրապարակվեց նոր միութենական դաշնագրի նախագիծը, ըստ որի ստեղծվող համադաշնությունը կոչվելու էր Խնճիշխան Պետությունների Միություն⁸: Փաստաբութը, նախորդների նման, իրավական հիմք չէր ստեղծում դաշնային պետության ծևավորման համար: Նախազգում անհամաշափ էին բաշխված լիազորությունները Կենտրոնի և հանրապետությունների միջև՝ հօգուտ առաջինի, շատ հարցեր անորոշ էին ծևակերպված, ինչը կարող էր կամայականությունների և շահարկումների տեղիք տալ:

Հունիսի 23-ին մերձնուսկովյան Նովո-Օգարյովյում ԽՍՀՄ Նախագահ Գորբաչովի և ինը հանրապետությունների ղեկավարները վերջնականացնեն համաձայնեցրին միութենական նոր դաշնագրի նախագիծը, որը նախատեսվում էր ստորագրել օգոստոսի 20-ին⁹: Թեև պայմանագրի այս նախագիծը նոյենացնեն չէր համապատասխանում ժողովրդավարության և դաշնայնության չափանիշներին, այնուամենայնիվ, ինը հանրապետությունն էլ համաձայնել էին ստորագրել այն (Հայաստանը դրանց թվում չէր): Խորհրդային քաղաքական վերնախավի հետադիմական ուժերը, որոնք վերջին շրջանում բավականին ամրապնդել էին իրենց դիրքերը, նոյենիսկ այդ պահպանողական նախագիծը համարեցին կայսրության ապագայի համար վտանգավոր: Նախազծի ստորագրումը խսկանելու և երկրում իրենց ազդեցությունը պահպանելու նպատակով նրանք դիմեցին ծայրահետ քայլ՝ կատարեցին հեղաշրջման փորձ:

1991 թ. օգոստոսի 18-ի լույս 19-ի գիշերը Մոսկվայում մի խումբ քարձրաստիճան պաշտոնյաների կողմից* բռնազավթվեց իշխանությունը: Խոռվության կազմակերպիչները մեկուսացրել էին Նախագահ Գորբաչովին՝ հայտարարելով, թե նա հիվանդ է, ստեղծել էին նոր, սահմանադրությամբ չնախատեսված մարմին՝ Արտակարգ

⁸ Տես «Советская Россия», 28 июня 1991 г.:

⁹ Տես «Советская Россия», 25 июля и 15 августа 1991 г.:

* 1991 թ. օգոստոսի 18-ին խորհրդային ժողովրդին ուղղված «Խորհրդային ղեկավարության հայտարարության» մեջ ասվում էր. «Երկիրը ղեկավարելու և արտակարգ դրության ռեժիմը արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով ԽՍՀՄ-ում ստեղծել Արտակարգ դրության պետական կոմիտե (ԱԴՊԿ) հետևյալ կազմով՝ ԽՍՀՄ փոխնախագահ, ԽՍՀՄ նախագահի պարտականությունները կատարող Գ. Յանաև, ԽՍՀՄ վարչապետ Վ. Պավլով, ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յագով, ԽՍՀՄ պաշտպանության խորհրդի քարտուղարի առաջին տեղակալ Օ. Բակլանով, ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Վ. Կրյուչկով, ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Բ. Պուգոն, ԽՍՀՄ Գյուղացիական միության նախագահ Վ. Ստարոտիբուն, ԽՍՀՄ Պետական ծեռնարկությունների և արդյունաբերության օբյեկտների, շինարարության, տրանսպորտի և կավի ասոցիացիայի նախագահ Ա. Տիգյակով» (<http://istoria.svyt.net/rus/sssr/gkcp/>):

դրության պետական կոմիտե (ԱԴՊԿ), որի որոշումները հայտարարվեցին պարտադիր բոլորի համար¹⁰: Սահմանվում էր միութենական սահմանադրության և օրենքների գերակայությունը ԽՍՀՄ ամբողջ տարածքում: Սա նշանակում էր վերադարձ ամբողջատիրական համակարգին, մարդու և ազգերի իրավունքների ուժնահարման խորհրդային եղանակների վերականգնում, բռնի ուժով կայսրության պահպանում*:



Դ. ՌԵՋԱԿ »ԷԱԾՈՒԱ 1991 Ա. Ա- ԱՅԻ ԱՅՑ 19-ՉՅ

¹⁰Տես *Ю. Казарин, Б. Яковлев. Белая книга: смерть заговора.* М., 1992, сс. 7—8:

* Այսօր, քանի դեռ ամբողջությամբ չեն բացվել արխիվները, հնարավոր չեն հստակ պատկերացում կազմել խոռվությանը երկրի նեկավար Մ. Գորբաչովի ստվերային մասնակցության վերաբերյալ: Սիևնոյն ժամանակ հարկ է նշել, որ հրապարակի վրա կան ուսումնասիրություններ, որոնց հեղինակները խոռվությունը համարում են բատերական ներկայացում, զանգվածային գլխակցության վրա ազդելու արդյունավետ միջոց՝ երկրի զարգացմանը ցանկալի ուղղություն տալու նպատակով: Այդ հեղինակները, համեմատելով հրապարակված փաստերը, Մ. Գորբաչովի, նրա շրջապատի ներկայացուցիչների, այլ գործիչների ելույթներում հնչած տեղեկությունները, հանգում են այն եզրակացության, որ ԽՍՀՄ Նախագահը ոչ միայն տեղյակ է եղել հեղաշրջման նախապատրաստմանը, այլև իր ստվերային մասնակցությունն է ունեցել խոռվությունում (տես, օրինակ, *C. Г. Кара-Мурза. Манипуляция сознанием.* М., 2005 (http://www.kara-murza.ru/books/manipul/manipul137.htm#hdr_190); «Красное или белое? Драма Августа-91». М., 1992): Իրենց հուշերում Գորբաչովի այդ օրերի տարօրինակ վարքագծի, կասկածելի գործողությունների մասին են գրություններ, որուն կայսրության ժամանակ իրադարձությունների կիզակետում հայտնված որոշ գործիչներ (տես,

Ուսասատանի դեկավարությունը, որի դիրքորոշումն ստեղծված իրավիճակում էական նշանակություն ուներ, անմիջապես դատապարտեց խոռվությունը՝ Կոմիտեն հայտարարելով ոչ օրինական, և համընդիանուր անժամկետ գործադույի կոչ արեց: Օգոստոսի 19-ի հայտարարության մեջ նշվում էր, որ անկախ նրանից, թե ինչպես էր ԱԴՊԿ-ի կողմից արդարացվում Գորբաշվի մեկնացումը, միևնույն է՝ կատարվածը հետադիմական, հակասահմանադրական հեղաշրջում է¹¹: Այսպիսի դիրքորոշումը լուրջ հարված էր խոռվարաբների ծրագրերին: Այն համախմբեց ժողովրդավարական ուժերը Ուսասատանի Նախագահ Ելցինի և նրա գինակիցների շուրջը:

Հայաստանի իշխանությունները, սպասողական դիրք ընդունելով, որևէ կերպ զգնահատեցին տեղի ունեցածը: Նրանք ժողովրդին կոչ էին անում հանդես բերելու զավածություն՝ նշելով, որ կապի մեջ են կենտրոնական իշխանությունների, միութենական հանրապետությունների դեկավարների ու Հայաստանում տեղաբաշխված խորհրդային քանակի հրամանատարության հետ, վերահսկում են իրադրությունը հանրապետությունում և հետևում են իրադարձությունների գարգացմանը¹²: Հայաստանի դեկավարության և անձամբ L. Տեր-Պետրոսյանի նման խուսափողական դիրքորոշումը հակասում էր իրենց իսկ կողմից ժամանակին գերակա ուղղություններ հոչակալած ժողովրդավարությանը և ազգերի ինքնորոշմանը: Խորհրդային կայսրության հետադիմական ուժերի դեմ պայքարող հանրապետությունների ճամբարը լրելը (այդ օրերին այն դեկավարում էր Ուսասատանը) բացասաբար էր անդրադառնում Հայաստանի վարկանիշի վրա:

Օգոստոսի 20-ին ԽՀՀՄ տարբեր շրջաններում հանքագործները անժամկետ գործադուլ սկսեցին՝ հայտարարելով քաղաքացիական անհնազանդություն ԱԴՊԿ-ին: Նոյն օրը Ուսասատանի դեկավարության կողմն անցան Թամանյան, Կանտեմիրովյան, Զերժինսկու անվան դիվիզիաները: Բազմաթիվ երկրամասեր իրենց աջակցությունն էին հայտնում Ուսասատանի Նախագահ Բ. Ելցինին¹³: Այդ օրը բեկումնային դարձավ խոռվության պատմության մեջ. նախաձեռնությունն անցավ ժողովրդավարական ուժերին:

Միայն օգոստոսի 20-ի ուշ գիշերը, երբ ակնիայտ էր հեղաշրջման տապալումը, ՀՀ ԳԽ Նախագահությունն իր հայտարարությամբ մերժեց ԱԴՊԿ իրավագործությունը, սակայն կատարվածին քաղաքական գնահատական չտվեց¹⁴: ՈՒշացած այս արձագանքն այլևս որևէ ազդեցություն չունեցավ իրադարձությունների ընթացքի վրա. այն անհրաժեշտ էր առաջին հերթին Հայաստանի իշխանություններին՝ իրենց հեղինակությունն ինչ-որ չափով պահպանելու համար:

Օգոստոսի 21-ին հեղաշրջումը վերջնականապես տապալվեց, կազմակերպիչ-օրինակ, Ա. Բ. Լերիդ Յավ վասն տերության: Ե., 1997, էջ 340—341, նաև՝ E. M. Примаков. Годы в большом политике. М., 1999, сс. 96—98):

¹¹ Տես ՀԱԱ, ֆ. 1159, գ. 6, գ. 63, թ. 10:

¹² Տես «Հայաստանի Հանրապետություն», 1991 թ. օգոստոսի 20:

¹³ Տես ՀԱԱ, ֆ. 1159, գ. 6, գ. 63, թթ. 14—15:

¹⁴ Տես «ՀՀ ԳԽ Տեղեկագիր», 1991 թ. օգոստոսի 31, հմ. 16, էջ 5:

ները ծերբակալվեցին, ժողովրդավարական ուժերը տոնում էին իրենց հաղթանակը: Պատմության ընթացքը հետ շրջելու փորձի ծախտղումը օրինաչափ էր: Այն կարող էր միայն ժամանակավոր հաջորդություն ունենալ: Խորհրդային կայսրության տնտեսական, քաղաքական համակարգերն այլևս գործունակ չեն: Վերակառուցման տարիներին որոշ գործընթացներ այլևս չեն վերահսկվում իշխանությունների կողմից, խորհրդային հասարակությունն զգալիորեն փոխվել էր, և հնարավոր չեր պարտադրել նախկին կարծրատիպերն ու հասարակարգը: Խոռովության արագ տապալման պատճառներից էին նաև գործողությունների հստակ ծրագրի բացակայությունը և կազմակերպիչների անհետևողականությունը: Էական նշանակություն ունեցան նաև ժողովրդավարական ուժերի վճռական քայլերը:

Պետական հեղաշրջման փորձի տապալումն արագացրեց ԽՍՀՄ-ում տեղի ունեցող զարգացումների ընթացքը: Խորհրդային կայսրության փլուզման գործընթացը մտավ եզրափակիչ փուլ: Սիության տարածքում ծագած ազգամիջյան հակամարտություններին ավելի սրբեցին: Իշխանության կենտրոնական մարմինները կարվածահար էին եղել և կորցնում էին իրենց ազդեցությունը երկրում: Աճում էր Ռուսաստանի դեկավարության ազդեցությունը: Միության կազմի մեջ մտնող սուբյեկտներն իրար հետևից անկախություն էին հռչակում: Այս գործընթացներն օրինաչափ էին և հիշեցնում էին 20-րդ դարի սկզբին Ռուսական կայսրության փլուզման ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները:

Խոռովության տապալումից հետո մի քանի հանրապետություն, որոնք մինչ այդ մասնակցում էին միութենական դաշնագրի մշակման գործընթացին, հռչակեցին իրենց անկախությունը¹⁵: Այս հանգամանքը, ինչպես նաև օգոստոսի 21-ից հետո ԽՍՀՄ-ում տիրող քաղաքական մքննորսի կարուկ փոփոխությունը նոր քափ հադրութեցին Հայաստանում ընթացող քննարկումներին՝ կապված հանրապետության անկախացման և անկախ պետականության հաստատման ուղիների հետ: Ելնելով երկրի իրավիճակի փոփոխման փաստից՝ օգոստոսի 26–28-ը ՀՀ ԳԽ Նախագահությունում քննարկվեց մի խումբ պատգամավորների՝ մինչև հանրաքեն ԳԽ արտահերթ նստաշրջանում ՀՀ անկախությունը հռչակելու առաջարկությունը, որը, սակայն, չստացավ խորհրդարանի Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և կառավարող քաղաքական կազմակերպության՝ Հայոց համազգային շարժման (ՀՀԸ) աջակցությունը¹⁶: Սահմանադրական ճանապարհով անկախանալու ուղեգիծը, որը որդեգրվել էր Հայաստանի դեկավարության կողմից, հիմնավորված և գործուն չէր: Սիութենական կենտրոնը մշտական խախտում էր երկրի սահմանադրությունը, խոռովությունից հետո միութենական օրենսդրությունը կորցրել էր իր ուժը: Այս պայմաններում սահմանադրական ճանապարհով անկախանալը իր մեջ որևէ դրական տարր չէր պարունակում. այդ էր վկայում իրադարձությունների ընթացքը:

Խորհրդային Միության քաղաքական գործիչներին մտահոգում էր երկրի հետա-

¹⁵ Տես «Հայաստանի Հանրապետություն», 1991 թ. օգոստոսի 27, 28, «Երկիր», 1991 թ. օգոստոսի 31:

¹⁶ Տես «ՀՀ ԳԽ Տեղեկագիր», 1991 թ. օգոստոսի 31, հմ. 16, էջ 21–24:

գա ճակատագրի հարցը: Մեստեմբերի 2-ին հրավիրվեց ԽՍՀՄ ժողովադատական փորձերի 5-րդ արտահերթ համագումարը: Այն ողջունեց երկրի Նախագահ Գորբաչովի և տասը հանրապետությունների, այդ թվում նաև Հայաստանի, ղեկավարների հայտարարությունը¹⁷: «11-ի հայտարարությունը» նախատեսում էր իրականացնել մի շարք միջոցառումներ՝ իշխանության կառույցների փլուզումը կանխելու, հանրապետությունների միջև հարաբերությունների պետական նոր համակարգ և միջանրապետական միութենական իշխանության կառույցներ ստեղծելու համար¹⁸: Այսպիսով՝ Լ. Տեր-Պետրոսյանը, մի կողմից, նպատակահարմար չգոտավ խռովությունից հետո երկրում ստեղծված նոր իրադրության պայմաններում հանրապետության խորհրդարանի կողմից անկախության հոչակումը: Մյուս կողմից՝ անկախության հանրապետից մոտ երեք շարար առաջ, չսպասելով ժողովրդի կամքի արտահայտման արդյունքներին, նա ստորագրեց մի փաստաթուղթ, որի համաձայն Հայաստանը պետք է ընդգրկվեր անորոշ կառուցվածքով և հեռանկարով միության կազմում: Այսպիսի անհետողական քայլերը չեն նպաստում հանրապետությունում ժողովրդավարության և ազգային ինքնորոշման գաղափարների հաստատմանը*:

¹⁷ Տես «Երկիր», 1991 թ. սեպտեմբերի 3:

¹⁸ Տես նոյն տեղում:

* Լ. Տեր-Պետրոսյանը անհետողական էր նաև հանրապետության պետական-հասարակական կյանքի այլ խնդիրների լուծման հարցում, հատկապես՝ արցախյան պահանջատիրության խնդրում: Արցախյան շարժման ալիքի վրա հայտնվելով քաղաքական ասպարեզում՝ նա և նրա կուսակցությունը 1990 թ. իշխանության գալուց հետո արցախահայությանը պետական մակարդակով սաստար կանգնելու փոխարեն փաստացի հրաժարվեցին նախկինում իրենց հայ մասնակցությամբ ընդունված որոշումներից, մասնավորապես՝ 1989 թ. դեկտեմբերի 1-ի՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին որոշումից: Տարբեր մակարդակներով զարգացվում էր այն միտքը, որ Արցախն ինքնուրույն պետք է զարգանա, որ նա իր խանգարում է ՀՀ անկախացմանը: Լ. Տեր-Պետրոսյանը Արցախի մասին արդեն խոսում էր երրորդ դեմքով. «Արցախի հարցը իրենք՝ արցախիցները, պետք է լուծեն» (տես, օրինակ, «Ազատամարտ», հն. 20, 1991 թ. հուլիս, «Երեկոյան Երևան», 1991 թ. հուլիսի 17, «Անկախություն», 1991 թ. հուլիսի 19, «Դրոշակ», 1991 թ. մարտի 13):

Հետևողական չեր նաև Լ. Տեր-Պետրոսյանի քաղաքականությունը՝ անկախացման ուղին որդեգրած հանրապետությունում ազգային անվտանգության համակարգի և քանակի ստեղծման հարցում: Խորհրդային Սյուրյան սրբնարաց փլուզման, Արցախում ընթացող արյունահետ պատերազմի պայմաններում Լ. Տեր-Պետրոսյանն անհրամեշտ միջոցներ չեր ծեռնարկում հայկական քանակի ստեղծման համար՝ ավելի շատ քննադատելով Աղքաբեցան՝ սեփական գինված ուժեր կազմավորելուն ուղղված քայլերը: Նա հայտարարում էր, թե մեր պաշտպանվածությունը անպաշտպանության մեջ է:

Տնհանության բնագավառում ՀՀ և նրա դեկանալի քաղաքականությունը, որը հանգեցրեց հանրապետության տնհանության քայլայմանը, հակառակ էր իրենց կողմից հոչակված զարգափառներին, հատկապես՝ ամուր անկախ պետության ստեղծմանը: Քաղաքական ասպարեզում հայտնվելու սկզբնական շրջանում ՀՀ-ականների քաղաքական շահարկումների հետևանքով փակվեցին հանրապետության տնհանության համար առաջնային նշանակություն ունեցող որոշ ծեռնարկություններ: Լ. Տեր-Պետրոսյանի և նրա թիմի իշխանության գալուց հետո սկսվեց արդյունաբերական ծեռնարկությունների կողովութը, ինչը հանգեցրեց էներգետիկ և տնտեսական ճգնաժամի, ազգաբնակչության աղքատացման և արտագործի (տես, օրինակ, Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերաբարությունը և տեղաշարժերը XI–XX դդ., XXI դ. շեմին: Ե., 2002, էջ 311–325, նաև՝ Հ. Խոառապյան, Արտագործ Հայաստանից: Ե., 2003):

Թեև տասնմեկ դեկավարների կողմից ստորագրվեց համաձայնեցված փաստաթուղթը, սակայն նշված միջոցառումները չհաջողվեց իրագործել, քանի որ Խորհրդային Սիուրյունում ապահնութեղման գործընթացներն արդեն բավական խորն էին ներքափանցել միասնական պետության գործունեության զանազան ոլորտներ։ ԽՍՀՄ-ում ստեղծված այսպիսի քաղաքական իրադրության մեջ, ի դեպ, զգալի դեր խաղաց հեղաշրջման փորձի տապալումը։

Սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց հանրաքվե՝ հետևյալ հարցադրմամբ։ «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից դուրս»։ Քվեարկության իրավունք ունեցողների 94,39 %-ը քվեարկեց հանրապետության անկախության օգտին, ինչի հիման վրա սեպտեմբերի 23-ին ՀՀ Գ-Խ-ն հոչակեց Հայաստանի անկախությունը¹⁹։

Թեև այս փուլում արդեն պարզ էր, որ Խորհրդային Սիուրյան անկումը ժամանակի խնդիր է, և հնարավոր է անկախության հասնել նաև խորհրդարանի որոշման հիման վրա, այնուամենայնիվ, հանրաքվեն կարևոր նշանակություն ունեցավ հայկական անկախ պետականության վերականգնման և հայ ժողովրդի ապագայի համար։ Պատմության մեջ առաջին անգամ հայկական անկախ պետությունը հոչակվում էր համաժողովրդական քվեարկությամբ։ Հանրաքվեն, թեև որոշ չափով ուշացած էր և չըր կարող էական ազդեցություն ունենալ իրադարձությունների ընթացքի վրա, այդուհանդերձ կարևոր քաղաքական քայլ էր անկախության գործընթացն ավարտին հասցնելու համար։ Հանրաքվեն կարևոր էր նաև ժողովրդի ինքնորոշման առումով։ հանրապետությունում ապրող հայությունը, որը կազմում էր բնակչության ճնշող մեծամասնությունը, ինքն էր որոշում իր զարգացման ուղին, ինչն իր ազդեցությունն էր գործելու հայության մյուս հատվածների և ընդհանրապես ամբողջ հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա։ Համաժողովրդական միասնությունը և համազգային ոգևորությունը համախմբել էին հայությանը, ինչն էական նշանակություն ուներ անկախության ճանապարհին ծագող բազմաթիվ խնդիրների հաղթահարման համար։

ՀՀ անկախության հոչակումից հետո անհրաժեշտ էր հասնել նրա միջազգային ճանաշմանը։ Աշխարհի պետությունները չեն ցանկանում բացահայտ կերպով միջամտել խորհրդային Կենտրոն-հանրապետություններ հարաբերություններին և չեն շտապում ճանաշել նախկին խորհրդային հանրապետությունների անկախությունը, որպեսզի չը լինի իրենց հարաբերությունները ԽՍՀՄ Կենտրոնական իշխանությունների հետ։ Վերջիններիս վերահսկողության տակ դեռ կային հզոր ռազմական միջոցներ, որոնք կարող էին սպառնալ միջազգային անվտանգությանը և աշխարհաքաղաքական կայունությանը։ Սակայն շատ պետություններ, հետևելով խորհրդային Սիուրյունում ընթացող իրադարձություններին, պատրաստ էին հարմար պահին ճանաշելու նախկին խորհրդային հանրապետությունների անկախությունը, ինչպես տեղի ունեցավ օգոստոսին՝ խոռվության տապալումից հետո, մերձքալբյան հանրապետությունների դեպքում։

Թեև Հայաստանի Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ստորագրել էր «11-ի հայ-

¹⁹ Տես «ՀՀ Գ-Խ Տեղեկագիր», 1991 թ. սեպտեմբերի 30, հմ. 18, էջ 3։

տարարության» տակ, այնուամենայնիվ, հերթական քաղաքական դեգերունների հետևանքով չմասնակցեց նոյեմբերի 14-ին Նովո-Օգարյովյում կայացած ԽՍՀՄ Պետական խորհրդի նիստին, որտեղ Գորբաշովը և միութենական յոթ հանրապետությունների ղեկավարները պայմանավորվեցին ստեղծել նոր պետություն՝ Խճճիշխան Պետությունների Միություն, որը փոխարինելու էր Խորհրդային Միությանը և հանդես էր գալու որպես միջազգային իրավունքի սուբյեկտ²⁰: Սակայն այդ նիստին տասներկու հանրապետություններից կինքի, հատկապես՝ ՈՒկրաինայի ղեկավարների բացակայությունը հարցականի տակ էր դնում միութենական նոր պետության կայացումը: ՈՒկրաինայի ղեկավարությունն իր դիրքորոշումը հստակեցնելու էր ղեկանքերի 1-ին հանրապետությունում անցկացվելիք անկախության հանրաքվեի արդյունքների հիման վրա:

Խորհրդային Միության պահպանողական ուժերը, բոլոր միջոցներն օգտագործելով, ջանում էին հանրապետություններին պարտադրել միութենական պետության մոդելը՝ ուժեղ կենտրոնացված իշխանության հատկանիշներով: Այդպիսի ուղղվածություն ունեին 1991 թ. աշնան ստորագրված ԽՍՀՄՆախագահի հրամանագրերը, Պետխորհրդի որոշումները, միութենական դաշնագրի «Վերամշակված» տարբերակը, որի անորոշ ձևակերպումները կարող էին իրավական հիմք ծառայել միութենական իշխանությունների կողմից արտակարգ միջոցառումների կամայական իրականացման համար:

Ուստաստանի ղեկավարությունը, որը մասնակցում էր միութենական պայմանագրի մշակման նովոգարյովյան գործընթացին, ղեկտեմբերի սկզբին վերանայեց իր դիրքորոշումը: Դրան նպաստեց նաև ղեկտեմբերի 1-ին ՈՒկրաինայում անցկացված անկախության հանրաքվեն, որի արդյունքների կիման վկա այդ հանրապետությունը հոչակեց իր անկախությունը²¹: Այս փոլում արդեն ակնհայտ էր, որ առանց ՈՒկրաինայի նոր միութենական պետությունը չի կայանա: Կանադայից և Լեհաստանից հետո ՈՒկրաինայի անկախությունը ճանաչեց նաև Ռուսաստանը²²:

ՈՒկրաինայի հանրաքվեից մեկ շաբաթ անց՝ ղեկտեմբերի 8-ին, Սինակի մոտակայքում գտնվող Բելովեժսկ բնակավայրում Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության և ՈՒկրաինայի ղեկավարները՝ որպես ԽՍՀ Միության իմնադիր պետությունների ղեկավարներ, արձանագրեցին, որ ԽՍՀՄ-ը դադարեցնում է իր գոյությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ու աշխարհաքաղաքական իրողություն, և համաձայնագիր ստորագրեցին Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ)՝ որպես միջազգային (միջազտական) կազմակերպության ստեղծման մասին²³: Երեք հանրապետությունների ղեկավարների այս քայլը վերջնական հարված հասցրեց խորհրդային կայսրությանը. սա ԽՍՀՄ գոյության ավարտն էր, ինչը օրինաշափ էր և կանխորոշված Խորհրդային Միության պատմության ընթաց-

²⁰ Տես «Известия», 16 ноября 1991 г.:

²¹ Տես «Известия», 3 декабря 1991 г.:

²² Տես «Известия», 5 декабря 1991 г.:

²³ Տես ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 129, թթ. 1—5:

քով, կայսրության սոցիալ-տնտեսական, ներքին և արտաքին քաղաքականության, դաշնային և ազգամիջյան հարաբերությունների, մշակույթի ոլորտներում գոյություն ունեցող համակարգային հակասություններով: Հետագա առաջընթացի համար անհրաժեշտ էին համակարգային փոփոխություններ:

Բելովեժսկում կատարված քայլին տրամադրություն պետք է հետևեր նախկին խորհրդային հանրապետությունների անկախության ճանաչումը: Միջազգային հանրությունը ԽՍՀՄ իրավահաջորդ էր համարում Ռուսաստանին, և վերջինիս կողմից նախկին «գաղութներին» ազատություն շնորհելուց հետո էր միայն հնարավոր նախկին Միության սուբյեկտների անկախության միջազգային ճանաչումը: Ռուսաստանի դեկավարությունը դեկտեմբերին ճանաչեց նախկին միութեական հանրապետությունների անկախությունը:

Հայաստանի անկախությունը առաջինը ճանաչեց Ռումինիան՝ 1991 թ. դեկտեմբերի 11-ին²⁴: Սակայն հարցի լուծման գործում էական նշանակություն ունեցավ Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախության ճանաչումը դեկտեմբերի 17-ին²⁵: Նախկին Խորհրդային Միության տարածքում առաջացած նոր աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում անկախ Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և միջազգային իրավունքի սուբյեկտ դառնալը ժամանակի հարց էր:

Դեկտեմբերի 21-ին Ալմա-Աբայում նախկին միութեանական տասնմեկ հանրապետությունների կողմից ստորագրված հոչակագիրը դարձավ Բելովեժսկի համաձայնագրի տրամադրանական շարտնակությունը և վերջնականապես արձանագրեց ԽՍՀՄ գոյության դադարեցումը²⁶:

Հայաստանի անկախությունը իրականություն դարձավ: 1990 թ. օգոստոսի 23-ի հոչակագրով սկսված անկախացման գործնքացը հասավ իր ավարտին. Վերականգնեց հայկական անկախ պետականությունը: Դա, մի կողմից, խորհրդային կայսրության փլուզման, մյուս կողմից՝ հայ ժողովրդի համար պայքարի արդյունք էր:

Դարավոր նպատակի իրականացման ճանապարհին հայ ժողովրդը, ինչպես և անցյալում, կրեց բազմաթիվ զրկանքներ, տվեց մեծարիվ զոհեր: Անկախության վերականգնումը դարերով պետականությունից զրկված, ցեղասպանություն ապրած հայ ժողովրդի համար ուներ դարակազմիկ նշանակություն:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ խորը ճգնաժամի մեջ գտնվող ԽՍՀՄ-ի կողմից 80-ական թվականների երկրորդ կեսին վարած «վերակառուցման» քաղաքականությունը «կիսամիջոցների» քաղաքականություն էր, չը նախատեսում արմատական բարեփոխումներ, ուստի և չը կարող կասեցնել Խորհրդային Միության քայլայման գործընթացը: Բոնությամբ կայսրությունը պահպանելու փորձերը ևս անարդյունավետ էին, քանի որ տասնամյակներ շարունակ ուժի միջոցով պահպող պետությունն սպառել էր գոյատևելու ներուժը: Այդ պատճառով օգոստոսյան խոռով-

²⁴ Տես «Հայաստանի Հանրապետություն», 1991 թ. դեկտեմբերի 13:

²⁵ Տես «Հայաստանի Հանրապետություն», 1991 թ. դեկտեմբերի 19:

²⁶ Տես «Дипломатический вестник», 1992, № 1, сс. 6—7:

թյունը դատապարտված էր ծախողման: ՈՒժային եղանակների կիրառումը ավելի մեծ քայլ հաղորդեց կայսրության կազմի մեջ մտնող ժողովորդների ինքնորոշման ձգտմանը, խթանեց նրանց ազգային ինքնազիտակցության զարգացումը, ինչն էլ իր հերթին արագացրեց ԽՍՀՄ փլուզումը:

Սահմանադրական ճանապարհով անկախության ձգտող հայ ժողովրդի դեմ կիրառված բռնությունները ազգային ինքնորոշման հարցում ավելի համախմբեցին և վճռական դարձրեցին հայությանը, ինչը հստակ կերպով արտահայտվեց սեպտեմբերյան հանրաքվեի օրերին: Այստեղ զգալի դեր խաղաց նաև օգոստոսյան խոռվությունը, որից հետո անկախ պետականության հռչակումը դարձավ առաջնահերթ խնդիր: Համաժողովրդական հանրաքվեի և ազգային միասնության հիման վրա անկախության հռչակումը ինքնիշխան Հայաստանի Հանրապետության ստեղծման ամուր հիմքն էր:

ИСТОРИЯ

АВГУСТОВСКИЙ ПУТЧ 1991 ГОДА В СССР И ПРОЦЕСС СУВЕРЕНИЗАЦИИ АРМЕНИИ

Л. Л. УЛУБАБЯН, лектор кафедры армянской истории ЕГУ
и кафедры всемирной истории

Российско-армянского (Славянского) государственного университета

РЕЗЮМЕ

Политика перестройки, проводимая руководством СССР во второй половине 80-х гг., не предусматривала коренного решения проблем и не смогла вывести страну из глубокого кризиса, что повело Союз к распаду. Рост кризисных явлений наблюдался во всех сферах общественно-государственной жизни. Это обострило борьбу между реакционными силами в правящих кругах СССР и республиками. В первые месяцы 1991 г. позиции реакционеров значительно усилились, и в августе они попытались совершить государственный переворот, который, однако, не удался. Провал путча оказал воздействие катализатора на процессы, происходящие в СССР, в том числе и на процессы распада Союза и самоопределения его субъектов.

Как и другие союзные республики, Армения также стремилась к самоопределению. Еще в августе 1990 г. Парламент республики провозгласил начало процесса обретения независимости. Хотя Армения шла к независимости конституционным путем, тем не менее подверглась силовому давлению союзного центра и встретила серьезное сопротивление со стороны проимперских сил, которые всячески стремились приостановить разложение Советской империи. Однако после провала августовского путча процесс распада СССР стал необратимым. Субъекты Союза друг за другом провозгласили независимость. В Армении это произошло на основе всенародного референдума, что должно было заложить мощное основание под создаваемую независимую государственность. В Беловежске, а затем в Алма-Ате

были подписаны соглашения о прекращении существования СССР и создании Содружества Независимых Государств. На территории бывшего Советского Союза в условиях новых геополитических реалий начался процесс международного признания суверенных республик, в том числе Республики Армения, которая стала субъектом международного права. Таким образом, в конце XX века в результате самоотверженной борьбы армянскому народу удалось восстановить свою независимую государственность.

HISTORY

THE AUGUST PUTSCH OF 1991 IN THE USSR AND THE PROCESS OF SOVEREIGNTY ACQUISITION IN ARMENIA

*L. L. ULUBABYAN, Lecturer at the Chair of Armenian History at the YSU
and the Chair of World History at the Russian-Armenian (Slavonic) State University*

SUMMARY

The reformation («perestroika») policy, pursued by the USSR Government in the late 1980s, didn't envisage the radical solution to the problems, nor managed to lead the country out of the deep crisis, which was bringing the Union to disintegration. The increase of the crisis phenomena was observed in all the spheres of public life. That made the struggle among the reaction forces of the USSR ruling circles and republics sharper. During the first months of 1991 the positions of the reaction circles were considerably strengthened. In August they tried to commit a coup d'état, but failed. The Putsch failure influenced the processes, taking place in the USSR, like a catalyst. It had an impact on the country's disintegration and the self-determination processes of the subjects of the Union as well.

Armenia followed the way towards self-determination like the other republics of the Union did. Still in August, 1990, the Armenian Parliament declared the beginning of the process of obtaining the independence. Although Armenia was going towards independence through constitutional means, it was under coercion by the Union center and had to face a serious opposition by pro-empire forces, which tried to stop the disintegration of the Soviet empire using all possible ways. But the USSR disintegration process was inevitable after the Putsch failure in August. The Union subjects declared their independence one after another. Armenia did so after the national referendum, which was to be a powerful basis for the newly created independent state. The agreements on the cessation of the USSR existence and establishment of the Commonwealth of Independent States were signed in Belovezhsk and then in Alma-Ata. The process of international recognition of sovereign republics, including the Republic of Armenia, which became a subject of International law, began in terms of new geopolitical realities on the territory of the former Soviet Union. So, the Armenian people managed to restore their independent state thanks to their selfless struggle at the end of the twentieth century.

**1920 թ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՉՊԱՐՏՎԱԾ ՃԱԿԱՏԸ**

**Հ. Ժ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատրիական գիրուրյունների դոկտոր,
պրոֆեսոր, ԵՊՀ գիրուրյան բաժնի պետ**

1920 թվականի հայ-թուրքական պատերազմի ճակատներից մեկը Սուրմալուն էր, որը հերոսարար դիմադրեց մինչև վերջին օրը: Եվ վստահարար կարելի է ասել, որ եթե հայերը մյուս ռազմաճակատներում ևս կովեին այնպես, ինչպես կովեցին Սուրմալուի ճակատում, հարցը այդքան չէր բարդանա, և Սորմալուն գուցե չհանձնվեր թշնամուն: Սակայն Կարսի անկումը և՝ բարյական մեծ վնաս հասցրեց հայ ժողովրդին, և՝ կորստարեր եղավ այլ ռազմաճակատներում կովող մեր զինվորների համար: Այդուհանդերձ Սուրմալուն մաքառեց մինչև վերջին հնարավորությունը:

Դրա վկայությունն են այն ժամանակվա մեր մամուլի էջերում տեղ գտած հաղորդագրությունները Սուրմալուի ճակատից:

«Երրորդ օրն է, ինչ կատաղի կողիներ են տեղի ունենում Սուրմալի ող ճակատում, սկսած Արաքսի ափից—Դաշրուրուն—Լարադոյինլու—Խզդիր—Եայիշի—Զարուխի—Վերին Քիլիլի դէսի Կողը, մօտաւրապես 40 վերատ տարածութեան վրա:

... Թիւրքերը ներկայում փորձում են որոշ հետևանքի հասնել Սուրմալի ճակատում: Հոկտեմբերի 23-ից նրանք խոշոր ուժեղով հարձակման են դիմում երեք ուրրութեամբ. Իզդիր ճակատից, այն է՝ Արհաջ—Սուլթանարադ գծով. աջ թէից՝ Վերին Քիլիլի, Զարուխի, Եայիշի, իրենց ձեռքն ունենալով Կողը—Կաղզվան տանող խճուղին: Զախ թէից, Առաջին ճակատից, կենտրոն ունենալով Դաշրուրուն—Լարադոյինլու գիծը: Երեք ճակատներում թշնամու կողմից գործում են 3–4 հազար տաճիկ ասկեարներ ու քրդեր, ուր թնդանօր, զգալի քանակութեամբ գնդացիրներ»¹:

«Սեր շտարի պաշտօնական հաղորդագրութիւններին նայելով, թէ մեր զօրքերը և թէ թշնամին կուում են կատաղութեամբ: Այդ քանը երևում է նրանից, որ մի քանի գիտեր շարունակում են ձեռքից ձեռք անցնել: Օրինակ Լարադոյինլուն ինն անգամ ձեռքից ձեռք է անցել»²:

«Կատաղի կրիներ են տեղի ունենում նաև Կողըի ուղղութեամբ, ուր թշնամին Կաղզանի խճուղով հնարաւրութիւն ունի թարմ ուժեր ստանալու Սարիդամիշի ճակատից: Եայիշի գիտը, որը գտնուում է Խզդիրից 7–8 վերատի վրա, չորս անգամ ձեռքից ձեռք է անցել»³:

Վերլուծելով այս հաղորդագրությունները՝ հարկ ենք համարում անել երկու

¹ «Յառաջ», 1920 թ. հոկտեմբերի 28, հմ. 235:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում:

կարևոր պատմագիտական ընդգծում, այն, որ մեր պատմաբանների ուշադրությունից ցավալիորեն դուրս են մնացել կամ քիչ են լուսաբանվել Սուրմալուի ճակատում տեղի ունեցած ռազմական գործողությունները, և որ մեզանում տարածված է այն կարծիքը, թե իր հայկական գորամասերը գրեթե չեն կովել թշնամու դեմ, համենայն դեպքու, նման տպափորություն են ստեղծում հայոց պատմության ներկայիս դասագրքերը։ Մինչդեռ Հայաստանի առաջին Հանրապետության վերջին Վարչապետ Ս. Վրացյանը գրում է. «Արտասահմանյան հասարակության մեջ այն կարծիքն է տիրում, որ բուրքերը, առանց որևէ արգելքի հանդիպելու, հաղթեցին հայերին, որ հայկական բանակը ոչ մի դիմադրություն ցույց չտվեց։ Այս կարծիքը արդյունք է բացարձակ տղիտության։ Ընդհակառակը, եթե հայ բանակի մի մասը չգտնվեց իր կոչման բարձրության վրա, մյուս մասը ցույց տվեց անձնազնության, անվեհերության և հայրենասիրության սրբազնի օրինակներ։ Հայ-բուրքական վերջին պատերազմի պատմությունը, որը դեռ իր պատմաբանին է սպասում, կրանս մեր առջևը շատ ուսանելի է ենք, որոնք բուլության և անկազմակերպության կողքին ցույց կտան պետական գիտակցության և ռազմական կարողության շրեղ օրինակներ։ Մասնավորապես, բուն կրիվներ տեղի ունեցան Սուրմալուի ճակատում. իրենց հարձակումը բուրքերը սկսեցին երկու ուղղությամբ»⁴:

Սուրմալուն ռազմական գործողությունների թատերաբեմ դարձավ 1920 թ. հոկտեմբերի 24-ին։ «Հոկտեմբերի 24-ին կատաղի կողվներ սկսվեցին Քոլլուկ, Կարակալա, Վերին Զարուխի, Դաշրուտունի շրջանում։ Վաղ լուսաբացին նոտ մեկ դիվիզիա կանոնավոր ուժեր ու բազմաթիվ քրդական խմբեր հարձակման անցան Քոլլուկ-Վերին Զարուխի, Սուլբանաբադ-Խզդիր, Դաշրուտուն-Կարակոյունլու-Մարգարա ուղրությամբ։ Թշնամին բազմաթիվ անգամներ դիմեց գրիփի և վիշտ հետ շարտվեց»⁵։

Սուրմալուի ճակատի պատկերն այսպիսին էր. մի եռանկյունի, որի տարածքը տնօրինում էր հայկական բանակը, իսկ գագաթներն ու երկու կողմերը գտնվում էին բուրքերի ճնշումում։ Սուրմալուի ճակատում գործում էր բուրքերի 15-րդ բանակային կորպուսի (ընդհանուր հրամանատար՝ Ջյազիմ Կարաբերի) 11-րդ դիվիզիան (3-րդ, 9-րդ և 12-րդ դիվիզիաները կենտրոնացված էին Կարսի ճակատում)։ Թուրքերը հաւաքես մեծ ակնկալիքներ ունեին Արալիսի ճակատից։ Նրանք նպատակ ունեին տիրանալ Խզդիր տանող խճուղուն, գրավել Մարգարայի կամուրջը՝ դրանով իսկ Սուրմալուն գրկելով Երևանից ստացվող օգնությունից։

Սուրմալուի ճակատում ծավալված ռազմական գործողությունները վկայում են, որ թեև բուրքերի գերնապատակն էր Կարսի գրավումը, սակայն նրանք ձգտում էին ամեն գնով տիրանալու նաև Սուրմալուն, քանի որ դրանով իսկ Խզդիրում տեղակայված մեր գորամասերին գրկում էին Կարսին օգնության հասնելու հնարավորությունից։ Մեկ այլ պատճառ է նշում ժամանակի մեր թերքերից մեկը. «...թիրքական հոծ գաղրականութիւնը (խոսքը հայ-քարարական բախումների հետևանքով Վեդի-Բասարի և Ղամալուի շրջանից գաղթած բուրքերի մասին է.-Հ.Հ.), որոնք ներ-

⁴ Մինն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն: Ե., 1993, էջ 506:

⁵ Նույն տեղում, էջ 507:

կայումս լեցիած էին Սակովի և Արախի շրջանը. մօտալուս ծիների պատճառով ենթակայ են բնաջնջման, հետևապէս Սուրմալուն իրենց ձեռքն ունենալը մահու և կենաց խնդիր է»⁶:

Մեր կարծիքով՝ հենց դա էր թուրքերի կողմից Սուրմալուի վրա հարձակվելու գիշավոր պատճառն ու բացատրությունը, ինչը հետագայում իր արտահայտությունն ու հաստատումն ստացավ 1921 թ. Մոսկվայի ու Կարսի բանակցություններում և կնքված պայմանագրերում: «Վերջին պարագան թիւք բաղաքական գործիչների համար մի նպատակայարձար գենք է, որպէսզի Սուրմալի շրջանը թիւքաբնակ դառնա և այդ ձևով Թարդողի լոռների թրության հետ միասին մի ուժեղ պատար կանգնեցնեն Ռուսահայաստանի և Թիւքահայաստանի միջն: Որ ասել է, վտանգել Միացեալ Հայաստանի զաղափարը գործնականորեն»⁷: Ինչպես տեսնում ենք, թերքի բերած եզրակացության հետ դժվար է չհամաձայնել:

Զարմանայի են Սուրմալուի թուրքերի ու քրդերի ճկուն դիվանագիտական ունակությունները. այս ժամանակ, երբ թուրքերն սկսել էին հարձակումը Արախի շրջանում, տեղի թուրքերն ու քրդերը մոլլաների ու երևելիների միջոցով իրենց հավատարմությունն էին հայտնել Հայաստանի Հանրապետության իշխանություններին⁸ և, միևնույն ժամանակ, հանգստացնելով նրանց, համալրել թուրք ասկյարների շարքերը:

Ուստի մեր կառավարությունը պետք է ամեն գնով պաշտպաներ Սուրմալու: Հարկավոր էր մի նոր Սարդարապատի կոչ և նախապատրաստություն. «Այս ամենը նկատի ունենալով մեր կառավարութեան ու զօրահրամանատարութեան վրա ծանր պարտականութիւն կայ, Սուրմալի շրջանը թիւքական հօրդաներից անվտանգ դարձնելու համար ողջ հայութիւնը ուժի կանգնեցնել»⁹:

Ցավոր, 1920 թ. հայ-թիւքական պատերազմի Սուրմալուի ճակատի նախան արխիվային վավերագրերը թիշ են: Այդ սակավարիվ վավերագրերից են Սուրմալուի ճակատի հրամանատար Դրոյի 1920 թ. հոկտեմբերի 24-ի գեկույցները Նազարբեկովին, որոնք նշագրված են՝ «պահպանել հասուկ»:

Առաջին գեկույցը գրվել էր առավոտյան ժամը 8-ին. «Այսօր ժամը 4-ին թշնամին հարձակում սկսեց Քյուլուլուկ-Կարակոյունլու ուղղությամբ: Մարտերը շարունակվում են: Միաժամանակ 1000 հոգուց բաղկացած մի զորայուն հարձակվում է Վերին Զարուիչի գյուղի վրա: Սուլթանարադի տեղամասում թշնամին 300 մարդկանցով մոտենում է Արհաջին: Դաշրութունի ուղղությամբ թշնամին հարձակման է անցել լեռան ուղղությամբ: Գնդապետ Թարխանովին հրամայել են զնդացրային իր ջոկատով և դիվիզիայի մնացորդներով շարժվել Մարզարա»¹⁰:

Հաջորդ գեկույցը, որը գրվել էր նոյն օրը՝ երեկոյան, արդեն փոքր-ինչ լավատեսական էր. «Գնդապետ Թարխանովը գրավել է Կարակոյունլուն, Թոփսանշալու-Կաշարը և Թոփսանշալու-Բայարը և 11-րդ գնիքի երկու դասակով գնում է Զաննարա-

⁶ «Յառաջ», 1920 թ. հոկտեմբերի 28, հմ. 235:

⁷ Նոյն տեղում:

⁸ Տես նոյն տեղում:

⁹ Նոյն տեղում:

¹⁰ Հայաստանի ազգային արխիվ, պ. ֆ. 199, գ. 1, գ. 255, թ. 1:

բայտ: Երևանյան գնդից երկու դասակ «Դեվեկ-Դաղից լեռներով շարժվում են Դաշըրուոն՝ գրավելու այն: Դրո»¹¹: Ինչպես ասում են՝ Սուրմալովի պաշտպանությունը սուրմալվեցու գործն էր:

Ծնունդով հզդիրցի Վարդգես Ահարոնյանը «Հառաջ» թերթում «Հայրենի շավիդ-ներով (Սուրմալովի ուազմաճակատում)» խորագրով հոդվածաշարում գրում է. «Հաճոյքով յանձն եմ առնում սուրմալեցի հայրենակիցներիս առաջարկը՝ իրենց հաւած գումարներով ներ տանել Սուրմալի հերոսական զօրաբանակին...

Երեկոյ էր, երբ մի ուղեկից ընկերոց հետ հասանք Վաղարշապատ... Առաջին իսկ վայրկյաններից մենք ընկնում ենք այն եռուն, տենդոտ աշխատանքի մքնողորտը, որի մեջ ապրում է տեղի գենատօյի նախազար...

Կէս ժամ անց գալիս է մի զինուր և հրամիրում է նախազարին Սուրմալի զօրաբանակի հրամանատար Դրօի մօտ, որը հենց նոր էր եկել ուազմաճակատից և մի քանի ժամով անցնում է Երևան: Ես և ուղեկիցս ընկերանում ենք Սէյրանեանին և գնում ենք Դրօի մօտ...

...Մենք կրկնակի ուրախ և հպարտ ենք, որ թշնամին պարտել է մեր զիւղերում, մեր դաշտերի վրա և նրան պարտութիւն հասցնող հրամանատարը մեր հայրենակիցն է, մեր համագիւղացին:

Ժամանակը կարծ է. Դրօն շտապով մի քանի կարգադրութիւններ և առաջարկներ է անում Բ. Սէյրանեանին Սուրմալի զօրաբանակի պարենաւորման վերաբերմամբ... Դրօն մնկնում է»¹²:

Այսպես էր սկսել Վարդգես Ահարոնյանը Սուրմալովի մասին պատմող իր ակնարկները՝ անգամ չկուահելով, որ դրանք վերջինն են լինելու Հայաստանի այդ հրաշալի հատվածի պատմության մեջ:

Իսկ այդ ժամանակ հանրապետության թերթերը, մեկը մյուսից արտատպելով, հրապարակում են կառավարական հաղորդագրությունները՝ հույս ունենալով, որ հայ ժողովուրդը գոնե այդ օրհասական պահին կհամախմբվի. «Կարսի անկումից յետոյ թշնամին կանգ չառաւ: Տաճիկ զօրամասերը շտապում են առաջ այն հաշտով, որ յանկարծակիի եկած հայկական զորքը անկարող կլինի դիմանալու: Մինչև Արփաչայ հայ զիւղերը դատարկած են, և գիւղացիութիւնը նորից փախստական է եղել: Նորից աւեր ու տնաքանդութիւն, նորից սով ու թշւառութիւն: Նորից կոտորած:

...Ժողովուրդը գլուխը կորցրած փախչում է... ՈՒ՞ր է փախչում խելակորիս ամբոխը: Հայաստանի բոլոր սահմանները փակ են: Փախուստի դուռ չկայ... Սիակ ելքը կրիւն է:

Կամ կրվով փրկւել, կամ պատով մեռնել: Այս է օրւա հրամայականը:

Հայ ժողովուրդ, բորբագիր վրայիցդ անտարբերությունը, մոռացիր անձնական գործի, մոռացիր մի լուսէ գծած հաշիներդ, մոռացիր արտոյ, այգիր, արհեստանոցի, խանութդ... Ով զինապարտ է, բոն շտապի զօրամասերը: Ով զինուրական հասակից վեր է, բոն սեփական գէնքով ու 7 օրւա հացով... Սիրե՞ դու մոռացել ես Սարդարա-

¹¹ Նոյն տեղում, թ. 2:

¹² «Հառաջ», 1920 թ. նոյեմբերի 5, հմ. 242:

բատի ու Ղարաքիլխայի հերոսամարտը... Սրբավագիր, հեռու՝ մղիք քեզանից վախս ու թուլամորթութիւնը... Թշնամին փոքրաթի է և քոյլ: Մի գրոհ, մի ուժեղ հարւած, և յաղորդութիւնը ապահոված է... (1920 թ. նոյեմբերի 5, Երևան)»¹³:

Որպես կոչ՝ սա անշուշտ ոգեշնչող դիմում էր, սակայն գրեթե մեկդարյա հեռավորությունից այս հարցեր է հարուցում. որքա՞ն կարելի է այս ժողովրդին կոչ անել շմենելու, եթե պետք էր այդ մասին շուտ մտածել և չքողնել, որ թշնամին դուռը հասնի: Որքա՞ն կարելի է այս ժողովրդին դարերով ասել, թե նրա միակ ելքը կոչվն է՝ կենաց կամ մահու: Ո՞ր երկիրն է այդքան երկար մաքառել, ոտար ֆրանսիացու դեմ կովեց ընդամենը երկու տարի՝ 1812–1813 թթ., անոնն էլ հայրենական պատերազմ դրեց: Բնուդարացին, սերբը, հոյսն դժվարությամբ, սակայն իրենց անկախությունը գտան և կարծես թե Մեծ Եղեռնի չենթարկվեցին: Որքա՞ն կարելի է այս ժողովրդին ասել, թե մի հարված, և հաղբանակը մերը կիմնի, մի ժողովրդի, որը 1918-ին տվեց իր վերջին կորովը: Հաղթեց, որ գոնեն մարդավարի ապերելու հոյս ունենա:

Ո՞վ է պատասխան տալու: Ինչպե՞ս էր խեղճ գյուղացին՝ սոված ու անորի, յոր օրվա հացի պաշարով ռազմաճակատ գնալու: Սարդարապատի կոչը երեք օրվա հացի պաշարի խնդրանք էր բովանդակում, իսկ այժմ՝ յոթ. ուրիշ ո՞ր պատերազմում է յոր օրվա հացի խնդիր դրվել: ՈՒրեմն պատասխանը մեկն է. մենք պատրաստ չենք Եղել պատերազմին և դիմակայությանը: Ժողովրդին սնելու, կերակրելու, ուժ տալու փոխարեն եվրոպացու դրներն ենք թակել, կիսատ-պոատ ընտրություններ ենք անցկացրել, խորհրդարան ձևավորել, լեզվակրիվ ու «զաղափարական» դասեր տվել միմյանց. ու՞մ համար, հանուն ո՞ր հայրենիքի, որպեսզի մեր թվարկությունից առաջ դեռ 6-րդ դարի առաջին քարտեզում ARMENIA գրվածն այսօր աշխարհի քարտեզներում ոչինչ չասող թվանշանո՞վ արտահայտվի: Ինչքան կարելի է գրել ու ասել, որ՝ հայ ժողովուրդ, քո փրկությունը քո միասնության մեջ է: Որքա՞ն... մե՞կ դար, երկո՞ւ, երե՞ք: Խսրայել Օրու ժամանակներից մինչ օրս մեզ համար չենք լուծել քաղաքական մեկ հարց՝ Արևմո՞ւք, թե՝ Ուուսաստան... Պատմությունը չի ներում տեղում դոփող ու նոյն հնուսով տառապող ժողովուրդներին...

Կարող է թվալ, թե գոյսները շատ են խտացված: Սակայն դարձյալ վկայակոչենք Վարդես Ահարոնյանին՝ թերելով նրա «Հայրենի շավիդներով» հոդվածաշարից ևս մեկ հատված. «Եջմիածնից 7-8 վերսան դեպի հարաւ, դեպի Արարս, մենք հանդիպում ենք Սուրմալից Եկող գաղրականութեան կարաւանին: Գաղթականութեան հոաքը չի հասնում Եջմիածնին, այլ թերւում է խճուղուց դեպի աջ, դեպի Զանգիրասարի գիտերը: Գրեթե բոլորը սայլերով են...»

Բոլոր սայլերն առանց բացառության բարձած են ձմեռուայ պաշար հացահատիկներով և տան անհրաժեշտ իրերով: Առաջ են ընթանում դանդաղ, առանց շտապելու, առանց իրարանցումի:

...Հասնում ենք Մարգարա: Երբեմնի խաղաղ գիւղը վերածուել է պատերազմական ճամբարի: Չորս կողմը շարժող վաշտեր, թնդանօքներ, զինուրական օրօնօրիներ և բեռնակիր սայլեր:

¹³ «Յառաջ», 1920 թ. նոյեմբերի 6, հմ. 243:

Գիտի երակը գլխաւոր խճուղին է, որ տանում է դեպի Արաքսի կամուրջը: Այստեղ կյանքը եռում է: Ամբողջ փողոցը լեցուն է զօրքերով: Մենք հասանք այն ժամանակ, եթե վերջանում էր Սուրմալի ճակատում սպանած անձնություններից մեկի՝ գլխավետ Ա. Արգարյանի հոգեհանգիստը...»¹⁴:

Սուրմալուի ճակատի պատերազմական օջախներից մեկը Կարակոյունլու



Սուրմալու «Դրո» հարվածող գնդի իրամանատարական կազմը

Առաջին շարրում (չախից աջ)՝ Հակոբ Շահրազյան, Արամայիս Հովհաննիսյան, Սիմոն Հարությունյան, Արշավիր Սողոյան, Հայրապետ Լալայան, Նահապետ Հայրապետյան, Բարսեղ Մելիք-Վարդանյան, Մանուկ Մանուկյան, Արտավազդ Ամիրխանյան:

Երրորդ շարրում (չախից աջ)՝ Բարկեն Թուսյան, Խաչատոր Շահրազյան, Հակոբան Սելիյան, Եղիշ Կարսպետյան, Արտաշես Պահլավոնի, Արհստակես Կանայան, Եփրեմ Տեր-Պողոսյան, Վաղարշակ Աստյան:

Երրորդ շարրում (չախից աջ)՝ Արշավիր Սայադյան, Մամիկոն Զաքարյան, Թերճ Ավազյան, Վաշագան Հասրաթյան:

Չորրորդ շարրում (չախից աջ)՝ Վաչագան Աստյան, Մամիկոն Խասբեկյան:

գյուղն էր, որը գտնվում էր Իգդիր-Մարգարա խճուղու դեպի ճախ: Այս գյուղը նոյեմբերին երեք անգամ ձեռքից ձեռք անցավ: Սակայն այս շրջանի կրիվների հերոսապատումը կրկին պատկանում է Դաշրությունին, իերոսական մի գյուղի, որը մշտական արյունահեղ կոհիվների մեջ էր եղել ոչ միայն վերջին 10 տարիների ռազմական գործողությունների ժամանակ, այլև որանից էլ առաջ: «Ուսական տիրապետության օրերին անգամ, գրում է «Հառաջ» թերթը, եթե ամբողջ Արարատեան դաշտը հանգստութիւն էր վայելում, Դաշրությունը ամեն տարի ստիպած էր պաշտպանել Մասսի քրդերի հրոսակախմբերի յարձակումների դեմ:

¹⁴ «Յառաջ», 1920 թ. նոյեմբերի 7, հմ. 244:

Անթիվ անգամ հերոս գիտը ասպատակել է, անհանար կրիմեր է մղվել, բայց մինչև վերջ էլ շարունակում է փարած մնալ յախտենական հսկայի՝ Մասսի փէշերին»¹⁵:

Իր վերջին օրերն ապրող Հայաստանի Հանրապետության Կառավարությունը մեկ անգամ ևս փորձում էր հայ ժողովրդին ոտքի հանել երկիրը փրկելու համար. «Այն ժամանակ, երբ նոյեմբերի 7-ի զինադադարի պայմաններն արդէն իրագործած էին, և մենք պատրաստում էինք հաշտութեան պատուիրակութիւն ուղարկել, նոյն Անգօրայի կառավարութիւնը իր նոյեմբերի 8-ի հեռագրով յայտնում է, թե ինքը փոխում է արդեն կնքած զինադադարը և առաջարկում է նոր պայմանները: Այդ պայմանները հետևեալն են. 24 ժամայ ընթացքում հայկական գորքերը պարտավոր են նորից յետ քաշել և այս անգամ բռնել Սուրմալու-Արար կայարան-Գոզի Զիարեթ-Արագած լեռան լանջը-Տանագիրմազ-Նօվօ-Միխայլօվկա-Լոռիքենդ-Շերմուդ-Եալվանդաղ գծից արևելք: Այսինքն այժմ ևեր զիցել տաճիկներին Հայաստանի կտսից ավելին: Ընդունել այս պայմանները՝ նշանակում է զինարափ լինել քշնամու առջև: Այսպիսի պայմաններում կառավարութիւնը մերժեց զինադադարի նոր պայմանները՝ պնդելով նոյեմբերի 7-ին կնքված զինադադարը, որի խախտան հանար չկար ոչ մի առիք»¹⁶:

Նոյենիսկ արդեն վերջնակետին հասած այս պայմաններում մեր կառավարությունը համարում էր, որ «քշնամին գալիս է փոքր ոյժերով. նրա յաջողութիւնը քո բոլորէան մէջն է...»¹⁷: Բայց ի՞նչ աներ խեղճ ժողովուրդը. ուժ ուներ՝ չկովեց...

Վ. Ահարոնյանի վկայությամբ՝ «Սուրմալի կրիմների ռազմաճակատը կազմում էր մի եռանկիւնի, որի կատարը գտնում էր Իգդիրում, երկու կողմերը կազմում էին Իգդիր-Մարգար և Իգդիր-Կարակալա գծերը, իսկ հիմքը՝ Արաքսը, Կարակալայի և Մարգարայի կամուրջների միջև: Հոկտեմբերի 24–28-ը քշնամին այդ ճակատում փորձել է կիրառել երկու ծրագիր, որոնց հիմնական գաղափարը նոյնն է եղել տարրեր է եղել միայն կիրառման մասշտաբը, չափը: Մինչև հոկտեմբերի 25-ը թիւրքերը աշխատել են գրաւել Կարակալայի և Մարգարայի կամուրջները՝ ծագելով այսպիսվ սեղմել մեր զօրքերը մի հսկայական ունելիք մէջ և կտրել նրանց նահանջի ճամբան: Երբ հոկտեմբերի 25-ին այդ ծրագիրը վիժեց շնորհի մեր զօրքերի հերոսական դիմադրության, թիւրքերը փորձեցին կիրառել նոյն ծրագիրն աւելի փոքր չափերով՝ աշխատելով այս անգամ աւելի փոքր ունելիք մէջ առնել Իգդիրը մերձակայ մի քանի զիւղերով: Ինչպես յետագայում պարզեց, տաճիկ կանոնադր զօրքերը, քրդական մեծարանակ կրտսակախմբերի հետ, իշնելով Զինգիլի լեռնանցքից, հասել են Օրգով և Արիաջ գիւղերը և նտաղութիւն ունենալով հարածել մեր զօրքերի ձախ թևի կենտրոնը, Մասսի փէշերով, լեռնային արահետներով անցնել մինչև Դաշրուուն զիւղի դիմաց և այնուհետև գրավել Իգդիր-Մարգարա խճուղին: Յետ մղելով մեր փոքրարի զօրամասերը՝ (ընդգծումը մերն է.՝ Հ.Հ.) քշնամին հետզիւտէ գրաւել է Դաշրուունը, Ղաջար-Թոխսանշալուն, Կարակօյինլուն և դուրս է եկել Իգդիր-Մար-

¹⁵ Նոյեն տեղում:

¹⁶ «Հայութ», 1920 թ. նոյեմբերի 10, հմ. 246:

¹⁷ Նոյեն տեղում:

գարա խճուղու վրա՝ Դալիկդաշի մոտ»¹⁸: Փաստորեն հենց այս թուրքական ու քրդական օպերացիայով է վճռվել Սուրմալուի ճակատի բախտը, և Իգդիրը հայտնվել է շրջափակման օրակում (և ինչպես չի հաջողվել կանխատեսել թշնամու այս տարաշարժը):

Իրենց ձեռքում ունենալով Իգդիր-Մարգարա ռազմավարական նշանակության ճանապարհը, որը իրավամբ Սուրմալուի համար «կյանքի ճանապարհի» արժեք ուներ, թուրքերն ուժերի մի մասը ուղղեցին դեպի հյուսիս՝ նախատակ ունենալով, ինչպես երկու տարի առաջ, գրավել Արաքս կայարանը, իսկ մյուս մասն սկսեց շարժվել Մալլարլու-Իգդիր ուղղությամբ:

Մարգարայի խճուղին փակող Դալիկ-Դաշ գյուղի դիրքերը թուրքերը գրավեցին հոկտեմբերի 25-ին, ցերեկվա ժամը 4-ին: Հենց այդ ժամանակ թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ նահանջած մեր փորբարիվ ուժերին օգնության հասավ փոխգնդապես Թարխանյանն իր գորամասով: «Սակավախոս փոխգնդապետը մեր հարցասիրութիւնը բաւարարելու համար «Երկար» մի պատմութիւն է անում Դալիկդաշի կուի մասին».

«Ենիծածները ամեն մի քարի գլխին մի-մի գնդացիր էին դրել: Գործում էին բացառապես գնդացիրներով: Ես իմ տղաներով հակագրուի անցա և մի ժամում կորցրեցի 13 զինվոր և 44 վիրավորվածներ, այդ թվում՝ 5 սպա: Նոյն օրը Դալիկ Դաշը մեր ձեռքումն էր, իսկ թշնամին փախուստի մատնվեց»¹⁹:

Դալիկ-Դաշի կրվում կրած պարտությունը թուրքերին ստիպեց գորքերը Արաքսի կամրջից հետ քաշել Ավիշան գյուղը և հայկական կողմին կրկին զիջել Կարակոյունլուն, Թոխանշալուն և Դաշբուրուն:

Հոկտեմբերի 26-ին մեր գորամասերն անցան վճռական հարձակման: «Թշնամին բոլոր կետերում, կատաղի դիմադրությունից հետո, բազմաթիվ դիակներ թողնելով, դիմեց խոճապային փախուստի ու հետզիետ հեռացավ Բարբորյան լեռների մյուս կողմը: Երևանը, որ մի քանի օր ապրում էր Սուրմալուից հասնող թնդանոթների որոտի տակ և սարսափահար սպասում էր ճակատամարտի ելքին, հանգիստ շունչ քաշեց»²⁰:

Թվում էր, թե հնարավորություն էր ստեղծվել փրկելու դրությունը: Եվ կրկին հայոց մասուլում հայտնվեցին հայրենասիրական կոչ-քարոզներ. «Բանակը պէտք է վերակազմել, տալ անոր ժողովրդական հիմունքներ... հրաւիրել ու միայն պահել ին ազգային տարբեր հայրենասեր զինվորականներ, հայրենիքին առանց սակարկութեան ծառայելու պատրաստակամ մարդիկ... ՈՒրիշ խոսքով՝ մեր բանակի դեկավարութիւնը պէտք է յանձնել ժողովրդի վստահութիւնը վայելող անձնաւորութիւններու ձեռքը... Իգդիրի հերոսական պաշտպանության բաղդատորիւնը Կարսի անորակելի յանձնումին հետ, բաւական է ցոյց տալու համար, թե ժողովուրդը, հայ զինորդ ինչեր ընդունակ է կատարելու, երբ անձնուրաց դեկավարներ ունի ան: Հրաժարիմք պէտք է

¹⁸ Նոյն տեղում:

¹⁹ Նոյն տեղում:

²⁰ *Ս. Վրացյան*, նշ. աշխ., էջ 507–508:

ըսել րոպեի հետ յարմարելու, մի կերպ եօլայի երթալու քաղաքականութեան հետ, որովհետև առանց ժողովրդական լիակատար վստահութեան, որ չունի ներկայ քանակը, անոր կազմալուծումը դեռ նորանոր ցաւալի անակնականեր պիտի վերապահի մեզ»²¹:

«Իգդիրը գրեթէ դատարկ է ազգաբնակչութիւնից,՝գրում է իգդիրցի Վարդգես Սիարոնյանը: Կոխմերի ընթացքու և աւելի շատ կրիմերից յետոյ ազգաբնակչութիւնը փոխադրուել է աւելի ապահով վայրեր՝ թեթևացնելով դրանով ճակատում կրուղ զօրքի դրութիւնը, որ այդպիսով ազատել է այլևս ազգաբնակչութեանը ապահովութեան հոգով գրադելու անհրաժեշտութիւնից: Ազգաբնակչութեան նահանջը կատարել է այնքան կանոնավոր կերպով, որ հոկտեմբերի 25-ի կովի օրը տեղի են ունեցել Իգդիրի քաղաքային ինքնավարության ընտրութիւնները: Քաղաքային այգում աշնան դեղին տերևներով ծածկած ծառուղիներում խումբ-խումբ նստած են կամ գրունում են զինուրները... 10-րդ գնդի առաջին վաշտի զինուրներն են...»

...Յետազայում ինձ համար պարզեց, թէ ինչ ասել է գնդի առաջին վաշտը: Դա մեկն է կտրիճ փոխգնդապետ Ե. Մամաջանեանի վաշտերից, որոնք իրենց վրա են ընդունել տաճկական գրոհների ամբողջ կատաղութիւնը և ամենուրեք ջարդելով թշնամուն յետ են շարտել նրան դէպի լեռները:

Թշնամին գրաւած է եղել Սուլթանարադ գիլդը, Իգդիրից երեք վերստի վրա:

Մամաջանեանին հրամայում է դուրս շարտել թշնամուն այդ գիլդից: Առաջին վաշտի գլուխն անցած հերոս փոխգնդապետը մի հարածով դուրս է շարտում թիրքերին Սուլթանարադից:

Մինչ այս լուր է ստացում, որ հակառակ ուղղութեամբ թուրքերը գրաւել են Ալիյամարը և առաջանում են դէպի Իգդիր: Թշնամու առաջապահներն արդէն հասած են եղել Իգդիրի գերեզմանատանը՝ Իգդիրից մի վերստ դէպի արևմուտք: Առաջին վաշտն իր ավելները դարձնում է այդ կողմը և ջարդած թշնամու թիկունքի վրա կրնկակոյն խումում է Ալիյամար: Խումայի մատնված թշնամին հազի ժամանակ է ունենում ցած թափել գիլդում արած թալանը և փախչել դէպի Եալզի, որը նույնպէս քիչ յետոյ անցնում է մերոնց ձեռքը»²²:

Նոյեմբերի 8-ի առավոտյան թուրքերը հարձակում գործեցին Զարուխչի գյուղում տեղակայված մեր զորամասի վրա, սակայն պարտություն կրեցին և նահանջեցին:

Ինչպես տեսնում եմք, 1920 թ. հայ-թուրքական պատերազմի մռայլ պատկերի վրա Սուլթանի ճակատի ռազմական գործողությունները երբեք էլ պարտվող կողմի սովորական ամփոփագրեր չեն եղել: Համենայն դեպս, բերված հաղորդագրությունները ակնհայտորեն ապացուցում են Սուլթանի ճակատի՝ այդ պատերազմից «պատվով դուրս» գալու իրողությունը: «Սուլթանի գօրաբանակում տիրող ռազմաշունչ և հայրենասէր տրամադրութիւնը վարավել է բոլորին. և՛ սպային, և՛ հասարակ զինուրին, և՛ իին փորձաւած ռազմիկին, և՛ երիտասարդ նորակոչիկին: Հինգօրեա յամառ կոխմերում հաւասար տոկունութիւն և հերոս խիզախութիւն են ցուցահանել

²¹ «Յառաջ», 1920 թ. նոյեմբերի 10, հմ. 246:

²² «Յառաջ», 1920 թ. նոյեմբերի 11, հմ. 247:

ամենքը, թէ նախկին հոչակատր դասալիք նոր-բայազէտցիները, թէ վանեցիները, թէ էջմիածինցիները և թէ մանաւանդ սուրմալիցիները, որոնք կազմում են այսպեղ գործող գնդերի ամենառազմունակ դաշտը (լնդգծումը մերն է.-Հ.Հ): ...Եթէ մեզանից ամեն մէկը՝ լինի դա զինուր միս ճակատներում, թէ թիկունքում աշխատող, ցուցահանէ սրանց անձնիբութեան մի շնչին մասն անգամ, մեր հայրենիքը փրկած է ընդմշշու²³:

Եթէ պատմագիտության մեջ որոշ չափով հայտնի են 1918 թ. մայիսյան հերոսամարտերին ակտիվ կերպով մասնակցած սպաների անունները, ապա նոյնը չի կարելի ասել 1920 թ. հայ-բորբական պատերազմի մեր սպայակազմի մասին: Ի դեպ, պեսք է նշել այս հանգամանքը, որ Սուրմալում հերոսացած հայազգի սպաների մեծ մասը երիտասարդ էին. զնդապես Խուդաբաշյանը 30 տարեկանից ոչ ավելի էր, փոխգնդապետ Թարխանյանը՝ 26-27 տարեկան, Թարվերդյանը՝ 26 տարեկան, «շրջահայաց, զգոյշ և հոտառու» Շահբազյանը՝ 27 տարեկան, «կրակ ու բոց» փոխգնդապետ Մանաջանյանը՝ 24 տարեկան: Այն անվեհեր քաջորբյունը, որ յուրաքանչյուրը ցուցաբերել է թշնամու հանդեպ, դարձրել է այս հերոսներին իրենց զինվորների սիրելիները: Սուրմալուի գորաբանակի մեջ աշքի ընկնող սպաների մեջ առանձին տեղ է գրավում զնդապետ Լալայանը: Նա միակ տարիքավոր բարձրաստիճան զինվորականն էր (մոտ 45 տարեկան): Ծնորիկի իր տարիքի՝ նա չուներ իր ջահել զինակիցների երիտասարդ ավյունը, դրա փոխարեն անգնահատելի էր իր հաստատակամորթյամբ և վճռականությամբ: Եթէ մի որևէ հանձնարարություն էր տրվում նրան, ապա կարեի էր միանգամայն վստահ լինել, որ նա այդ հանձնարարությունը ճշտորթյամբ կկատարի: Կարակալայի կամրջի պաշտպանությունը հենց նրա շնորհն էր²⁴:

Մի առանձին ներկայացման թեմա է՝ Դրոյի՝ որպես ճակատի հրամանատարի, ազգային գործչի, նոր միայն՝ իգդիրցու կերպարը: «Մի տարի առաջ Սուրմալի դաշտերում կրկին արիւն էր հոսում: Քիրոր բարարական երեքհազարանոց մի հրոսակախոսմք իշնելով Բարդողեան լեռներից գիշերով խուժել էր Իգդիր՝ յանկարծակիի բերելով մեր պահակախմբերը: Գիշերային խավարի մեջ քաղաքի կենտրոնում յանկարծական յարձակման ենթարկած մեր փոքրաբանակ զօրքերը հազի թե կարողանային ոչ թե ջարդել թշնամուն, այլ նոյնիսկ լուրջ դիմադրութիւն ցույց տալ, եթէ այդ օրը Իգդիրում չիներ ինքը այդ ճակատի հրամանատարը Դրօն, որը կտրիծ փոխգնդապետ Թարխաննեանի հետ ընդամենը 180 հոգու գոլոս անցած Իգդիրի փողոցներում կատաղի ձեռնամարտի է բռնուու թշնամու գերազանց ուժերի հետ, ջարդում և դրւս շարտում Իգդիրից: Հետևեալ օրը Իգդիրի բնակիչները մաքրում էին փողոցները թշնամու բազմաթիւ դիմակներից»²⁵:

Դրոյի մասին ուազմաճակատում լեզենդներ էին պտտվում: Կովի ժամանակ նա ամենուրեք էր: Զկար մի տեղանք ու դիրք, մի գրամաս, որ նա չայցելեր ու չոգևորեր կովից առաջ կամ կովի ընթացքում: Մեկին քաջալերում էր, մյուսին՝ խրախուսում,

²³ Նոյն տեղում:

²⁴ Տես «Յառաջ», 1920 թ. նոյեմբերի 13, հմ. 249:

²⁵ «Յառաջ», 1920 թ. նոյեմբերի 17, հմ. 252:

երրորդի՝ սխալն ուղղում, չորրորդին տեղում նոր հրահանգներ էր տալիս: Նրա դեկավարած զորամասերը մշտապես զգացել են նրա անմիջական ներկայությունը ռազմի դաշտում, մի հանգամանք, որը շատ կարևոր էր նահանջող և հոգեբանական առումով ընկճած հայ մարտիկների համար: Դրոն, իր մարտիկներից պահանջելով անտրտունց մեռնել հանուն հայրենիքի, միևնույն ժամանակ սիրում ու գնահատում էր հասարակ գինվորին ու հոգատար էր նրա նկատմամբ: Չորրամասերից մեկի հրամանատարի հարցին՝ ինչպես վարվել, Դրոն պատասխանում է, որ հրամայում է բողոքին մեռնել, բայց՝ ոչ մի քայլ չնահանջել, ինչին հետևում է «Լուո՞մ եմ, պարո՞ն հրամանատար» պատասխանը: Ահա թե ինչու Սուրմալուի ճակատի գինվորները կարողացան դիմակայել այդ դաժան պատերազմում:

Սուրմալուի ճակատը դիմակայել է մինչև պատերազմի վերջին պահը և նահանջել է միայն ընդհանուր ռազմական վիճակի թելադրանքով, ինչում Դրոն ու նրա զինվորները, և նրանց շարքում նաև մեծաքիվ սուրմալվեցիներ ամենսին էլ մեղք չունեին: **Սուրմալուն չի պարտվել, Դրոն չի պարտվել:**

Հետագայում Սուրմալուի հարցը մի քանի անգամ քննվեց 1921 թ. կայացած նախ՝ Մոսկվայի ռուս-թուրքական, ապա Կարսի բուրք-անդրկովկասյան կոնֆերանսներում, որտեղ քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված պայմանագրով Սուրմալուն դարձավ թուրքական տարածք: Եվ որքան էլ հայ գործիչները բողոքեցին այս հակահայկական գործարքի դեմ, այնուհանդերձ թուրքերին հաջողվեց վճիռը բողնել անփոփոխ: Լուսնի 1921 թ. կոնֆերանսում թեպետ հայկական պատվիրակությունները քաղում անգամ քակեցին Անգիայի և Ֆրանսիայի վարչապետների ու օտարերկրյա մեծ ու փոքր պաշտոնյաների դռները, բայց հարցն այդպես էլ դրական լուծում չստացավ: Ավետիս Ահարոնյանն իր հուշերում նկարագրում է հայոց պատվիրակության հանդիպումը Ֆրանսիայի Վարչապետ Պուանկարեի հետ, որը, ակնհայտ տիհաճությամբ լսելով իրենց, քացականչել է: «Թողեր խնդրեան անցյալը: Մենք հնար չունենք բյուրերին պատերազմ անելու: Ես չեմ կարող ժամանակս կորցնել: Խոսենք իրականությունից»²⁶:

Հայ ժողովրդին միակ կարեկողը նորվեգացի մեծ նարդասեր Ֆրիտյոֆ Նանսենն էր, որին ևս մեծ դիմականներում լսող չկար:

«—Գուցե գիտեք, —դիմելով Նանսենին՝ ասել է Ահարոնյանը, —որ հակառակ 10-15 հազար գաղթականների, որ անցան Հայաստան վերջին տարիներին, հարյուր հազարի չափ մարդ է հեռացել Հայաստանից: Պարզ է, որ ապրել չի լինում: Սրան դարձան է պետք: Եվ դարձան՝ Թյուրքաց Հայաստանն է: Նայեցեք այս քարտեզը (մենք փուեցինք Հայաստանի քարտեզը): Ահա այս բոլոր տարածությունը ամայի է, թյուրքաց ձեռքին, և նրանք երբեք չպիտի կարողանան քնակեցնել:

Նանսեն.՝Ամայի է և այս, նա ձեռքը տարավ Կարսի և Սուրմալուի վրա... Ես գիտեմ, որ այդ հողերը պարապ պատար են: Ես գնացի մինչև Արաքսի ափերը և նայում էի Սուրմալուին, ամբողջ դաշտարկ է... Սիայն Մասիսի վեշերին քյուրդերի հանդիպեցի...»²⁷:

²⁶ Ա. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սկը և Լոզան: Ե., 2001, էջ 219:

²⁷ Նոյն տեղում, էջ 239:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

НЕПОБЕЖДЕННЫЙ ФРОНТ АРМЯНО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ 1920 г.

А. Ж. ОГАНЕСЯН, доктор исторических наук, профессор,
начальник научного отдела ЕГУ

РЕЗЮМЕ

Во время армяно-турецкой войны 1920 г. турецкий корпус Кязима Карабекира предпринял наступление по двум направлениям: на Карс и на Сурмалу. Наступление в Сурмалинском направлении преследовало несколько целей: через этот район вторгнуться в Араратскую долину и овладеть Ереваном, лишить расположенные в Игдире армянские части возможности оказать помощь защитникам Карса, а также поддержать мусульманское население Сурмалу для создания разделительной линии между Восточной Арменией и Западной. Малочисленные армянские войска, возглавляемые Драстаматом Канаяном и группой молодых офицеров, мужественно отражали атаки противника, нанося ему существенные потери, и отступили лишь вследствие резкого ухудшения положения на другом фронте—падения Карса.

Хотя боевые действия на Сурмалинском фронте слабо освещены в армянской историографии вследствие малочисленности сохранившихся документов, однако имеющиеся факты свидетельствуют о героизме офицеров и солдат, что скрашивает общее впечатление от проигранной войны.

MILITARY HISTORY

THE UNDEFEATED FRONT OF THE ARMENIAN-TURKISH WAR OF 1920

H. Zh. HOVHANNISSYAN, Doctor of Historical Sciences, Professor,
Chief of the Scientific Department of the YSU

SUMMARY

During the Armenian-Turkish war in 1920 the Turkish corps of Kazim Karabekir waged an attack in two directions—Kars and Surmalu. The attacks in the Surmalu direction pursued several goals—invade the Ararat Valley through this region and occupy Yerevan, deprive the Armenian units located in Igdir of the opportunity to render assistance to the defenders of Kars, as well as support the Muslim population of Surmalu so as to draw a demarcation line between Eastern and Western Armenia. The few Armenian troops headed by Drastamat Kanayan and a group of young officers courageously repulsed the enemy attacks inflicting heavy losses on them and retreated only because of the abrupt worsening of the situation on the other front—the fall of Kars.

Though the combat activities on the Surmalu front are poorly illuminated in the Armenian historiography as a result of few saved documents, the existing facts are evidence of the officers and soldiers' heroism, which smoothes over the general impression of the lost war.

ՀԱՍԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ն. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, կապիկան, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, կապիկան,
Դ. Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ագրեգատների համափոխարինելիություն	—միջակա կարդանային լիսեռ—промежуточный карданный вал; counter-shaft
—взаимозаменяемость агрегатов; interchangeability of units	
առանց լրացավորման վազք—пробег без дозаправки; run without topping-up	լողունություն—плавучесть; floatage, floatation
առողմների փոխասավորություն—конфигурация атомов; atom configuration	խածառում—травление; etching
գնդակակայտն անվաղող—пуленепробиваемая шина; bullet-proof tire	խոնավանցիկություն—влагопроницаемость; humidity permeability, moisture permeability
դաշնագիր—коюзный договор; treaty of alliance	խտաչափառակ—комбинированный диск; compound disk
դաշնայնություն—федерализм; federalism	կալբերի հոսունություն—текущесть кадров; staff turnover
զորաշարժ—маневр; manoeuvre, maneuver	կապուղի—канал связи; communications channel, communications link
զրահահանդերձ—бронеснаряжение; armoured equipment	կենարանական օգայարար—биологический сенсор; biological sensor
զրահահար-լուսածիչ արկ—бронебойно-трассирующий снаряд; armour-piercing tracer shell	կենաշրջան—жизненный цикл; life cycle
զրահապատ հետախուզադետրային մերենա—бронированная разведывательно-дозорная машина; armoured reconnaissance-patrol vehicle	կենտրոնախույզ օդափոխիչ—центробежный вентилятор; fan blower, centrifugal blower
զույգված գնդացիր—спаренный пулемет; coupled machine-gun	կցորդիչ—муфта; clutch, muff
էլեկտրաշարժաբեր—электропривод; electric drive	հակասականային տակմոն—противоминный поддон; antitank pan
լինքացամաս—ходовая часть; running gear	հակազգայարարական լազերային համակարգ—антисенсорная лазерная система; antisensor-laser system
լինքացապաշար—запас хода; fuel distance	համագործակցային ձեռնարկություն—кооперативное предприятие; cooperative enterprise
թենիսի թևճակ—теннисная ракетка; tennis racket	համադրիչ—синтезатор; synthesizer
իոնային ներկայում—внедрение ионов; ion implantation	հեռուստային համակարգ—телевизионная система; television system
լիսեռ—вал; shaft	հոսանքատար—токовод; electric circuit
—ելքային լիսեռ—выходной вал; output shaft	ձևանացում—формализация; formalization
	միօրինակացում—унификация; unification

tion	տարաշարժունություն—маневренность;
մշտագննում—мониторинг; monitoring	manoeuvrability
նանոդակոտի—нанопора; nanopore	տեղեկություն—информациональный;
ներարկումային լազեր—инъекционный	information, informational
լազեր; injection laser	—տեղեկություն պատերազմ—информационная война; information warfare
նմանարկիչ սարքավորանք—имитационное оборудование; simulation equipment	—տեղեկություն հասարակություն—информационное общество; informational society
նշագրում—обозначение; designation	տեղեկույթ—информация; information
նշանոց—прицел; sight	—տեղեկույթի զաղտնագրում—засекречивание информации; information classification
—համապատանի նշանոց—универсальный прицел; universal sight	—տեղեկույթի վերձանում—дешифровка информации; information deciphering
—դրամիտակային համակցած նշանոց	—տեղեկույթի փաստագրում—факторграфирование информации; information factual accounting
—перископический комбинированный прицел; periscopic combined sight	տեսակարար հզորություն—удельная мощность; specific power
նույնականացում—идентификация; identification	տվյալ—датчик; sensor
նույնացում—отождествление; authentication	տուրբոնախառնություն—турбонагнетатель; turbo-supercharger
շարժիչափոխադորդային հատվածամաս	ուժակայանք—силовая установка; power-plant
—моторно-трансмиссионный отсек; engine-transmission compartment	ուղղորդչան կայան—станция пеленгации; direction-finding station
շրջաբերական հասցեավորում—циркулярная адресация; circular addressing	փոխակերպիչ—преобразователь; converter
ջերմադիմում մոդուլ—модуль тепловидения; thermovision module	փոխարկում—переключение; commutation
ռադիոորուման կետ—пункт радиоперехвата; radio interception point	փոխուժություն—взаимодействие; interaction
վերազիմում—первооружение; 1. rear-mament, 2. reequipment	փոփոխական—модификация; modification
վերակազմավորում—реорганизация; reorganization	փուլաշրջան—цикл; cycle
վիճագրում—литография; lithography	օգտահանում—утилизация; utilization
վնասապահանք—рекламация; reclamatiion	օդանույնություն—воздуходувка; blast, air blower
տանըի աշտարակի խելային մաս—задняя часть башни танка; tank turret rear	
տարակառուցվածք—гетероструктура; heterostructure	

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

антисенсорная лазерная система—հակազայարարական լազերային համակարգ
биологический сенсор—կենսարանական զգայարար

бронебойно-трассирующий снаряд—զրահահար-լուսածրիչ արկ
бронеснаряжение—զրահահանդերձ
бронированная разведывательно-дозорная машина—զրահապատ հետա-

խուզադիետքային մեքենա
вал—լիսեն
—выходной вал—ելքային լիսեն
—промежуточный карданный вал—
միջակա կարդանային լիսեն
взаимодействие—փոխգործություն
взаимозаменяемость агрегатов—ագրե-
գատների հանափոխիմելություն
влагопроницаемость—խոնավանցիկութ-
յուն
внедрение ионов—իոնային ներկալում
воздуходувка—օպամու
гетероструктура—տարակառուցվածք
датчик—տվիչ
жизненный цикл—կենսաշրջան
задняя часть башни танка—տանկի աշ-
տարակի խելային մաս
запас хода—ընթացապահար
идентификация—նույնականացում
имитационное оборудование—նմա-
նարկիչ սարքավորանք
инженерный лазер—ներարկումային
լազեր
информационный—1. տեղեկություն,
2. տեղեկատվական, 3. լրատվական
—информационная война—տեղեկու-
թյան պատերազմ
—информационное общество—տեղե-
կության հասարակություն
информация—1. տեղեկույթ, 2. տեղեկա-
տվություն
—дешифровка информации—տեղե-
կույթի վերծանում
—засекречивание информации—տե-
ղեկույթի գաղտնագրում
—фотографирование информации
—տեղեկույթի փաստագրում
канал связи—կապուղի
комбинированный диск—խտակա-
փառակ
конфигурация атомов—ատոմների
փոխասափորություն
кооперативное предпринятие—համա-
գործակցային ձեռնարկություն
коробка передач—փոխանցումատուփ
литография—1. վիմագրում, 2. վիմագրու-
թյուն
маневр—1. տարաշարժ, 2. գորաշարժ
маневренность—տարաշարժունություն
модификация—փոփոխակում
модуль тепловидения—ջերմադիտման
ճյուղ
мониторинг—մշտագննում
мотorno-трансмиссионный отсек—
շարժչափոխադրդային հատվածա-
մաս
муфта—կցորդիչ
нанопора—նանոծակուտի
обозначение—նշագրում
отождествление—նույնացում
первооружение—վերագինում
переключение—փոխարկում
плавучесть—լողունություն, լողունակութ-
յուն
преобразователь—փոխակերպիչ, կեր-
պափոխիչ
прицел—նշանոց
—перископический комбинирован-
ный прицел—ջրադիտակային հա-
մակցված նշանոց
—универсальный прицел—համապի-
տանի նշանոց
пробег без дозаправки—առանց լրալր-
ափորման փագք
противоминный поддон—հակաակա-
նային տականոց
пуленепробиваемая шина—գնդակա-
կայուն անվարող
пункт радиоперехвата—ռադիոռորման
կես
рекламация—վճարապահանց
реорганизация—վերակազմավորում
силовая установка—ուժակայանք
синтезатор—համադրիչ
союзный договор—դաշնագիր
спаренный пулемет—զույգված գնդացիր
станция пеленгации—ուղղության կա-
յան
текущесть кадров—կադրերի հոսունութ-
յուն
телевизионная система—հեռադիտային
համակարգ
теннисная ракетка—թենիսի թևճակ
токовод—հոսանքատար
травление—1. խածատում, 2. քուլացում
турбонагнетатель—տուրբոմուղիչ

удельная мощность—տեսակարար հզուրյուն
унификация—1. միօրինակացում, 2. միասնացում
утилизация—օգտահանում
федерализм—դաշնայնուրյուն
формализация—ձևայնացում

ходовая часть—ընթացամաս
центробежный вентилятор—կենտրոնախոսություն
цикло—փուլաշրջան
циркулярная адресация—շրջաբերական հասցեավորում
электропривод—էլեկտրաշարժաբեր

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

- air blower—see *blast* 3
antimine pan—հակառականային տակնոց
antisensor-laser system—հակազգայարական լազերային համակարգ
armoured equipment—զրահահանդերձ
armoured reconnaissance-patrol vehicle—զրահապատ հետախուզադետրային մեքենա
armour-piercing tracer shell—զրահահարձակության արկանային մուրական լազերային համակարգ
atom configuration—ատոմների փոխասպառություն
authentication—նույնացում
biological sensor—կենսաբանական զգայարակ
blast—1. պոռքկում, 2. պայթյուն, 3. օդամուղ
bullet-proof tire—զնդակակայուն անվազող
centrifugal blower—see *fan blower*
circular addressing—շրջաբերական հասցեավորում
clutch—1. բռնում, սեղմում, 2. կցորդիչ
communications channel—կապուղի
communications link—see *communications channel*
commutation—փոխարկում
compound disk—խտասկավառակ
converter—փոխակերպիչ
cooperative enterprise—համագործակցային ձեռնարկություն
coupled machine-gun—զույգված զնդացիք
cycle—փուլաշրջան
designation—նշագրում
direction-finding station—ուղղորդչան կայան
- electric circuit—հնասնըատար
electric drive—էլեկտրաշարժաբեր
engine-transmission compartment—շարժիչափոխիհաղորդային հատվածանանակ
etching—1. փորագրում, 2. խածատում
fan blower—կենտրոնախոսություն օդափոխիչ
federalism—դաշնայնուրյուն
floatage—լողունուրյուն
floatation—1. see *floatage*, 2. անցունակություն
formalization—ձևայնացում
fuel distance—ընթացապաշար
heterostructure—տարակառուցվածք
humidity permeability—խոնավանցկություն
identification—նույնականացում
information—1. տեղեկություն, 2. տեղեկատվություն, 3. լրատվություն, 4. տեղեկության
—information classification—տեղեկությի գաղտնագրում
—information deciphering—տեղեկությի վերծանում
—information factual accounting—տեղեկությի փաստագրում
—information warfare—տեղեկության պատերազմ
informational—see *information* 4
—informational society—տեղեկության հասարակություն
injection laser—ներարկումային լազեր
interaction—փոխգործություն
interchangeability of units—ազեղատների համափոխարինելություն
ion implantation—իոնային ներկալում
life cycle—կենսաշրջան

lithography—1. վիմագրում, 2. վիմագրություն	լիտոգրաֆիա
maneuver—see <i>manoeuvre</i> 2	
manoeuvrability—տարաշարժունություն	
manoeuvre—1. տարաշարժ, 2. գորաշարժ	
modification—փոփոխակում	
monitoring—մշտագննում	
moisture permeability—see <i>humidity permeability</i>	
muff—see <i>clutch</i>	
nanopore—նանոդակոտի	
power-plant—ուժակայակի	
radio interception point—ռադիոորոսման կետ	
rearmament—վերազինում	
reclamation—վճարապահանց	
reequipment—վերազինում	
reorganization—վերակազմավորում	
run without topping-up—առանց լրացակորման վազք	
running gear—ընթացամաս	
sensor—տվյալների սենսոր	
shaft—1. կոր, ձող, 2. լիսեն	
—countershaft—միջակա կարդանային	
	լիսեն
	—output shaft—ելքային լիսեն
	sight—օչանցք
	—periscopic combined sight—շրջադիր տակային համակցված օչանցք
	—universal sight—համապիտանի օչանցք
	simulation equipment—նմանարկիչ սարքավորանք
	specific power—տեսակարար հզորություն
	staff turnover—կադրերի հոսունություն
	synthesizer—համադրիչ
	tank turret rear—տանկի աշտարակի խելային մաս
	television system—հեռուստային համակարգ
	tennis racket—թենիսի թևճակ
	thermovision module—ջերմադիտման մոդուլ
	treaty of alliance—դաշնագիր
	turbosupercharger—տուրբոմոդիչ
	unification—1. միօրինակացում, 2. միանացում
	utilization—օգտահանում

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒԱԿ

Ð³ Ù³ Ŧ³ ñ. à³ Ù³Ý 3 á³ Ñáí ãóÙÁ. ¶. è. , 3 1 3 1 Ù³ÝC, 1. è. È³F³yÙ³ÝC, 2. à. Ü³Ù³ñ»ÅÙ³ÝC
éñµ³. ñÇáÝ»ñ. Ü. D. 3 0 1 3 è³ñÙ³Ý, 1. Ø. í Çñ³óáÙ³Ý
ÉáñÑ¹3 1 Ŧ³ áóÅÙáØ³Ý 3 Ý. É»ñ³Ý 1 »ùëí »ñÇ 1 »ñ³µÙ³Ý
2. D. D³ Ŧ³áÙ³ÝC, 2. 2. Ø³ñ» ÇñáéÙ³ÝC

ÊÙµ³. ñäôÃÙ³ Ý Ñ³ ëó»Ý °ñ..³ Ý, Î. àöÈÝ»óáô ÷áÔáó, 56/6, Ñ»é. 28-12-94, 23-29-71:

© ĐĐ àÜ. †3Ý3||3ÝC 3Ý|3Ý 3½. 3||CÝ ē3||Ü3|3ñ3†3Ý »ñC
ÇYerí Çí áoi Ç|SD3||3||3Ý µ3Ý3†| ē3||Ü3. Çí 3||3Ý N3Ý1»ë, 2008 Å.

ĐÃ ŶÓÝÍ »É Ê B³ ní 3 TÙC 11.02.2008: éi áñ3. ní ë Ê 3' à3. náðÅÍ3' Y 16.04.2008:
ÅáðOÅÅ úyé»ÅÍCY: O'-3' ã3 ÷ Å' 70×100 1/16:
í ñuei' A' 120 ëç+4 ëç Y»ñ1çkn:
å3'ÙS3'Ý3'Ý 3' à3. ní 3'Ý 9,75. Üùd: t'å3'ÙS3'Ý3'Ý A' 500:
t'3'ë3'Í »ë3'Í A' §Å3'Ùùe: "§'3'EÁC1'3": t'å3. náðÅÍðÅ' úyé»Å:
i'1'3'1'3'Ý 523: , 3'ëçä 69263: ISSN 1829-0108:
t'å3. ní »É ; §2Ù3'ñ3'ë: t' å3'ñ3'Ýåù:



**ԱՉՔԻ ՀԱՄԱՍ ԱՆՎՆԱՍ
ՕՊՏԻԿԱՊԱՐԱՄԵՏՐԱՅԻՆ ՏԵՂՈՐԾՈՒՄԱՅԻՆ ԼԱԶԵՐ**



Աչքի համար անվնաս օպտիկապարամետրային տեղորշումային լազերը նախատեսված է լազերային հեռաչափումների համար:

Այն կիրառվում է հեռաչափներում և լիդարային (օպտիկական լազերային տեղորշումային) համակարգերի համար նախատեսված էնիտերում:

Հատկություններն են՝

- աչքի համար անվնաս լազերային ճառագայրում,
- սակավ կորուստներ,
- մեծ հոսալիուրյուն,
- փոքր չափեր:

Հիմնական բնուրագրերն են՝

- մոլոր լազեր
- ճառագայրվող էներգիա, մΩ
- ալիքի երկարությունը, նկմ
- իմպուլսների կրկնման հաճախականությունը, Հց
- իմպուլսի տևողությունը, նվրկ
- եզրաչափը, մմ
- տարամիտությունը, միլիոն
- x5 աստղադիտակով, միլիոն
- հիվանդումը
- աշխատաքայլ ջերմաստիճանը, °C
- զանգվածը, կգ

Nd: YAG, Q-SW

մինչև 50

1,57

առավելագույնը մինչև 30

ոչ ավելի, քան 10

375x110x65

ոչ ավելի, քան 4

0,7

շրաօղային

+15 ÷ +35

4,5

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ